

Նվիրվում է Անանիա Շիրակացու ծննդյան
1400-ամյա հոբելյանին

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ

□ԼՈՒՍԱԿՆ□ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2012

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ Է ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՊՄՇ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Խմբագիր՝

Հրավարդ Հակոբյան

արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտության
վաստակավոր գործիչ

« Անանիա Շիրակացի » հոդվածների ժողովածուն նվիրված է VII դարի նշանավոր գիտնական ու մատենագիր Անանիա Շիրակացու գիտական ու գրական ժառանգության որոշ խնդիրներին: Ժողովածուն ունի նաև « Հավելված », որում հայերենով, անգլերենով ու ռուսերենով ներկայացված են Շիրակացու գրչին պատկանող բնագրերը: Ժողովածուն նախատեսված է Բանասիրական ֆակուլտետի ուսանողության, ավագ դպրոցի ուսուցիչների, նաև հայ միջնադարով զբաղվողների համար:

ՆԱԽԱԲԱՆ

Անանիա Շիրակացին յոթերորդ դարի հայ գիտության նշանավորագույն դեմքն է: Նա կոչվել է Համարող (մաթեմատիկոս), եղել է տիեզերագետ, տոմարագետ, գրել է առաջին Աշխարհացույցը, թողել է մատենագրական աշխատություններ՝ ճառեր, ինքնակենսագրություն: Շիրակացին կրթվել է բյուզանդական գիտական միջավայրում՝ մեծ հեղինակություն վայելող Տյուքիկոս Բյուզանդացու դպրոցում՝ դառնալով նրա լավագույն աշակերտը: Նա նվիրյալ հայրենասեր էր, և դա երևում է թե՛ նրա գործունեության և թե՛ գրվածքների մեջ: Շիրակացին շարունակողն է սբ. Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի ջանքերով ընթացք ստացած հայ լուսավորչական շարժման: Նա յուրացրել է ոչ միայն իրեն նախորդող հայ մտածողների գործերը, այլև անտիկ քաղաքակրթության նվաճումները՝ դառնալով խորապես քրիստոնեական մարդասիրության կրողը: Շիրակացին թողել է ինքնուրույն ու ինքնատիպ գիտական ժառանգություն. հայ իրականության մեջ առաջինն է ստեղծել թվաբանության դասագիրք՝ չորս գործողությամբ և դասագրքի բացատրական մասերում ցուցաբերել է մեծ մանկավարժին հատուկ հստակ մտածողություն և ուսուցանելու սեփական մեթոդներ: Համարողն ապրել և գործել է այն ժամանակահատվածում, երբ Հայաստանը չուներ պետականություն և հայ ժողովրդի համախմբման, ազգային ինքնությունը պահպանելու խնդիրն իր վրա էր վերցրել Գրիգոր Լուսավորչի հիմնած եկեղեցին, որն առանձին ճյուղ էր համընդհանուր քրիս-

տոնեական աշխարհում: Հայոց եկեղեցին իր ինքնուրույնությունը պահպանելու համար մերժել էր Քաղկեդոնի տիեզերական ժողովի որոշումները, և Շիրակացին իր աստվածաբանական հայացքներում հայ եկեղեցու շահերի հավատարիմ պաշտպանն էր: Այսօր, անշուշտ, մեզ չի հասել մեծ Համարողի գիտական ու մատենագրական ժառանգության ամբողջությունը, սակայն այն, ինչ հասել է, լիովին բավարար է նրան հանճար անվանելու, ինչպես նրան կոչում էին միջնադարի շատ մտածողներ: Տասներեքերորդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին նրան անվանում էր օայր բանիբուն և հանճարեղ, գիտող յոյժ ամենայն տոմարական արուեստից, զի կարգեսցեն անշարժ տոմար հայոց, որպէս այլոց ազգաց: Մեծ Համարողն ուներ գերագույն երազանք՝ տեսնել հայրենիքը գիտությամբ լուսավոր և մշտական առաջընթացի մեջ և որպէս բնածին մանկավարժ իր այդ պատգամը հղել է հետագա սերունդներին:

Այս տարի լրանում է միջնադարի մեծ գիտնականի ծննդյան 1400-ամյա հոբելյանը, և հողվածների այս ժողովածուն համեստ նվեր է փառահեղ հոբելյանին:

Ժողովածուի հողվածներում և օձավելվածի օրագրերում լայնորեն օգտագործված են միջնադարի հեղինակների ու Շիրակացու գործերի աշխարհաբար թարգմանությունները, որովհետև ժողովածուն առաջին հերթին ուղղված է բանասիրական ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողներին, որոնք դեռ չեն անցել գրաբարը:

Անանիա Շիրակացին իր կյանքով ու գրվածքներով հայ ժողովրդի հավերժական ուղեկիցն է և նրան դեպի լույսը տանող առաջնորդներից:

Աելիտա Դոլուխանյան

Предисловие

Анания Ширакаци самое выдающееся лицо армянской науки VII века. Он считался математиком, был космографом, знатоком календароведения, написал Географию (Ашхарацуйц), оставил литературные труды, речи, автобиографию. Ширакаци получил образование в византийской научной среде, был лучшим учеником уважаемого авторитета –Тюхика Византийского. Он был преданным патриотом, это заметно и в его деятельности, и в его трудах. Ширакаци продолжатель армянской просветительской деятельности, созданной св. Сааком Партевом и Месропом Маштоцом. Он усвоил не только труды предшественников, но и ценности античной цивилизации, стал носителем христианской гуманности. Ширакаци оставил независимое и самобытное научное наследие, в армянской действительности первым создал учебник арифметики с 4-мя действиями и в поясняющих частях учебника проявил особо четкое мышление и собственные методы обучения присущие мастеру. Математик жил и творил в тот промежуток времени, когда Армения не имела государственности и в сплочении армянского народа, сохранении национальной самобытности на себя взяла, основанная Григором Просветителем церковь, которая являлась отдельной ветвью всеобщего христианского мира. Армянская церковь, для сохранения своей самостоятельности отвергла решения Халкедонского собора. Ширакаци в своих теологических воззрениях был преданным защитником интересов армянской церкви. Безусловно до нас не дошло полное научное и литературное

наследие великого Математика, но то, что дошло до нас, вполне достаточно считать его гением, как считали его многие средневековые мыслители. Историк XIII века Киракос Гандзакеци его называл “являлся энергичным мужем, хорошо осведомленным, гениальным и прекрасно знающим искусство календаря, основал армянский неподвижный календарь, как у других народов”. У великого Математика была высочайшая мечта, увидеть родину просвещенной и в постоянном прогрессе и, как врожденный педагог это завещал грядущему поколению.

В этом году исполняется 1400-летие великого ученого средневековья, и этот сборник статей – скромный подарок к славному юбилею.

В статьях сборника и в подлинниках “Приложения” широко использованы новоармянские переводы средневековых авторов и трудов Ширакаци, потому что сборник предназначен для студентов первого курса филологического факультета, которые пока не изучили грабар (древнеармянский).

Ананя Ширакаци своими произведениями и жизнью является вечным сопровождающим армянского народа и одним из предводителей его просвещения.

Аэлига Долуханян

Preface

Anania Shirakatsi is the most outstanding representative of Armenian science from the 7th century A.D. He was a mathematician, cosmologist, expert in setting a calendar, geographer, and left a literary legacy, including speeches, and an autobiography. Shirakatsi was educated in the Byzantine environment, he attended the highly regarded school of Tyukikos Byzantine, becoming his best student.

Anania Shirakatsi was a dedicated patriot, and his patriotism is reflected both in his activities and writings. Shirakatsi continued the Armenian Enlightenment Movement, which was started with the efforts of Sahak Partev and Mesrob Mashtots, both of whom were elevated to sainthood. In his work, Shirakatsi deeply reflected not only the work of his Armenian intellectual predecessors, but also the achievements of ancient civilizations, becoming a carrier of Christian humanism.

Shirakatsi has left a scientific legacy that is unique. In Armenia, he was the creator of the first mathematics textbook on basic functions. His explanatory notes in this textbook stand out by Shirakatsi's clear pedagogical thinking and his personal teaching methodology. Shirakatsi lived and created at a time when Armenia had lost its statehood, and the Armenian Church founded by Gregory the Illuminator, being a separate branch of the Christian Church, took upon itself the mission of preserving Armenian national independence. The Armenian Church, in order to preserve its independence, had rejected the decisions of the Council of Chalcedon, and Shirakatsi devoutly supported the position of the Armenian Church in his theological views reflected in his writings.

Clearly, the entirety of the great mathematician's scientific and literary legacy has not been preserved, however, all that has reached us provides a solid foundation for considering him a genius, as he was referred to by many Medieval thinkers. Kirakos Gandzaketsi, a 13th

century AD historian, said of Shirakatsi that "He was a man full of energy and a genius, who fully mastered the art of setting a calendar, and created for Armenians the Julian calendar that was used by other nations."

Shirakatsi's greatest dream was to see Armenia enlightened by science and knowledge, and in a state of ongoing progress, and as a gifted pedagogue and teacher, he directed that commandment to future generations. This year marks the 1400th anniversary of this great thinker's birth, and this book is a humble gift to celebrate his legacy. This book and its appendices broadly use the contemporary translations of both Shirakatsi and other medieval authors. This book is intended for first-year students of philological departments, considering the fact that the students have not yet studied Grabar, which is the Ancient Armenian. Anania Shirakatsi, through the legacy of his dedicated life and writings, is the constant companion of the Armenian people, leading them to continued enlightenment.

Professor Aelita Dolukhanyan,
Corresponding Member of the Armenian
National Academy of Sciences



ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԻՍԱՆՅԱՆ
Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Յոթերորդ դարի հայ մեծ գիտնական Անանիա Շիրակացին, որը հայ միջնադարում հռչակված էր որպես Համարող (մաթեմատիկոս), տոմարագետ, տիեզերագետ ու մատենագիր, մեծ ծառայություն է մատուցել հայագիտությանը՝ ի թիվս այլ գործերի հետագա սերունդներին թողնելով ճանաչողական ու պատմական մեծ արժեք ունեցող իր ինքնակենսագրությունը՝ «Անանիայի Շիրակունույ երիցս երանեալ վարդապետի վասն որպիսութեան կենաց իւրոց»¹ խորագրով: Հասկանալի է, որ այս վերնագիրը ձևակերպել են հետագայի գրիչները, որովհետև միջնադարում, առավել ևս VII դարում, ընդունված չէր սեփական անձի մասին գրել «երիցս երանեալ վարդապետ»: Այս որակումը պերճախոս վկայում է հայ միջնադարում Անանիա Շիրակացու հեղինակության մասին, որովհետև ոչ թե միայն «երանելի»², ինչպես Կորյունն էր

¹ Ա.Գ.Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Ուսումնասիրություն, Երևան, 1944, էջ 206:

² Կորյուն, Վարդ Մաշտոցի, Աշխարհաբար թարգմանությունը ներածական ուսումնասիրությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով, Մ.Աբեղյանի, Երևան, 1962, էջ 95:

ասում Մեսրոպ Մաշտոցի հոր մասին, այլ «երիցս երանեալ»: Հինգերորդ դարում մեսրոպատառ գրքերի գյուտից հետո առաջին վարքը շարադրել է Կորյուն վարդապետը՝ իր գրքի երկրորդ առաջաբանում տալով ուշագրավ բացատրություն. «Բայց արդ՝ նախ մի առաջաբան անենք, թե թույլատրելի³ է արդյոք կատարյալ մարդկանց վարքի մասին գրել: Ոչ թե մեր կողմից, մեր կարծիքով վիճաբանելով կճարտարախոսենք, այլ տրված օրինակներով պարզ կերպով կապացուցենք հակառակը»³:

Կորյուն վարդապետի առաջաբանը հիմնավորում է իրական երևելի մարդկանց կենսագրությունը հաջորդ սերունդներին ավանդելու անհրաժեշտությունը: Բանասիրության մեջ կարծիք կա, թե Անանիա Շիրակացին իր ինքնակենսագրությունը գրելիս հետևել է պատմահայր Մովսես Խորենացուն. «Շնորհիվ այն հանգամանքի, որ նա հետևելով, անշուշտ, Մ.Խորենացուն, թողել է մի փոքր ինքնակենսագրություն իր ուսանելու մասին, մենք ծանոթանում ենք նրա կյանքի առաջին շրջանին»⁴:

Անանիա Շիրակացին հայտնի անուն է ողջ միջնադարում: Ինչպես երևում է Գրիգոր Մագիստրոսի Պետրոս Գետադարձին ուղղված թղթից, Շիրակացին հայ մատենագրության մեջ համարվել է «մեծ Քննիկոնն»: Թղթի խորագիրն է «Առ տեր Պետրոս ի ժամանակի խուժան յառնելոյ ի քաղաքին ի վերայ նորա. բան մխիթարական և հարցունմն Անանիայի գրոց Շիրակայնոյն, զոր մեծ Քննիկոնն անուանեն»⁵:

³ Նույն տեղում, էջ 88:

⁴ Մ.Աբեղյան, Երկեր, Գ, Երևան, 1968, էջ 413-414:

⁵ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, բնագիրն առաջաբանով և ծանոթագրություններով առաջին անգամ ի լույս ընծայեց Կ.Կոստանյանց, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 4:

Սանուկ Աբեղյանն իրավացիորեն Անանիայի կյանքի առաջին մասն է տեսնում նրա ինքնակենսագրության մեջ, որովհետև նրանում չի հիշատակվում Անաստաս կաթողիկոսի հրահանգով հայոց տոմարի անշարժ դարձնելու հանգամանքը, որ նշում են հետագայի բազմաթիվ աղբյուրներ. «Իսկ Անաստաս խորհեալ Հայաստանեայցս կարգել տոմար անշարժ ըստ այլոց ազգաց և հրամայէ Անանիայի Շիրակացոյ կարգել զքրօնիկոնն հրաշագան, յորում տոմարս մեր կարգեաց անշարժ: Եւ Անաստասայ խորհեալ ժողովով և եպիսկոպոսօք հաստատել զքրոնիկոնն և վախճանի կացեալ յաթոռն ամս Ջ»⁶: Նույնը վկայում է Հովհաննես Դրասխանակերտցին՝ շեշտելով, թե շարժական տոմարը պիտի դարձնել անշարժ, որ հնարավոր լինի հարմարեցնել մյուս ազգերի տոմարին, որոնց մոտ տարեկան տոներն անշարժ էին. «Իսկ Անաստասայ հայրապետի հոգացեալ վասն հայկականս տոմարի, զի թերեւս անշարժ զնա ըստ այլոց ազգաց մարթասցէ յօրինել, զի միշտ անշարժք լինիցին տօնք տարեկանաց, վասն որոյ և առ ինքն Անանիա Անեցի կոչեալ, որ բանիբուն այնմ արուեստի էր հմուտ, հրամայէ նմա ստեղծագործել զխնդրելին իւր: Իսկ նորա ջան ի վերայ եղեալ և ըստ բոլոր ազգաց պայմանի անշուշտ յօրինեալ զկարգ հայկականս տոմարի, զի բարեծեւագունից ոմանց և զմերս կշռադատեալ՝ մի կարօտասցուք գալ ի զուգաւորութիւն Հռովմայեցոց»⁷: Իսկ Սամվել Անեցին կարևորելով Անանիա Շիրակացու կազմած անշարժ տոմարը՝ ցավով նշում է, թե Անաստաս կաթողիկոսի

⁶ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Ս.Պետերբուրգ, 1885, էջ 99:

⁷ Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն, Երուսաղէմ, 1867, էջ 117:

մահվանից հետո⁸ անփութորեն անտեսեցին Անանիայի անշարժ տոմարը և շարունակեցին առաջնորդվել հին՝ շարժական տոմարով. «Հայրապետն Անանիա յԱնէից գեղջէ՛ անշարժ ըստ այլոց ազգաց դնել տօմար և մերոյ ազգիս, զոր արարեալ մեծաւ ջանիւ, և մինչև կամէին ժողովով հաստատել զնոյն՝ վախճանի սուրբն Անաստաս՝ անփոյթ եղեալ իրն զկնի եկելոցն՝ այլ առաջին կարգաւն վարէին»⁹:

Անանիա Շիրակացու կենսագրությունը պահպանվել է բազում ձեռագիր օրինակներով աշխարհի տարբեր գրադարաններում: Նրա մի օրինակը պահպանվում է Լոնդոնի Բրիտանական թանգարանի հայկական ձեռագրերի մեջ 136 թվանշի տակ՝ „Astronomy, Astrology, Medicine and Magic” խորագրի ներքո («Աստղագիտություն, աստղագուլշակություն, բժշկություն և հնայականք»): Անվանի հայագետ Ֆրեդերիկ Կոնիբերը Բրիտանական թանգարանի հայկական ձեռագրացուցակի թիվ 136 գրչագրի 210 թերթից բերում է Անանիա Շիրակացու ինքնակենսագրությունից հետևյալ հատվածը. «Անանիայի Շիրակվանցոյ երիցս երանեալ վարդապետին վասն որպիսութեան կենաց իւրոց:

Ես Անանիա Շիրակացի ի յԱնանիա գեղջէն, որ բովանդակեցի զդարութիւն մերոյ ազգիս հայաստանեաց և հնուտ եղեալ

⁸ Անաստաս Ա Ակոռեցի կաթողիկոսը վախճանվել է 667-ին: Նա հսկել է Զվարթնոցի Ս.Գրիգոր կաթողիկեի շինարարությունը (643-652): Կաթողիկոսության տարիներին (661-667) իր ծննդավայր Ակոռիում կառուցել է եկեղեցի՝ կից հյուրանոց և աղքատանոց: Նրա հանձնարարությամբ Անանիա Շիրակացին հայոց շարժական տոմարը դարձրել է անշարժ, սակայն մինչև եպիսկոպոսական ժողովը այն կվավերացներ, կաթողիկոսը վախճանվել է (տե՛ս Ամենայն հայոց կաթողիկոսներ, Խմբագրությամբ Պետրոս Դովհաննիսյանի, Երևան, 2001, էջ 64):

⁹ Սամվել Անեցի, Հաւաքումն ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 84:

աստուածաշունչ գրոց, օրըստօրէ լուսաւորէի զաչս մտաց իմոց ըստ բանի սաղմոս երգողին... և դարձեալ երանութեանն կամեցայ ժամանել, զնալ փափագեցի իմաստասիրութեան յոյժ կարօտեալ արուեստի համարողութեան խորհեցայ եթէ ոչ ինչ յարմարի առանց թըւոց կարծելով մայր ամենայն իմաստից և վասնզի ոչ գտաներ յաշխարհիս հայոց մարդ որ որ գիտէր իմաստութիւն, այլև ոչ բան կամ գիրք արուեստից, ուրեք գտանէին:

Ապա և ի Յունացն դիմիցի յաշխարհ և հասեալ եմ ի Թեոդուօլիս...»¹⁰: Մինչև Բրիտանական թանգարանի ձեռագրացուցակում Անանիա Շիրակացու կենսագրությունից գրաբարով և անգլերենով մի փոքր հատված տպագրելը, Ֆ.Կոնիբերը 1897-ին Մյունխենում հրատարակվող „Byzantinische Zeitschrift“ հանդեսում տպագրում է հայ մեծ Համարողի ինքնակենսագրության իր կողմից կատարած անգլերեն թարգմանությունը¹¹: Ավելի վաղ Անանիա Շիրակացու կենսագրությունը հրատարակվել է նախ հայերեն և ապա ռուսերեն՝ առանց խորագրի: Քերովբե Պատկանյանը բացատրում է, թե ինչու է հրատարակում Անանիայի ինքնակենսագրությունը. „Для характеристики личности и эпохи Анании, приведу краткую его автобиографию, не лишённую некоторого исторического интереса“¹². Ք.Պատկանյանի հրատարակած ռուսերեն բնագիրը հայ Համարողի համառոտ կենսագրությունն է: Ինչպես վկայում է Ա. Շիրակացու մատենագրության մեծ հետազոտող

¹⁰ F.Conybeare, A Catalogue of the Armenian manuscripts in the British museum, London, 1913, p. 327.

¹¹ Ananias of Shirak (A.D. 600-650c.), I His Autobiography (տե՛ս „Byzantinische Zeitschrift, VI, 1897, s. 572-574).

¹² К.П.Патканов, Армянская география VII века по р. X., СПб, 1877, с. XVIII.

Ա.Գ.Աբրահամյանը, յոթերորդ դարի հայ գիտնականի ինքնակենսագրության համառոտ խմբագրությունը կատարվել է ավելի ուշ ժամանակահատվածում, դրա համար էլ Համարողի ինքնակենսագրության քննական բնագիրը կազմելիս ինքը հենվել է միայն Սաշտոցի անվան Սատենադարանի № 699 գրչագրի և Զ.Տաշյանի Վիեննայի Մխիթարյան միաբանության ձեռագրացուցակում եղած օրինակի վրա (էջ 174-176)¹³:

Ա.Շիրակացու ինքնակենսագրությունը թարգմանվել է նաև գերմաներեն¹⁴ ու ֆրանսերեն: Ֆրանսերեն թարգմանությունը կատարել է Ա.Բերբերյանը՝ 1964-ին հրատարակելով „Journal Asiatique” հանդեսում¹⁵:

Հայ Համարողն իր ինքնակենսագրության մեջ հղումներ ունի Զին ու Նոր կտակարաններից, առաքյալների թղթերից: Այս իրողությունը վկայում է նրա խոր կապվածությունը քրիստոնեական կրոնին ու հայ եկեղեցուն: Անվանի արևելագետ Ն.Պիգուլևսկայան, խոսելով Անանիա Շիրակացու մատենագրության մասին, նշում է վերջինիս շեշտված քրիստոնեական բնույթը, միաժամանակ յոթերորդ դարի հայ գիտնականի հայացքներում տեսնում հայկական ավանդույթի առկայությունը, որը նա քաղել է նախորդ շրջանի հայ մատենագիրներից¹⁶: Չբացառելով Անանիա Շիրակացու տեղյակ լինելը անտիկ մտածողների գրվածքներին՝ Պիգուլևսկայան նշում է հայ գիտնականի երկերի վրա աստվածաշնչային բնագրերի խոր ազդեցությունը, որը

¹³ Ա.Գ.Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 206:

¹⁴ Տե՛ս Զ.Ս.Անասյան, Հայկական մատենագիտություն, Ե-ԺԸ դդ, հ. Ա, Երևան, 1959, էջ 735:

¹⁵ А.Г.Абрамян, Г.Б.Петросян, Анания Ширакаци, Ереван, с. 171.

¹⁶ Н.Пигулевская, Византия на путях в Индию, М.-Л, 1951, с. 157.

լիովին բնական էր նրա ապրած դարի քրիստոնյա մտածողի համար. „Анания Ширакаци (VII в.) не мог избежать круга тех идей, которыми жили несториане Нисибийской академии и Козьма Индикоплов. На армянской почве развились идеи, которые были близки средним слоям населения, в большой степени христианизованным, мало связанным с античным образованием и ученым наследием. Для представителей этого течения согласование библейских текстов с теорией мироздания было обязательным и всякая другая точка зрения считалась неприемлемой¹⁷”.

Քանի որ Շիրակացու ողջ կյանքը եղել է նվիրում գիտությանը, ապա նա Հին կտակարանի գրքերից քաղվածքներ է բերում, որոնցով հիմնավորում է իր ասածները: Սողոմոնի «Առակաց» գրքից բերում է հետևյալ պատգամները՝ «Իմաստությունն ստացիր, խոհեմությունն ստացիր, մի՛ մոռացիր ու բերանիս խոսքերից մի խոտորի, այն մի թողիր, այն քեզ պիտի պահի, սիրիք այն, ու այն քեզ պիտի պաշտպանի»¹⁸: Ովսեի իմաստությունից հիշում է հետևյալ պատգամը. «Իմ ժողովուրդը գիտություն չունենալու համար բնաջինջ եղավ, որովհետև դու գիտությունը մերժեցիր, ես էլ քեզ պիտի մերժեմ...»¹⁹:

Սատթեսի Ավետարանից Շիրակացին մեջբերում է հետևյալ հատվածը. «Խնդրեցե՛ք և ձեզ կտրվի, փնտրեցե՛ք և կգտնեք,

¹⁷ Նույն տեղում, էջ 160:

¹⁸ «Առակաց», 4, 5-6:

¹⁹ Ովսեայ, 4, 6: Ովսեն առաջին տասներկու փոքր մարգարեներից է: Ովսեն իր գրքում խիստ քննադատում է Իսրայելի ժողովրդի կռապաշտությունը: Այս մարգարեն զվարթորեն հավատում է Փրկչի զալստյանը, և հենց դրա համար էլ Նոր կտակարանում բավականին հղումներ կան Ովսեի մարգարեական մտքերին (տես «Բառարան սուրբ գրոց», Կոստանդնուպոլիս, 1881, էջ 433):

բախեցե՞ք և կբացվի ձեր առաջ, որովհետև ով որ ուզի, ստանում է, ով որ փնտրի, գտնում է, և ով որ բախի, նրա առաջ կբացվի»²⁰:

Առաքյալների թղթերից Շիրակացին դնում է հետևյալ ուղե-
նիշային իմաստախոսությունը. «Խրատ վերցրե՞ք և ոչ արծաթ,
սիրեցե՞ք ավելի գիտություն, քան ընտիր ոսկի»²¹:

Մատթեոսի Ավետարանից Համարողը օգտագործել է
«Քանքարների առակը», որը պատմում է մի մարդու իր
ծառաներին տված ունեցվածքի մասին, երբ նա գնում էր հեռու
երկիր: Ծառաներից մեկին տալիս է հինգ քանքար, երկրորդին՝
երկու և երրորդին՝ մեկ: Ով հինգ քանքար²² էր ստացել, իսկույն
այդ դրամը գործի մեջ դրեց և շահեց ևս հինգ քանքար, ով երկու
քանքար էր ստացել, այդ երկուսը գործի դրեց, նա էլ շահեց ևս
երկու քանքար, իսկ ով մեկն էր ստացել, տիրոջ տված քանքարը
հողի մեջ թաքցրեց: Երբ տերը վերադառնում է, շատ գոհ է մնում
առաջին երկու ծառաներից, որոնք իր տվածը ոչ միայն պահել էին,
այլև ավելացրել, իսկ երրորդ ծառային խիստ քննադատում է՝
ասելով. «Չար և ծույլ ծառա, գիտեիր, որ հնձում եմ, ուր չեմ
սերմանել և հավաքում այնտեղից, ուր չեմ սփռել. դու պետք է իմ
այդ դրամը սեղանավորի մոտ դնեիր, և ես գալով, տոկոսով
միասին պահանջեի այն, ինչ որ իմն է»²³:

Շիրակացու վերջին մեջբերումը Պողոս Առաքյալի հռոմեա-
ցիներին ուղղված թղթից է՝ «Եղբայրական սեր» բաժնից, ուր

²⁰ Մատթեոս, 5, 7-9:

²¹ Առաք., 8, 10:

²² Քանքար – 1) Ծանրության չափ, հավասար է 45 կիլոգրամ 333
գրամի ըստ Ա.Շիրակացու: ...Մի քանքարի քաշով արծաթ՝ իբրև դրամ,
հավասար է 10.000 ոսկի դահեկանի (տե՛ս Ստ.Մալխասյանց, Հայերեն
բացատրական բառարան, Երևան, 2010, հ. 4, Գ-Ֆ, էջ 547):

²³ Մատթեոս, ԻԵ, 26-28:

Առաքյալը հավատացյալին խորհուրդ է տալիս բարությանը հաղթել չարին. «...խորհեցեք բարին բոլոր մարդկանց առաջ, ինչ չափով հնարավոր է ձեզ համար, բոլոր մարդկանց հետ խաղաղություն պահեցեք, ինքներդ վրեժխնդիր մի եղեք, սիրելիներ՝, այլ տեղի տվեք բարկությանը, որովհետև գրված է. «Իմն է վրեժխնդրությունը, և ես կհատուցեմ», - ասում է Տերը»²⁴: Ավետարանից ու Յին կտակարանից բերված մեջբերումներում պարզորոշ գծագրվում է մեծ Համարողի քրիստոնեական մարդասիրությունը, միաժամանակ նրա անսահման մղումը, անձանձիր եռանդն ու հետաքրքրությունը դեպի գիտությունը:

Թեպետ Շիրակացին շատ մանրամասներ չի հայտնում իր կյանքի վերաբերյալ, սակայն տեղեկացնում է այն, ինչ համարում է առաջնահերթ: Առաջին հերթին նշում է իր ծննդավայրը և Հայաստանում ստացած գիտելիքների շրջանակը. «Ես՝ Անանիա Շիրակացի, Անանիա գյուղից, որ (սովորելով) յուրացրի մեր՝ Հայոց ազգի դպրությունը և հմտացա Աստվածաշունչ գրքերին, օրըստօրե լուսավորում էի մտքիս աչքերը՝ Սաղմոսերգուհի խոսքին համապատասխան»²⁵:

Անանիան չի բավարարվել իր ձեռք բերած գիտելիքներով, առավել ևս նրան խիստ հետաքրքրել է մաթեմատիկան, որը նրա կարծիքով գիտության համար կարևորագույնն է, ու Հայաստանում էլ այդ գիտաճյուղի վերաբերյալ ոչ գրքեր է գտնում, ոչ էլ ուսուցիչ: Նա մեկնում է Հունաց երկիրը. «Հույժ սիրելով համարողության արվեստը, խորհեցի, թե առանց թվերի ոչինչ չի հիմնավորվում՝ մայր համարեցի այն բոլոր ուսմանց: Եվ քանի որ Հայոց մեր աշխարհում չկար այնպիսի մեկը, որ տիրապետեր իմաստությանը,

²⁴ Հռոմ., ԺԲ, 17-20:

²⁵ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, էջ 25:

և ոչ էլ նույնիսկ որևէ տեղ գիտական գրքեր էին ճարվում, ուստի մեկնեցի Յուճազ երկիրը»²⁶: Թե ինչու է Անանիա Շիրակացին մեկնել Յուճազ երկիրը, հարցի պատասխանը սպառնիչ տրվում է Նիկողայոս Ադոնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» գրքում: Հայագետ-բյուզանդագետը բացատրում է, որ յոթերորդ դարում բյուզանդական կայսրության կրթական ու մշակութային մակարդակը իր ժամանակի առումով առաջնային էր, և կայսրության հունի մեջ ներգրավված արևելյան երկրները իրենց հերթին կրում էին կայսրության կրթական հզոր ազդեցությունը»²⁷: Այս իրողությունը ծանոթ էր Անանիա Շիրակացուն, և կրթության մեջ կատարելագործվելու խնդրում նա հետևում է ոսկեդարի այն ուսանողներին, ովքեր Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի աջակցությամբ ու հրահանգով նույնպես մեկնեցին բյուզանդական կայսրության գլխավոր կրթական կենտրոններն ու գրադարանները՝ լեզուներ սովորելու ու Հայաստանի կրթությունն ու գիտությունը զարգացնելու: Այդ մասին բացառիկ փաստեր է հաղորդում Մովսես Խորենացին իր «Հայոց պատմության» մեջ՝ թվարկելով հինգերորդ դարի բազում նշանավոր կրթական կենտրոններ, ուր բախտ է ունեցել այցելելու և մի մասում սովորելու կամ դիվաններում պարապելու. «Սրա նման մենք էլ մեր հոգևոր հայրերի իմանալի ճառագայթներից մշտապես ցլանալով, հարավային կողմերը շրջագայելով հասանք եղեսացոց քաղաքը, թեթևակի նավեցինք դիվանի խորքերի վրայով, այնտեղից անցանք սուրբ տեղերին երկրպագելու և կարճ ժամանակ պաղեստինցոց ուսմամբ պարապելու: Այսպիսի

²⁶ Նույն տեղում:

²⁷ Ն.Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 6:

շրջագայությամբ մտանք Եգիպտոս, այն հռչակավոր աշխարհը...: Այստեղ հարմարավոր դիրքում շինված է մեծ Աղեքսանդրիա քաղաքը ծովի մեջ... , այլ սովորում են պես-պես գիտություններ նոր Պղատոնից՝ իմ ուսուցչից, որին անարժան աշակերտ չհանդիսացա և ոչ էլ արվեստ ձեռք բերի անկատար կերպով, թերի ուսումով: Կամենալով նավով էլլադա գնալ, սաստիկ քամիներով մղվեցինք ընկանք Իտալիա, սուրբ Պետրոսի և Պողոսի հանգստարանները ողջունեցինք և երկար չմնացինք Յռոմեյացիների քաղաքում. էլլադայով անցանք Ատտիկե, քիչ ժամանակ մնացինք Աթենքում: Չմեռն անցնելուց հետո ճանապարհ ընկանք Բյուզանդիոն՝ մեր հայրենիքին փափագելով»²⁸: Այս ծավալուն մեջբերումը պատմահոր գլուխգործոցի որոշակի հատվածից մասնագետներին հուշել է, որ իրոք, Ամանիա Շիրակացին ծանոթ է եղել Խորենացու «Յայոց պատմությանը», ավելին, պատմահայրը նրա համար եղել է օրինակ, և նա էլ է կամեցել համաքայլ ընթանալ աշխարհի քաղաքակրթությանն ու գիտությանը: Սա նշանակում է, որ Մովսես Խորենացին հասել էր իր ազգային կյանքն առաջ մղելու գերագույն նպատակին, և ինչպես Նիկողայոս Ադոնցն է եզրահանգել. «Մովսես Խորենացու առաջին լիակատար և քննական «Յայոց պատմությունը» իսկապես մի հոյակապ հուշարձան է, որ շատ կողմերով իր հավասարը չունի հայ դպրության մեջ՝ նշանավոր նախ և առաջ ազգային այն խոր գաղափարայնությամբ, որը ստեղծեց նա, և որով շատ դարերի ընթացքում դաստիարակվեցին հետագա սերունդները:

Յայ կյանքի վրա բյուզանդական կրթության ազդեցությունը և ընդհակառակը՝ հայոց տեղաշարժը դեպի կայսրություն, թեև

²⁸ Մովսես Խորենացի, Յայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և մեկնաբանությունները Ստ.Մալխասյանցի, Երևան, 1981, էջ 429-431:

տարբեր կողմերից, տանում էին դեպի միևնույն նպատակը՝ դեպի մշակութային հավասարեցում»²⁹:

Իր որոնումների առաջին հանգրվանը Շիրակացին գտնում է Չորրորդ Չայքում՝ մաթեմատիկա ուսանելով Քրիստոսատուր անունով մի անձնավորության մոտ: Վեց ամիս տևողությամբ ուսումը չի տալիս ցանկալի արդյունքը, ու նա վերստին շտապում է գնալ Կոստանդնուպոլիս: Շիրակացու ճամփորդության այս հատվածը նրան հասցնում է իր նպատակին. նա իր ուսուցչին գտնում է ոչ թե Կոստանդնուպոլսում, այլ Տրապիզոնում, որը տարանցիկ առևտրի հանգույց էր և 591-ից դարձել էր նահանգի վարչական կենտրոնը³⁰: Ինչպես նրան խորհուրդ էին տվել Կոստանդնուպոլսից եկող ծանոթները, Շիրակացին գտնում է իր ուսուցչին՝ Տյուքիկոս Բյուզանդացուն, որը նախկինում զինվորական էր եղել, ութ տարի որպես զինվոր ծառայել էր Չայաստանում Տիբերիանոս³¹ կայսեր զորավար Յովհանի մոտ և որպես աստվածատուր ընդունակությունների տեր անձնավորություն, յուրացրել էր նաև հայերենը: Չայ մաթեմատիկական դպրոցի հիմնադիրն այնքան հիացած է ուսուցչով և երախտապարտ է նրան, որ ինքնակենսագրության մեջ բավականին մեծ հատված հատկացնում է վերջինիս կյանքի դեպքերին: Տյուքիկոսը պոնտա-

²⁹ Ն.Ադոնց, Չայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում, էջ 237:

³⁰ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, էջ 332:

³¹ Տիբերիանոս Երկրորդ Կոստանդինը որպես բյուզանդական կայսր գահակալել է 578-582-ին: Նրան գահ է բարձրացրել Յուստինիանոս Երկրորդ կայսրը՝ իր կնոջ՝ կայսրուհի Սոֆիի դրդմամբ: Սոֆին բուռն ձևով խառնվում էր բյուզանդական կայսրության արտաքին քաղաքականությանը: Տիբերիանոս Երկրորդը հաջող հաղթանակներ է տարել պարսիկների դեմ, սակայն նրա առաջխաղացումը կասեցվել է Մոնղոլիայի տարածքից եկած վաչկատուն ցեղի՝ ավարների ու նաև սլավոնների կողմից (տե՛ս „Le petit Robert-2, Paris, 1988, p. 956, 1774):

ցիների երկրից էր, Տրապիզոն քաղաքից, և, ինչպես նշում է Շիրակացին, նա ոչ միայն սովորել էր հայերենը, այլև ուսումնասիրել էր հայոց դպրությունը: Անտիոքի մոտ տեղի ունեցած հույն-պարսկական ճակատամարտի ժամանակ Տյուբիկոսը վիրավորվում է, մի կերպ փախչում է Անտիոք, իսկ իր ունեցած ողջ գույքը ավար են վերցնում: Նա երկար հիվանդ պառկում է և մեծ կակիժով հիշում իր ունեցվածքի կորուստը, միաժամանակ Աստծուց խնդրում վերքերի բուժում՝ ուխտելով, թե ապաքինվելու դեպքում այլևս ունեցվածք չի կուտակելու, այլ միայն հետամուտ է լինելու գիտությանն ու հոգևորին: Աստված կատարում է նրա խնդրանքը, նա առողջանում է և մեկնում է սուրբ քաղաք Երուսաղեմ, որտեղ մնում է մեկ ամիս, ապա տեղափոխվում է Ալեքսանդրիա, ուր ուսանում է երեք տարի, հետո մեկնում է Հռոմ և այնտեղ մնում մեկ տարի, ապա գալիս է Կոստանդնուպոլիս: Այստեղ գտնում է մի նշանավոր անձնավորության, որ դասավանդում էր քաղաքի իմաստասերներին՝ նրա մոտ ուսանելով երկար ժամանակ և ձեռք բերելով հարուստ գիտելիքներ վերադառնում է իր ծննդավայրը: Հետաքրքիր է, որ Տյուբիկոսին առաջարկում են մնալ Կոստանդնուպոլսում, սակայն նա հրաժարվում է. այս խնդրանքը կրկնվում է տարիներ հետո, երբ մեռնում է նրա նշանավոր ուսուցիչը, որի աշակերտների մեջ ինքը անգերազանցելի էր. «Աշակերտների մեջ չգտնելով նրան հավասար մեկին՝ նրան հաջորդելու, խնդրանքով դիմում են ցանկալի Տյուբիկոսին, որ գա զբաղեցնի նրա տեղը: Միաժամանակ ստանում է նաև թագավորի հրամանը: Սակայն հանձն չի առնում...»³²:

³² Անանիա Շիրակացի, Մատենագրություն, էջ 28:

Շիրակացին մեզ է ավանդել իր և Տյուքիկոսի փոխհարաբերությունների պատկերը, որն ուսումնաստենչ աշակերտի և Աստծուց ուսուցիչ կոչումն ունեցողի փոխհարաբերությունն է: Տյուքիկոսը շատ աշակերտներ ուներ, որոնց մեծ մասը գալիս էր Կոստանդնուպոլսի արքունիքից, այսինքն՝ ազնվական դասի ծագում ուներ: Այդ աշակերտների բազմության մեջ Տյուքիկոսն առանձնացնում է Անանիա Շիրակացուն, հասկանում նրա օժտվածության եզակիությունը, նրա առաջ բացում իր հարուստ գրադարանը, որն իր ժամանակի համար անհրաժեշտ բոլոր գրքերն ուներ. «Ամեն տեսակի գրքեր կային նրա մոտ՝ հայտնի և գաղտնի, արտաքին (հեթանոսական), գիտական և պատմական գրքեր, բժշկարաններ, ժամանակագրություններ. ի՞նչ թվարկեմ մեկ առ մեկ, քանի որ չկար այնպիսի գիրք, որ նրա մոտ չգտնվեր»³³: Շիրակացին շեշտում է Տյուքիկոսի մեկ այլ վարպետությունը. վերջինս կարող էր հունարեն գիրքը համաժամանակյա թարգմանությամբ կարդալ միանգամից հայերեն, ու լսողին այնպես էր թվում, թե գիրքը գրված է հայերենով:

Անանիա Շիրակացու ինքնակենսագրության մեջ բացառվում է որևէ ինքնագովեստ. հեղինակը համեստորեն արձանագրում է միայն փաստը. «...Ես լիովին յուրացրի համարողական գիտությունը, փոքր-ինչ էլ ծանոթացա այլ գիտություններին և հմտացա բազմաթիվ այնպիսի գրքերի, որոնք մեր լեզվով դեռ չէին թարգմանված»³⁴: Համարողի ինքնակենսագրությունը փաստում է Հայաստանում թարգմանական գրականության կարևորումը: Այս բնագրում առկա է նաև այն իրողությունը, որ մինչև յոթերորդ դարը մաթեմատիկական գիտությունները Հայաստանում չեն ունեցել

³³ Նույն տեղում, էջ 27:

³⁴ Նույն տեղում:

այն զարգացումը, որն առկա էր բյուզանդական կայսրության կրթական կենտրոններում, ու այդ թերին լրացնում է Անանիա Շիրակացին, որը հայրենիք վերադառնալուց հետո անմիջապես բացում է իր դպրոցը և հավաքում աշակերտներ՝ իր գիտելիքներն ուրիշներին փոխանցելու ջերմ փափագով: Համարողի ինքնակենսագրության ավարտը հիշեցնում է Քերթոզահոր հռչակավոր «Ողբը»: Երբ գիտելիքների մեծ պաշարով Շիրակացին գալիս է հայրենիք, շատերն են շտապում նրան աշակերտելու, սակայն փոքր-ինչ խելամտած, թողնում են ու հեռանում, ցավալին այն է, որ նրանք դեռ փորձում են դառնալ ուսուցիչներ. «Եվ ինձնից շատ շուտ առանձնանալով, սկսեցին ուսուցանել այնպիսի բաներ, որ չգիտեին և իրենց ներկայացնել իբրև ուսուցիչներ, որոնց հասու չէին: Կեղծավորներ և սնափառներ. ուզում են գիտնականի կեցվածք ընդունել և մարդկանց կողմից ուսուցչապետներ կոչվել»³⁵: Պարզվում է, որ ապերախտ աշակերտները տգիտությամբ Շիրակացու մասին պարսավանքի խոսքեր են հերյուրել: Հետաքրքիր է մեծ գիտնականի լայնսիրտ լինելու փաստը. նա չի չարացել տգետների դեմ, այլ պատրաստ է ուսուցանել բոլոր նրանց, ովքեր ցանկանում են սովորել: Ինքնակենսագրությունը իր վերջնամասում հնչում է որպես հայ ժողովրդի ապագայի ուսուցիչներին ուղղված կտակ - պատգամ՝ սովորեցնել, այն էլ անձանձիր բոլոր նրանց, ովքեր գիտություն և իմաստություն ուսանելու ցանկություն կունենան³⁶:

Շիրակացու վերևում նշված բողոք - խոսքերը վերստին հիշեցնում են Մովսես Խորենացուն, որն իր ապաշնորհ աշակերտների մասին գրում է. «Աշակերտները՝ սովորելու մեջ

³⁵ Նույն տեղում, էջ 28:

³⁶ Նույն տեղում, էջ 29:

ծույլ, սովորեցնելու մեջ փութաջան, որոնք դեռ չսովորած՝ աստվածաբան են»³⁷: Ինքնակենսագրության մեջ կա նաև շատ կարևոր մեկ այլ փաստ. Շիրակացին խոստովանում է, որ իր գիտական պատրաստվածության համար ու Հայաստանում մաթեմատիկան և մյուս գիտությունները զարգացնելու գործում չի ունեցել որևէ մեկին որպես աջակից, ապավինել է սեփական ուժերին ու ներքին մղմանը, նաև շարունակ աղոթել է հայ քրիստոնեական եկեղեցու առաջին կաթողիկոսին՝ Գրիգոր Լուսավորչին:

Անանիա Շիրակացու կենսագրությունը միայն նրա թողած փաստերով չի ավարտվում:

Ասատուր Մնացականյանը «Հայկական զարդարվեստ» կոթողային աշխատության մեջ հետաքրքիր փաստեր է պատմում մահից փրկող համասփյուռ³⁸ ծաղկի և Շիրակացու անվան փոխկապի մասին: Նա փաստում է Ն.Մառից քաղված հետևյալ հատվածը. «Եւ այլ բազում ինչ ասացին վասն ծաղկին զօրաւոր հրաշս մեծամեծս: Բայց և այլք ասացին, թէ Անանիայ ասաց, թէ ես գտի զնա ի Ձողկերտ»³⁹: Համասփյուռը կյանքի ծաղիկն է, կենաց ծառը, որն ինչպես Աս.Մնացականյանն է նկատում հաճախ կոչվում

³⁷ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 453:

³⁸ Համասփյուռ - Անորոշ տեսակի ծաղիկ, որ տասներկու ճյուղ է արձակում, և ամեն մի ճյուղը մի առանձին գույնի ծաղիկ ունի. կույր աչքերին լույս է տալիս, հոտը ուժ է տալիս. ըստ ուրիշների ուրիշ հատկություններ ունի: «Հայբուսակը» նույնացնում է Համասպրամի հետ, սակայն նկարագիրները (հատկապես տերևների) տարբեր են (տե՛ս Ստ.Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Գ-Ո, Երևան, 2010, էջ 28:

³⁹ Ա.Շ.Մնացականյան, Հայկական զարդարվեստ, Երևան, 1955, էջ 486, տե՛ս նաև Ն.Մառ, Ժողովածոյք առակաց Վարդանայ, Բ, Ս.Պետերբուրգ, 1894, էջ 300:

է „мировое древо“ – կենաց ծառ՝ Древо жизни⁴⁰: Այն որպես կյանքի խորհրդանիշ առկա է շատ ժողովուրդների առասպելաբանության ու բանահյուսության մեջ: Բերենք օրինակներ մի շարք ժողովուրդների առասպելաբանությունից:

ՍԼԱՎՈՆՆԵՐԻ ՄՈՏ

„Согласно славянской мифологии, Мировое Древо – Ось мира – стоит на окраине Вселенной (У Лукоморья), его вершина упирается в небеса, а корни достигают приесподней. По этому древу спускаются и поднимаются боги, по нему можно проникнуть в другие миры. В восточнославянских орнаментах Мировое Древо изображается условно: крона – в еще не распустившемся виде, отростки ветвей посередине ствола, два корня и между ними зерно, из которого выросло дерево“⁴¹.

ՍԿԱՆԴԻՆԱՎՅԱՆ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ՄՈՏ

„У древних скандинавов Мировое Древо – это священный ясень Иггдрасиль. Корнями и кроной он обнимает весь мир, на нем держатся небо, облака и звезды... У этого Древа стоит храм, в котором обитают норны, богини судьбы. У основания древа живет космический змей Нидхёгг, на макушке сидит мудрый орел а по стволу бегают вещая белка“⁴².

ԵԳԻՊՏԱՑԻՆԵՐԻ ՄՈՏ

⁴⁰ Ա.Շ.Սնացականյան, Հայկական զարդարվեստ, էջ 485:

⁴¹ Энциклопедия символов, М.-СПб, 2005, с. 725.

⁴² Նույն տեղում, էջ 726:

„В египетской иконографии дерево, проросшее из Космического яйца, олицетворяет Брахму, создающего материальный мир“⁴³.

ՉԻՆԱՑԻՆԵՐԻ ՄՈՏ

„Древние китайцы представляли себе Мировое Древо далеко на востоке, в Долине света“⁴⁴.

Աս.Մնացականյանը «Հայկական զարդարվեստ» գրքում հիշատակում է, թե համասփյուռը որպես մահից փրկող կյանքի ծաղիկ ծանոթ է XIII դարի բանաստեղծ Ֆրիկին.

Այս է համասփիւռ ծաղիկն,

Որ թափէ զմարդն ի մահու...⁴⁵

Համասփյուռ ծաղկի նկարագիրն առկա է XVII դարի բանաստեղծ Դավիթ Սալաձորցու «Գովասանք ծաղկաց» տաղում.

Այն համասփիւռ ծաղիկն որ կայ՝ ծաղել ծառով հազարագոյն,
Կոյր աչերուն լոյս կու բերէ, թէ տէրն տայ ադամորդւոյն,

Երկոտասան արմատ ունի, բուսնի երկոտասան տարւոյն,

Ամէն թփին գոյն մի ծաղիկ, մարդ կու մայլի անուշ հոտոյն:

Արքայիկ օձն է թագաւոր, ինքն սպիտակ որպէս ըզձին,

Համասփիւռն կու հետևի և զօրութիւն կ' առնու հոտոյն...⁴⁶

Համասփյուռ ծաղկի և կենաց ծառի վրա այս անդրադարձը ունի այն նպատակը, որ փաստի, թե որքան էր ժողովուրդը աստ-

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ Նույն տեղում:

⁴⁵ Ա.Շ.Մնացականյան, Հայկական զարդարվեստ, էջ 484:

⁴⁶ Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա, Երևան, 1979, էջ 563:

վածացրել ու հրաշագործ դարձրել Անանիա Շիրակացուն, որ նրա անձը կապում էր հավերժության հետ:

Շիրակացու եզակի հրաշագործ էության վերաբերյալ մեկ այլ ավանդություն պատմում է Ղևոնդ Ալիշանը «Յայ – Վենետ» գրքում: Ըստ այդ ավանդության Անանիա Շիրակացին թողնում է հայրենիքն ու գնում ծառայելու Վենետիկի տիրակալին: Շիրակացին գիտեր ջրից ոսկի ստանալու գաղտնիքը: Վենետիկի տիրակալը վախենում է, թե գիտնականը գաղտնիքը կարող է նաև ուրիշներին ասել, ուզում է սպանել նրան, սակայն Շիրակացին խոստանում է չմատնել գաղտնիքը ու իր գյուտի դիմաց տիրակալից խնդրում է ոսկե դրամի մի երեսին դնել իր պատկերը: Այդպես Շիրակացու նկարը հայտնվում է Վենետիկի տիրակալի ոսկե դրամի վրա⁴⁷:

Անանիա Շիրակացու «Ինքնակենսագրությունը» իր մեջ պարունակում է մի ամբողջ դարաշրջանի պատկեր, այն հետաքրքիր է ոչ միայն հայ մշակույթի դիտակետից, այլև համընդհանուր քաղաքակրթության համար ունեցել է և ունի կարևորագույն արժեք, և բնավ էլ պատահական չէ, որ այն թարգմանվել է եվրոպական առաջատար լեզուներով ու ռուսերենով:

⁴⁷ Ղ.Ալիշան, Յայ-Վենետ, Վենետիկ, 1896, էջ 191, տե՛ս նաև А.Г.Абрамян, Г.Б.Петросян, Анания Ширакаци, с. 36.



ՊԱՐՈՒՅՐ ՍԱՅԱԿՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու, դոցենտ

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ
«ՋԱՅՏՆՈՒԹՅԱՆ» և «ՁԱՏԿԻ» ՃԱՌԵՐԸ

Անանիա Շիրակացին հայ միջնադարյան մատենագրության երևելի դեմքերից մեկն է՝ տիեզերագետ, թվաբան, տոմարագետ, աստվածաբան փիլիսոփա, բնագետ և վերջապես մատենագիր: Գրիգոր Մագիստրոսի Պետրոս Գետադարձին ուղղված նամակից հետո¹ հայ եկեղեցին շրջանառության մեջ է դրել Անանիա Շիրակացու մատենագրական ժառանգությունը, և այն գրչագիր մատյանների միջոցով բազմաթիվ օրինակներով հասել է մեր օրերը ու գտնվում է ոչ միայն Մաշտոցի անվան Մատենադարանում, այլև աշխարհի ուրիշ գրադարաններում:

Արդեն միջնադարում Անանիա Շիրակացուն հայ մատենագիրներն անվանում են եզակի ու հանճարեղ: 13-րդ դարի նշա-

¹ Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի թղթերը, բնագիրն առաջաբանով և ծանոթագրություններով առաջին անգամ ի լույս ընծայեց Կ. Կոստանյանց, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 4-10:

նավոր պատմիչ Կիրակոս Գանձակեցին իր «Հայոց պատմության» մեջ Անանիա Շիրակացու անձի ու հայ հասարակական կյանքում կատարած դերի վերաբերյալ թողել է հետևյալ մեծարժեք վկայությունը. «Յետ Թեոդորոսի եկաց մարզպան Հայոց Համազասպ ամս եօթն: Եւ յետ Ներսիսի առ զկաթողիկոսութիւնն տէր Անաստաս ամս վեց: Սա կոչեաց առ ինքն զմեծ վարդապետն Անանիա՝ ի Շիրակ, գաւառէ, այր բանիբուն և հանճարեղ, գիտող յոյժ ամենայն տոմարական, արուեստից, զի կարգեսցեն անշարժ տոմար հայոց, որպէս այլոց ազգաց: Ջոր արարեալ մեծաւ ջանիւ և մինչ կամէին ժողովով հաստատել, վախճանի սուրբն Անաստաս: Անփոյթ եղեալ իրն զկնի եղելոցն, այլ առաջին կարգաւն վարէին»:²

Անանիա Շիրակացու մատենագրական ժառանգության մեջ իրենց հայրենասիրական բովանդակությամբ աչքի են ընկնում երկու ճառերը, որոնք նվիրված են քրիստոնեական եկեղեցու կարևոր երկու տոների՝ Հիսուս Քրիստոսի ծնունդին ու Ջատկին: Այս ճառերը պատմական գիտությունների դոկտոր աղբյուրագետ Աշոտ Գ.Աբրահամյանը զետեղել է իր հրատարակած «Շիրակացու մատենագրությունը» հատորի «Տոմարական աշխատություններ» խորագրի տակ: Նա համոզված է, թե «Հայտնության» և «Ջատկի» ճառերը Շիրակացու տոմարի մասերն են. «Շիրակացու այս հիշատակությունից երևում է, որ Հայտնության և Ջատկի ճառերը

² Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Աշխատասիրությամբ Կ.Ա.Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 62: Անաստաս Ա. Ակոռեցին հայոց կաթողիկոս է եղել 661-667թթ. (տես Ամենայն հայոց կաթողիկոսներ, Խմբագրությամբ Պետրոս Հովհաննիսյանի, Երևան, 2001, էջ 64): Հայոց տոմարը անշարժ է դարձրել Հովհաննես Սարկավազը 1084-ին: Նա կազմել է հետագա 532 տարիների աղյուսակը՝ մինչև 1616 թվականը, որը կոչվել է «Սարկավակադիր տոմար» (տես Ով ով է, Հայեր, Կենսագրական հանրագիտարան, հ.1, Երևան, 2005, էջ 660):

նրա տոմարի մասերից են: Շիրակացու աղյուսակների մեջ կարևոր են նրա հայտնության և գատկի աղյուսակները, որոնց համար անհրաժեշտ էր, որ Շիրակացին տեսական հիմնավորում տար: Եվ ահա Շիրակացին ձեռնարկում է մի ընդարձակ աշխատանք՝ գրում է հայտնության և գատկի իր ներկա ճառերը: Նա աշխատում է բերել աստվածաշնչից և եկեղեցական հեղինակավոր գրողներից քաղվածքներ և ցույց տալ, որ հայկական եկեղեցին հայտնության և գատկի տոները որոշելիս ավելի ճիշտ տեսակետի վրա է կանգնած, քան այդ քաղկեդոնական եկեղեցին է»:³ Հայտնի է, որ Քաղկեդոնի ժողովը հրավիրվել է Մարկիանոս կայսեր հրամանով 451 թվականի հոկտեմբերի 8-ին Քաղկեդոն քաղաքի մեջ՝ քննելու՝ Քրիստոսը մեկ, թե երկու բնություն ունենալու խնդիրը և եկել է այն եզրակացության, թե Քրիստոսի մեկ անձի մեջ երկու բնություններ կան՝ աստվածային ու մարդկային, առանց շփոթության, առանց փոփոխության, առանց բաժանման և առանց անջատման: ⁴ Քաղկեդոնի ժողովը քրիստոնյա երկրների մեջ խաղաղություն հիմնելու փոխարեն առաջացրեց խիստ հակամարտություններ: Տարբեր եկեղեցիներ թշնամացան: Հույները, որոնք Քաղկեդոնի ժողովի որոշումներն ընդունողն էին, պարտադրում էին, որ բոլոր ազգերի եկեղեցիները՝ ենթարկվեն իրենց որոշումներին: Հայերը Բաբկեն Ա Ոթմսեցի (հայոց կաթողիկոս 490-516) հայրապետի գլխավորությամբ 506-ին Դվինում հրավիրում են եկեղեցական ժողով, որին մասնակցել են հայոց մարզպան Վարդ Մամիկոնյանը,

³ Ա.Գ.Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Ուսումնասիրություն, Երևան, 1944, էջ 109-110: Մեջբերման մեջ պահել ենք բնագրի ուղղագրությունն ու կետադրությունը - Պ.Ս.:

⁴ Տես Աբրահամ Ջամիլյան, Հայոց եկեղեցու պատմություն, Երևան, 1991, էջ 81:

նախարարներ, հայ, վրաց, ասորի բարձրաստիճան հոգևորականներ ու մերժել են Քաղկեդոնի ժողովի որոշումներն ու այն անվանել հերձված: Այս որոշումը ազգապահպան մեծ ազդակ դարձավ հատկապես հայ պետականության բացակայության երկար դարերի ընթացքում՝ ապահովելով հայերի ազգային ինքնուրույնությունը: Այս խնդրի պաշտպանության մտահոգությունն է առկա նաև Անանիա Շիրակացու վերոհիշյալ երկու ճառերում:

Առաջին ճառը կոչվում է Հայտնության և ունի ենթախորագիր. «Մաթեմատիկոս Անանիա Շիրակացու [աշխատությունը] մեր տիրոջ և փրկչի հայտնության առթիվ»: Ինչպես իր բոլոր աշխատություններում, այստեղ էլ մեծ գիտնականն իր խոսքը ներկայացնում է դիպուկ ու հստակ: Հենց ճառի սկզբում նա ներկայացնում է, թե ինչի մասին է իր խոսքը. «Մեր ձեռնարկած աշխատության մեծ մասը Աստծու սուրբ տոների մասին է, որին հասանք և որը բանախոսելու արժանի եղանք: Նախ սկսենք մեր Քրիստոս Աստծու ծննդյան տոնից, որը մեր տարեկան տոների առաջնեկն է և հանդիսավորության ու բոլոր տեսակի քրիստոնեական հիշատակների գլխավորը»:⁵ Ուշագրավ է մի բովանդակային փաստ, որն առկա է այս ճառում. թեպետ Շիրակացին ընդդիմախոսում է իր ժամանակի հույն հոգևորականներին, մերժում Հիսուսի ծննդյան տոնի նշման նրանց կանոնակարգված օրը, սակայն որպես մեծ մարդասեր ու խաղաղասեր, ջերմորեն է խոսում հույն ժողովրդի մասին ընդհանրապես՝ նրանց անվանելով «արդարև տոնասեր և ջերմ բարեպաշտ ժողովուրդ», որը մեծ դեր ունի քրիստոնյա աշխարհում:

⁵ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա.Գ.Աբրահամյանի և Գ.Բ.Պետրոսյանի, Երևան, 1979, էջ 148:

«Հայտնության» ճառում Շիրակացին խոսում է Հիսուսի ծննդյան տոնի ծիսական կողմի և մինչև իր ապրած օրերն ընկած մի քանի տիեզերական ժողովների ժամանակ տոնի հետ կապված փոփոխությունների և առաջարկների մասին: Նա առաջինը խոսում է Նիկիայի տիեզերական ժողովի մասին, որը գումարվեց 325 թվականին Նիկիա քաղաքում, որին մասնակցում էին 316 սուրբ հայրեր:⁶ Ճառի հեղինակի կարծիքով Նիկիայի ժողովը սուրբ էր, որովհետև այն մերժեց աղանդավորական առաջարկները և որոշեց Հիսուսի ծննդյան տոնը՝ ըստ սուրբ առաքյալների սահմանած նախկին կանոնների: Նա նաև զգուշացնում է, որ անհրաժեշտ է հավատացյալներին բացատրել փութաջանությամբ կատարելու ծննդյան և մկրտության տոները: Շիրակացու այս ճառում մեջբերումներ կան Հովհաննեսի ու Ղուկասի ավետարաններից և առաքյալների թղթերից: Մատենագրի կարծիքով ծննդյան օրվա նշումը մարդուն պետք է հիշեցնի, որ Հիսուսը ծնվել է մարդկանց մեղքերը մաքրելու ու նրանց երկրորդ կյանքը պահպանելու համար: Շիրակացին հիշեցնում է Հիսուսի և Նիկողեմոսի երկխոսությունը. «Նիկողեմոսը նրան ասաց. «Ինչպե՞ս կարող է ծնվել մի մարդ, որ ծեր է. մի՞թե կարելի է իր մոր որովայնը կրկին անգամ մտնել ու ծնվել»: Հիսուս պատասխան տվեց և ասաց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթե մեկը ջրից ու Հոգուց չծնվի, չի կարող Աստծո արքայությունը մտնել, որովհետև մարմնից ծնվածը մարմին է, իսկ Հոգուց ծնվածը՝ հոգի»: ⁷ Քրիստոսի ծննդյան օրը նրանով ծնվածներն ու

⁶ «Հայոց եկեղեցու պատմության» մեջ սուրբ հայրերի թիվը 318 է (տես Հայոց եկեղեցու պատմություն, կազմեց Աբրահամ Ջամինյանը, էջ 75):

⁷ Հովհաննես, Գ, 4-7:

մկրտվածները պետք է մաքրվեն՝ ասուն է Շիրակացին:⁸ Մկրտվող անձնավորությունը երեք անգամ սուրբ ավազանի մեջ ընկղմվելով՝ օրինակ է դառնում Տիրոջ երեք օրվա թաղմանը: Իր այս միտքը հաստատելու համար Շիրակացին մեջբերում է Պողոս առաքյալի հռոմեացիներին ուղղված թղթի հետևյալ հատվածը. «Մկրտությամբ թաղվեցինք նրա հետ մահով, որպեսզի ինչպես որ Քրիստոս մեռելներից հարություն առավ Հոր փառքով, նույնպես և մենք քայլենք նոր կյանքով, որովհետև, եթե նրա մահվան նմանությամբ տնկակից եղանք նրան, պիտի լինենք նաև նրա հարության նմանությամբ»:⁹

Շիրակացու այս ճառը հետազոտողները նշել են, որ հայ մատենագիրն օգտվել է վաղ քրիստոնեության շրջանի նշանավոր աստվածաբան Մակար Երուսաղեմացու կամ Մակար Մեծի «Կանոնական թուղթ ի Հայս վասն կանոնադրութեան» աշխատությունից, որի մասին խոսում է խորին հարգանքով, ինչպես նաև VI դարի հռչակավոր աստվածաբան Գրիգոր Նազիանզացու «Մկրտության ճառից», որը թարգմանված է հայերեն ի թիվս նրա այլ գործերի:¹⁰

Շիրակացին հիշեցնում է, թե ըստ հին աստվածաբանների վկայության Սուրբ Հայտնության տոնը պետք է կատարեն հունվարի 6-ին: Շիրակացին ծանոթ է մ.թ. առաջին դարի պատմիչ «Հրեական պատերազմի մասին», «Հրեական հնախոսություն» գրքերի հեղինակ ազգությամբ հրեա Հովսեպոս Փլավիոսի աշխատություններին և ըստ նրա հաղորդածի խոսում է պեն-

⁸ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Թարգմանությունը..., էջ 149:

⁹ Հռոմ, 2, 4-6:

¹⁰ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Թարգմանությունը..., էջ 344:

տեկոստեի օրվա մասին. «Եվ սրա [նշանակությունը] նաև ավելի մեծ է, քան երկրորդինը, որի մասին պատմում է Յովսեփոսը, թե պենտեկոստեի օրը դրոշյունը և սարսափը պատել էր նաև քահանաներին ու հավաքված ժողովրդին: Այնուհետև հանկարծ լսվեցին ներքին տաճարից այսպիսի խոսքեր. «Գնում ենք այստեղից, գնում ենք»:¹¹ Պենտեկոստեի տոնի մասին Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի «Ծիսական բառարանը» տալիս է հետևյալ բացատրությունը. «Պենտեկոստե - Չատկի հիսուներորդ օրն է, հունական բառով բացատրված, որ հրեաների համար Սինեական օրենքի տվչության տոնն է, իսկ քրիստոնյաների համար՝ Սուրբ Յոզու գալստյան տոնը, որը եղել է Յոզեֆալստյան տոնի անվանումներից մեկը»:¹² «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» հեղինակները այդ կրոնական տոնը բացատրում են հետևյալ կերպ. «Պենտեկոստե - բառ յունարէն: Յիսներորդ օր, այն է Տօնն յիսուն աւուրքք՝ զկնի զատկի, երբեմն հաշուեալ յելիցն յեգիպտոսէ և ի նոր օրէնս ի յարութեան Քրիստոսի. այն է Յոզեֆալուստն»:¹³

Շիրակացին խիստ քննադատում է հույն աստվածաբանների, ովքեր վստահություն չեն վերագրում առաքյալների որոշ կանոնների, պատճառաբանելով, թե վերջիններս ժամանակ չունեին ստուգապես քննելու տոնական օրերը, որովհետև նրանց հիմնական հոգսը մարդկանց հեթանոսական կրոններից ազատելն է, և քրիստոնեական կրոնի հետնորդներ դարձնելը: Շիրակացին հիշեցնում է, թե իր կարծիքը հիմնված է այնպիսի երկու նշանավոր աստվածաբանների տեսակետների վրա, որոնց

¹¹ Նույն տեղում, էջ 152:

¹² Մաղաքիա արք. Օրմանյան, Ծիսական բառարան, Երևան, 1992, էջ 38:

¹³ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ .2, Գ-Ֆ, Երևան, 1981, էջ 173:

մեծությունն ընդունում է նաև հունական եկեղեցին: Այդ երանելիներն են Բարսեղ Կեսարացին ու Գրիգոր Նազիանզանացին: Նա հիշեցնում է Պողոս առաքյալի հետևյալ խոսքը. «Եթե երկրորդը հայտնվի, առաջինը պետք է որ լռի»:¹⁴ Պողոս առաքյալը երայեցիներին ուղղված նույն թղթում ասում է. «Ահավասիկ գալիս են քո կամքը կատարելու, Աստված»: Հերքում է առաջինը, որ հաստատի երկրորդը: Այդ կամքով էլ մենք սրբվեցինք Հիսուս Քրիստոսի մարմնի մեկընդմիշտ պատարագումով»: ¹⁵ Շիրակացին բացատրում է, թե ըստ հույների՝ Ծննդյան ու Սկրտության տոները կոչվում են հայտնության, սակայն ոչ հույները և ոչ այլ ազգերը չեն նշում, թե եղել է երկու Հայտնության օր, կամ միայն մեկը, ուրեմն տոնը պետք է նշել հունվարի վեցին: Իր ասածը հաստատելու համար հայ մատենագիրը շարունակ դիմում է Հին ուխտին և Ավետարանին: Իր պնդումները հիմնավորելու համար Անանիա Շիրակացին վկայակոչում է Նիկիայի տիեզերական ժողովում ընդունված կանոնները, որոնց Հայոց եկեղեցին սրբորեն հետևում է մինչև իր ապրած ժամանակները: Նիկիայի ժողովին պաշտոնապես հրավիրվել էին Գրիգոր Լուսավորիչն ու Տրդատ Մեծը, սակայն նրանք չգնացին ժողովին մասնակցելու և իրենց փոխարեն ուղարկեցին սուրբ Արիստակեսին, որը ժողովի Հավատո Հանգանակն ու կանոնները Հայաստան բերեց ու հանձնեց հորը՝ Գրիգոր Լուսավորիչին, որը Հանգանակի վրա ավելացրեց հետևյալ կտորը. «Իսկ մենք փառավորեցուք, որ յառաջ քան զյավիտեանս՝ երկիր պագանելով սրբոյ Երրորդութեան և միոյ

¹⁴ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Թարգմանությունը..., էջ 153:

¹⁵ Եբր., Ժ, 9-10:

աստուածութեան՝ Յոր և Որդւոյ և Յոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն»:¹⁶

Պատմական այս փաստին ուշագրավ անդրադարձեր ունեն ոսկեդարի երկու պատմիչները՝ Փավստոս Բուզանդը և Մովսես Խորենացին, որոնք նույնքան կարևորել են Նիկիայի ժողովի որոշումները Հայոց եկեղեցու համար: Փավստոս Բուզանդը չհաղորդելով Արիստակեստի Նիկիա մեկնելու փաստը, վերջինիս ներկայացնում է որպէս Գրիգոր Լուսավորչի մշտական գործակից. «Արդ՝ Խոսրովի որդի Տրդատի թագավորութեան ժամանակ (Հայոց աշխարհը) լուսավորվեց հաճոյական սիրով և աստվածապաշտութեան հավատով, որին ծանոթացավ մեծ քահանայի՝ Գրիգորի միջոցով, որ Անակի որդին էր: Նրա կրտսեր որդին՝ Արիստակեսը, իր հորը գործակից և եպիսկոպոսակից էր նրա վարդապետութեան ամբողջ ընթացքում իր կյանքի բոլոր օրերում մինչև քրիստոսակոչ վախճանի օրը»:¹⁷ «Հայտնութեան» ճառի Նիկիայի ժողովի հատվածը Անանիա Շիրակացին հավանաբար քաղել է Մովսես Խորենացու «Հայոց պատմութեան» համապատասխան մասից, որովհետև վերջինս իր երկի երկրորդ գրքում ունի առանձին գլուխ խորագրված՝ «Արիստակեսի Նիկիայից դառնալը, ազգականների հավատալը և Գառնիում եղած շինությունները»: Այստեղ պատմահայրը գրում է. «Արիստակեսը մեծն Ղեվոնդի հետ գնում հասնում է Նիկիացոց քաղաքը, որտեղ ժողովված էին երեք հարյուր տասնութ հայրեր՝ արիանոսներին տապալելու, որոնց նզովեցին և եկեղեցու հաղորդակցութեանից հեռացրին, և ինքնակալ (Կոստանդիանոսն էր նրանց) աքսորեց հանքերը: Ապա Արիստակեսը հետ է դառնում ճշմարիտ դավանութեամբ և ժողովի

¹⁶ Մաղաքիա Օրմանյան, Հայոց եկեղեցու պատմություն, էջ 76:

¹⁷ Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ.Մալխասյանցի, Երևան, 1987, էջ 14:

քսան գլուխ կանոններով և գալիս հանդիպում է հորը և թագավորին Վաղարշապատ քաղաքում: Սուրբ Գրիգորն ուրախանալով՝ իր կողմից մասնավոր գլուխներ է ավելացնում ժողովի կանոնների վրա՝ իր հոտի ավելի մեծ զգուշության համար»:¹⁸ Շիրակացին ոչ միայն հավատացած է, թե Հայոց եկեղեցին ճիշտ ժամանակին է նշում Հիսուս Քրիստոսի Ծննդյան օրը, այլև արձանագրում է, թե Քաղկեդոնի ժողովից հետո կայսեր հրամանով Երուսաղեմում, Յռոմում, Ալեքսանդրիայում և ողջ քրիստոնյա աշխարհում «խոտոր տոնն» ընդունեցին իբրև ճշմարիտ:

Երևան բերելով իր տոմարագիտական բազմագիտակությունը՝ Շիրակացին նշում է, թե Հայտնության տոնը տոմարական հաշիվներով, որ ամիսներին և որ օրերին է տեղի ունենում ըստ ասորական, արաբական, եթովպիական, եգիպտական, մակեդոնական, հունական, հռոմեական տոմարներով: Իսկ հայկականի մասին հայտնում է. «Հայտնությունը հայկական տոմարով փոփոխվում է ամեն չորս տարին մեկ անգամ: Իսկ թե այդ ինչու՞ է այդպես լինում և կամ ինչու՞ նա հաստատուն չէ այլ ժողովուրդների [տոմարների] նման, կբացատրեմ իր տեղում ըստ տոմարական կարգի»:¹⁹ Նա նաև խստորեն զգուշացնում է, թե Հայտնության սուրբ տոնը հրեական չէ, այլ համայն քրիստոնեության տոնն է, և դա ոչ ոք չպետք է շփոթի: Միաժամանակ Շիրակացին չի նոռանում վկայակոչել Պողոս առաքյալի երթայեցիներին ուղղված թղթի այն միտքը, թե Հիսուսն ազգությամբ եղել է հրեա. «Հուդայի ցեղից ծագեց մեր տերը»: Ա.Շիրակացու

¹⁸ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և մեկնաբանությունները Ստ.Մալխասյանցի, Երևան, 1981, էջ 225:

¹⁹ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Թարգմանությունը..., էջ 159:

նմանօրինակ մտահոգությունը տեսնում ենք նաև ավելի ուշ շրջանի հայ գործիչների մոտ:

XV դարի նշանավոր պատմիչ Թովմա Մեծոփեցին իր «Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց» երկում լուրջ մտահոգություն է հայտնում Սուրբ Գրիգոր Լուսավորչի հիմնած Զայոց եկեղեցու որոշ կրոնավորների բուն հայկական հավատից շեղումների համար և թվարկում այն հոգևորականների անունները, ովքեր եղել են հայոց եկեղեցական հավատի ճշմարիտ դավանողներն ու այդ հավատն իրենց մատենագրական գործերով ամրապնդողները ու դնում է մի շարք անուններ, ինչպես, օրինակ Դավիթ Անհաղթին, Ստեփանոս Սյունեցուն, Մովսես Խորենացուն, Ասողիկ թարգմանչին և իր ցանկում հիշատակում է նաև Անանիա Շիրակացուն:²⁰ Սա նշանակում է, որ Գրիգոր Մագիստրոսի Պետրոս Գետադարձ կաթողիկոսին ուղղված հռչակավոր թղթից հետո Անանիա Շիրակացու մատենագրությունը հայկական վանական դպրոցներում դրվել էր լայն շրջանառության մեջ: Հոգևոր առումով հատկապես ուշագրավ է «Անանիա Շիրակացու Ջատկին նվիրված (տոմարական) աշխատությունը»:

Ջատիկի վերաբերյալ Մաղաքիա Օրմանյանի «Ծիսական բառարանը» հայտնում է հետևյալը. «Ջատիկ է կոչվում մեզ մոտ հրեական Պասեքի տոնը, և որովհետև հրեաերեն բառի բուն թարգմանությունը չէ, անհավանական չի լինի կարծել, թե Ջատիկ հորջորջունը բնիկ ու սեփական հայերեն ծագում ունի, և եղանակների բաժանվելուց կամ գիշերահավասարով տարին երկու մասի բաժանվելուց վերցված անուն է և հեթանոսական

²⁰ Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ- Թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1960, էջ 38:

ժամանակներից մնացած տոն է, որը միջոցների համեմատությամբ հրեական Պասեքին համահավասար է դիտվում: Այնպես որ նույնիսկ Ս. Գրի մեջ Պասեք բառը Չատիկ բառով է թարգմանված: Հրեական Պասեքը Քրիստոնեության մեջ Քրիստոսի Հարության տոնին վերածվելով, այդ փառավոր տոնն էլ մեզ մոտ «Չատիկ Յարութեան» է կոչվել: Քրստոսի Հարության մասին այդ անվան ներքո է խոսվում»:²¹

«Библейская энциклопедия» հատորում տարբերակվում է երկու Չատիկ: Առաջին Չատիկը կոչվում է Հին կտակարանի, որն առաջացել է եբրայեցերեն passah - անցում բառից և եղել է հրեաների ամենակարևոր տոնը և նշվել է մեր մարտ ամսվա երկրորդ կեսից մինչև ապրիլի առաջին կեսն ընկած ժամանակահատվածում: Աստված այդ տոնը հաստատել է հրեաների համար այն ժամանակ, երբ Փարավոնը չնայած Աստծու եգիպտացիների վրա տեղացած պատուհասների, բաց չէր թողնում հրեաներին անապատ գնալու համար: Հենց այդ ժամանակ Տերը արձակեց վերջին ու ամենածանր պատիժը՝ Փարավոնի և բոլոր եգիպտացիների առաջնեկների անգամ անասունների առաջ-

²¹ Մաղաքիա արք. Օրմանյան, Ծիսական բառարան, էջ 19: Չատիկ տոնին է նվիրված Գրիգոր Նարեկացու «Յարութեան» տաղը, որում նաև տոնի հայկական բնույթը շեշտելու համար Հիսուսի սայլը իջնում է Մասիսի աջ կողմից, մի հանգամանք, որը բացակայում է Ավետարանում:

Ի գիլ գայր, ի գիլ սայլիկն ի գիլ,
Ի Մասեաց յաջ կողմանէն
Սայլիկն ի գիլ գայր, ի գիլ,
Եւ ճռնչալով գայր մտանէր յերուսաղէմ.
Եւ որդիք նոր Սիոնի,
Նոր երգէին՝ գայս ասելով.

-Փառքը Քրիստոսի ամենազար յարութեան:

(տե՛ս Գրիգոր Նարեկացի, Տաղեր և զանձեր, Աշխատասիրությանը Արմինեն Քյոչկերյանի, Երևան, 1981, էջ 64-65):

նեկների կոտորածի հրամանը:²² Իսկ ավետարանական Ձատիկի մասին նույն հանրագիտարանում ասվում է. «Пасха новозаветная-высочайший, радостнейший и вместе с тем древнейший Христианский праздник-Воскресение Христово. В событии крестной смерти и воскресения Господа из мёртвых заключается основание и средоточие всего Христианства. Этим событием апостолы начали свою проповедь; на нём основывали и в нём все соединяли. Около событий смерти и воскресения Спасителя группируются у апостола Павла все высочайшие догматы нашей веры и все высшие наши надежды (I, Кор. XV). Праздновать Пасху заповедали апостолы».²³

Անանիա Շիրակացին էլ Ձատիկի ճառի սկզբում տարբերակում է Հին կտակարանի Ձատիկը՝ հիշեցնելով, թե այդ տոնը կապվում է իսրայելցիների Եգիպտոսից դուրս գալու հետ և բերում է Հին կտակարանի «Ելից» գրքից հետևյալ հատվածը. «Այս ամիսը թող ձեզ լինի ամիսների սկիզբը, տարվա ամիսների առաջինը լինի»:²⁴

Մատենագիրը բացատրում է, թե իր նպատակը չէ այս ճառում մեկնաբանել ոչ Ձատիկի տոնի իմաստը, ոչ էլ տոնի անցած պատմությունն անել՝ նշելով, թե որտեղի՞ց և ումի՞ց է այն սկսվել: Այլ հայ մատենագիրն ուզում է հաստատել, թե հայոց եկեղեցին ճիշտ ժամանակին է նշում Ձատիկը և բնավ պատրաստ չէ այդ հարցում թողնել իր ինքնությունն ու հետևել այլազգի քրիստոնյաներին:

²² Библейская энциклопедия, Труд и издание Архимандрита Никифора, Москва, 1891, с. 554.

²³ Նույն տեղում, с. 554.

²⁴ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Թարգմանությունը..., էջ 161:

Աստծո արարչության վերաբերյալ տոմարագետ գիտնականը տալիս է իր հետաքրքիր բացատրությունը. «Արարչության օրը Լուսինը 10-օրական էր, թեև մի օր էր, որ նա գոյություն ուներ, սակայն Լուսնի սկավառակը 14 օրվա տեսք ուներ: Անկարելի էր, իհարկե, որ իր լինելության առաջին օրը Լուսինը թերի, կիսակատար լիներ, երբ բոլոր արարածները լիալիր և կատարյալ ստեղծվեցին, ինչպես, օրինակ՝ բանջարները, որ նորաբույս չէին, այլ՝ հասուն, ծառերը կատարյալ էին և պտղալից, մարդը երեսնամյա հասակով էր: Նույն օրինակով և Լուսինը 14-օրյա էր՝ լույսի կատարյալ լրությամբ »:²⁵ Ինչպես այլ գործերում, այնպես էլ Ջատկի ճառում Անանիա Շիրակացին մի քանի անգամ արտահայտում է իր պաշտամունքը Հայոց եկեղեցու հոր՝ Գրիգոր Լուսավորչի նկատմամբ, նրան անվանելով «Քրիստոսին խոստովանող Հայաստանի իմ պսակավոր հայր Գրիգոր»:²⁶ Նա կարևոր է համարում նշել, թե եբրայեցիները իրենց լեզվով Ջատկի տոնը կոչում են «փասկա», որը թարգմանվում է «անցում»:

Անանիա Շիրակացին «Ջատկի ճառում» ջերմորեն հիշում է Հին կտակարանի այնպիսի դեմքերի, ինչպիսիք են Մովսես մարգարեին հաջորդած հրեաների ղեկավար Հեսուն, հրեական թագավորներ Եզեկիան և Հովսիան, հրեաների Դավիթ կոչված ցեղի իշխան Ջորաբաբելը,²⁷ որը Ք.ճ.ա. հրեաներին ազատեց

²⁵ Նույն տեղում, էջ 162:

²⁶ Նույն տեղում, էջ 163:

²⁷ Հեսունն ու Ջորաբաբելին հիշում է նաև Մովսես Խորենացին իր «Ողբում», որում ակնարկում է «կռիվներ հերձվածողների կողմից» իրողությունը: Ստ.Մալխասյանցը այս ակնարկի հիման վրա եզրակացնում է, թե 5-րդ դարի երկրորդ կեսին Հայաստանում եղել է բուռն կրոնական պայքար, որի հիմքը կարող էր լինել միայն քաղկեդոնականությունը (տես Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը... , էջ 533):

Բաբելոնի գերությունից: Այս ճառում էլ հիշատակվում են Նիկիայի տիեզերական ժողովը և Կոստանդիանոս կայսրը, որպես այդ ժողովի հրավիրող: Նա հիշեցնում է վերջինիս հրահանգը, ըստ որի արգելվում էր Ջատիկը տոնել «տիրասպան հրեաների հետ խառը»:²⁸ Կայսրը հրամայեց, որ բոլոր քրիստոնեական եկեղեցիները միակերպ տոնեն Ջատիկը, սակայն նրա պատգամը բոլոր վայրերում չկիրառվեց: Այդ խնդիրը քննարկման հարց դարձավ Ալեքսանդրիայում՝ քաղաք, որին Անանիա Շիրակացին անվանում է «գիտությունների մայրաքաղաք»:

Ջատիկի ճառը, որն ունի և՛ պատմական, և՛ ճանաչողական մեծ արժեք եզակի տեղեկություններ է հաղորդում 561-ին Ալեքսանդրիայում հրավիրված տոմարագետների ժողովի վերաբերյալ ու թվարկում է հիմնական մասնակիցների անունները՝ նշելով նրանց ազգությունը: Դրանք էին Էաս Աղեքսանդրացին, հրեա Փենեհեզ Տիբերացին, ասորի Գաբրիելը, արաբ Յովհաննը, եթովպացի Աբիդենը, մակեդոնացի Սերգիին, հույն Եվլոգին, հռոմեացի Գիզանը: Նրանց դեմ դուրս է գալիս Իրիոն անունով մի վարդապետ Կոստանդնուպոլսից, որը մերժում է ժողովի որոշումները ու նրանց հեղինակներին անվանում է տգետներ: Այս աստղագետը խոտանում է Ալեքսանդրիայի ժողովի ընդունած տոմարը և փոխարենն առաջարկում է իրենը, որը կայսեր հովանավորությամբ տարածում է ամենուր: Շիրակացու կարծիքով Իրիոնի խառնաշփոթ ժամանակագրությունը հորինված է հակառակ աստվածաբանական գրքերի:

Ջատիկի ճառի մեջ Անանիա Շիրակացին մի քանի անգամ խոսում է Պողիանոսականների մասին, որոնց հայ համարողի

²⁸ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Թարգմանությունը..., էջ 165:

մատենագրության քննական բնագրի կազմող²⁹ և հետագայում աշխարհաբար թարգմանող Աշոտ Գ.Աբրահամյանը ամենայն հավանականությամբ համարում է պավլիկյան շարժման հետևորդներ:³⁰

Ի տարբերություն թոնդրակյան աղանդավորական շարժման, որի մասին որոշ գաղափար կարելի է կազմել Գր.Նարեկացու, Գր.Մագիստրոսի թղթերից ու Արիստակես Լաստիվերցու պատմությունից, պավլիկյան աղանդավորական շարժման գաղափարախոսությունը պահպանվել է և հասել մեր օրերը: Այդ փաստաթղթի երևան գալու պատմությունը ավելի քան հետաքրքիր է:

1891-ին անգլիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Կոնիբերը գիտական գործուղումով գալիս է Արևելյան Հայաստան: Նրան հետաքրքրում էին հին հունական և ասորական գրքերի հայերեն հնագույն թարգմանությունները:

Կոնիբերին հատկապես հետաքրքրում էր Ենովքի գրքի³¹ հայերեն թարգմանությունը: Ս.Սինոդի գրատնում որոնումներ կատարելիս անգլիացի հայագետը գտնում է պավլիկյանների վարդապետությունը ներկայացնող ձեռագիրը, որի ընդօրինակությունը Օքսֆորդում ստանում է 1893-ին՝ Գալուստ Տեր-Մկրտչյանի շնորհիվ: Նա թարգմանում է բնագիրը գրաբարից

²⁹ Տե՛ս Ա.Գ.Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Ուսումնասիրություն, Երևան, 1944:

³⁰ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Թարգմանությունը..., էջ 346:

³¹ Ենովքը Կայենի որդին է եղել ու խիստ բարեպաշտության շնորհիվ Եղիայի նման առանց մահ ճաշակելու անմահացել է՝ փոխվելով երկինք: Ենովքի անունով պահպանվել է մի պարականոն գիրք: Ենթադրվում է, թե այդ գիրքը գրել է բարեպաշտ մի քրիստոնյա Ք.ծ.հ. առաջին դարում:

անգլերեն ու հրատարակում 1898-ին:³² Գրքում անգլերենով զետեղված է ընդարձակ ներածություն (196 էջ), որում բացատրվում է, թե «Բանալի ճշմարտութեան» գիրքը գրվել է Չայոց ՌՍԼ թվականին (1782թ) Տարոն գավառում: Այս հրապարակման մեջ Ֆ.Կոնիբերն անդրադարձ ունի Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Մագիստրոսի, Յովհան Օձնեցու, Ներսես Շնորհալու՝ Չայաստանի աղանդավորների մասին ասված փաստերին:

Ներածության մեջ Կոնիբերը բացատրում է, թե իր թարգմանության նպատակն է պավլիկյանների հայկական վարդապետությունը ծանոթացնել եվրոպացիներին: Այս անդրադարձն ապացուցում է, թե որքան իրավացի էր իր ժամանակին Անանիա Շիրակացին, որ խստագույնս դատապարտում էր հայ պաշտոնական եկեղեցու վարդապետությունից ամեն տեսակի շեղումներ:

Անանիա Շիրակացին Իրիոնի Ջատկի տոնը կարգելու օրվա բացատրությունները համարում է ճարտար ու խաբուսիկ արվեստով ստեղծված մի տեսություն, որը աստվածաբանական տեսակետից քննելու դեպքում նրանում ճշմարտության հատիկ չի գտնվի, դեռ ավելին՝ այն արժանի է նզովքի:

Չայ տոմարագետը պնդում է, թե Գրիգոր Լուսավորչի հիմնած եկեղեցու հետևորդներն ու զավակները չպետք է հետևեն ուրիշ ազգերին՝ սուրբ Ջատիկը տոնելու խնդրում:

Մեծ գիտնականը ճառն ավարտելիս հիշում է իր և իր հոր անունը, ճառի այդ հատվածը յուրօրինակ հիշատակարան է հիշեցնում՝ դրված գործի վերջում. «Քանի որ շատերը չեն, որ ծանոթ են հաշիվների հետ, մանավանդ՝ շինականները, իսկ մեր

³² Տե՛ս F.C.Conybeare, The key of Truth, A Manual of the Paulician Church of Armenia. The Armenian text edited and translated with illustrative documents and introduction by F.C.Conybeare, Oxford, 1898.

Տիրոջ վարդապետությունը տարածվել ու սփռվել է ողջ աշխարհում, այդ պատճառով ես՝ Անանիա, որդի Յովհաննեսի Շիրակունի, կազմեցի հինգ հարյուր երեսուն տարիների բոլորակը՝ սկսելով աղեքսանդրյան թվականի 828-ից և հասցրի մինչև 1360 թվականը և դրոշմեցի նրա մեջ հինգ հարյուր տարիների աղյուսակը 28 հատվածներով՝ ամեն մի տարվա համար կարգելով առանձին-առանձին կանոն,³³ որով ստացվեց 532 կանոն՝ ամեն մի կանոնին հատկացնելով մեկական տարի»:³⁴ Ա.Շիրակացու «Ձատկի ճառի» ավարտի հատվածից պարզ է դառնում նրա խոր մտահոգությունը հայոց եկեղեցու տոները հայոց ողջ ժողովրդի կողմից գրագետ ու ճիշտ նշելու խնդրում, որպեսզի ոչ մի աղանդավոր ու հերձվածող չօգտվի շինականների կամ տոմարին անտեղյակ մարդկանց անգիտությունից ու հայ ժողովրդին չչեղի իր հավատից: Հիշենք, որ այդ մտահոգությունն այսօր էլ կա, որովհետև ինչպես մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանն էր ասում, ամեն ազգի պահողը լեզուն ու հավատն է:

Ֆրեդրիկ Կոնիբերը արժեքավորելով Շիրակացու այս երկու ճառերը՝ դրանք թարգմանել է անգլերեն:³⁵

³³ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» հեղինակները կանոն բառը բացատրում են հետևյալ ձևով. «Կանոն-Իբր Աղիսակ կամ գաւազան ժամանակագրութեան և համաբարբառ աւետարանաց, և տոմարական գրութեան: Ի քրոնիկոն ժամանակական կանոնն փոխեցայց... Որպէս և ի ժամանակական կանոնի ճառեցաք. Շիրակացի, Ձատիկի» տես. «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» հ.1, Ա-Կ, Երևան, 1979, էջ 1051:

³⁴ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Թարգմանությունը..., էջ 172-173:

³⁵ ա) F.Conybeare, The discourse of Ananias, called the Counter upon the Epiphany of our Lord and Saviour, The Expositor, London, 5th series, vol. IV, 1896, p. 323-337.



ԼԻԼԻԹ ԶՈՎԱԵՓՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու, դոցենտ

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ ԽՆԴԻՐ-ՅԱՆԵԼՈՒԿՆԵՐԸ

Անանիա Շիրակացին Է. դարի նշանավոր մտավորականներից է, գիտական աշխարհին հայտնի «համարող» (մաթեմատիկոս) անվամբ: Հեղինակի ամենահայտնի աշխատություններից է թվաբանության դասագիրքը, որը եզակի է իր տեսակի մեջ, ունի ճանաչողական մեծ արժեք և լույս է սփռում Հայաստանի պատմության մի շարք ստվերոտ կողմերի վրա: Դասագիրքն ունի հետևյալ բաժինները՝ Խոստումն աշակերտացն, Ընդունելութիւն, Բացդրութիւն, Բազմապատիկք, Դար և կոճատ թուեր, Վեցիագարեակ, Յաղագս հարցման և լուծման, Խրախճանականք¹:

Մեր ուսումնասիրության նյութն են «Յաղագս հարցման և լուծման» և «Խրախճանականք» կոչվող խնդիր-հանելուկները:

բ)Ananias of Shirak (A.D. 600-650c). II His Tract on Easter, (Translated from the Armenian), Byzantinische Zeitschrift, vol. VI, Leipzig, 1987 p., 572-584.

¹ Երևանի պետական համալսարան, Գիտական աշխատություններ, հ. XI, Երևան 1959. Աբրահամյան Ա. «7-րդ դարի հայ գիտնական Անանիա Շիրակացու թվաբանության դասագիրքը»՝ 245-248, բնագիրը՝ 249-274, Հարցումները՝ 269-273, Խրախճանականք՝ 273-274:

Անանիա Շիրակացու Հարցումներն ավելի ամբողջական ներկայացնելու նպատակով հողվածին կցել ենք խնդրագրքում առկա բառերի թեմատիկ ցանկ: Գանաչողական մեծ արժեք ունեցող թվաբանական խնդիրների ընտրանին (Ա., Բ., Ը., ԺԱ., Ի., ԻԱ., ԻԳ.) արտահայտել ենք հավելվածով: Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվում Խրախճանականների՝ Գալուստ Տեր-Մկրտչյանի պատրաստած քննական բնագիրը, որին կցել ենք մի քանի Խրախճանականների (Ե., Զ.) աշխարհաբար թարգմանությունը:

«Խոստումն աշակերտացն» խորագիրը կրող ներածականում հեղինակը համառոտ, սակայն բովանդակալից ներկայացնում է դասագրքի նպատակը, խնդիրները, որոնք արդիական են առ այսօր. «Ձեռնարկությանս նպատակը, ո՛վ իմաստություն սիրողներ և ինձ մոտ գիտություն սովորել ցանկացողներ, պատկերել ձեզ նախնյաց ջանքը՝ համարողության արվեստը՝ իբրև կենդանի ձայն <նվիրված> բարի ուսուցիչների կողմից: Սովորեցե՛ք իմ աշխատությունից, չնայած որ համառոտված է ընդարձակից, որպեսզի հաճախակի կրկնողությամբ ձեզ ձանձրույթ չպատճառեն: Մասամբ <և> հեշտացրի նախնյաց աշխատությունը, որպեսզի հնարավորություն ունենաք սրանով իմանալ հաշվելն ու նրա բովանդակությունը: Եվ արդ՝ ես սկսում եմ ամենացածրից և հասարակից՝ մանուկների և անվարժների <իմացության> մակարդակի համեմատ»²:

Ինչպես կարելի է ենթադրել դասագրքի՝ մեզ հայտնի նյութերի հաջորդականությունից, խնդիրներն առավել բարդ են

² Աբրահամյան Ա., Անանիա Շիրակացու մատենագրությունը (այսուհետև՝ Մատենագրություն), Ուսումնասիրություն, Երևան, 1944, էջ 49:

համարվել, ուստի և զետեղված են ձեռնարկի վերջում: Ա.Գ. Աբրահամյանը ենթադրում է, թե. «Թվաբանական այս աշխատությունը խնդիրներով չի վերջացել, նա շարունակվել է նրա (իմա՝ Անանիա Շիրակացու) «Առեղծվածք»-ով, որոնք դարձյալ պահվել են մեր մի շարք ձեռագրերում և, որքան մեզ հայտնի է, դեռևս չեն հրատարակված³: Անանիա Շիրակացու այդ «Առեղծվածք»-ը պահել են նաև Վիեննայի ձեռագրական ժողովածվում (տե՛ս Տաշյանի ցուցակ, էջ 1057)»⁴:

Խոսքը Վիեննայի հմր. 30՝ Անանիա Շիրակացու երկերի ընդօրինակություն պարունակող գրչագրի մասին է. Շիրակացու 24 հարցում-խնդիրներից և լուծումներից հետո (4ա-8բ) ընդօրինակված Խրախճանականների (8բ-10ա) համար⁵ Տաշյանը ծանոթագրում է. «Խրախճանականք, վեց ուրիշ թուաբանական առեղծուածք (անտիպ, որչափ ծանօթ է)»⁶:

Անանիա Շիրակացու խնդրագիրքը հայտնի է եղել նաև «Անանիայի Շիրակունույ՝ յաղագս կատարման համարողութեան և

³ Մեր որոնումներն այս ուղղությամբ Մետրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերում անարդյունք էին:

⁴ Երևանի պետական համալսարան, Գիտական աշխատություններ, էջ 247:

⁵ Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Կազմեց Յ.Տաշեան, 1895, էջ 174:

⁶ Ն.տ., էջ 1057: Մեր կարծիքով այստեղ վրիպում կա. Գ.Տաշյանը Գարցուններից անմիջապես հետո ընդօրինակված Խրախճանականների համար նկատի ուներ հետևյալը. «Խրախճանականք, այսինքն՝ վեց ուրիշ թուաբանական առեղծուածք», իսկ Ա.Գ.Աբրահամյանն ընկալել է հետևյալ կերպ. «Խրախճանականք և վեց ուրիշ թուաբանական առեղծուածք», արդյունքում Խրախճանական խնդիրներից բացի ունենալով վեց ուրիշ Առեղծվածներ (իմա՝ խնդիրներ), որը չի համապատասխանում Գ.Տաշյանի նկարագրությանը:

կերպից հարցման», «Չամարողական առեղծուածք», «Թուաբանական հանելուկք», «Թուաբանական առեղծուածք» անուններով:

Առաջին հեղինակը, որ հանգամանորեն խոսում է Շիրակացու թվաբանական աշխատությունների մասին, Գրիգոր Մագիստրոսն է: Նա առաջինը գիտակցեց Անանիա Շիրակացու գիտական վաստակն ամբողջացնելու, մոռացությունից փրկելու և ուսումնասիրության նյութ դարձնելու անհրաժեշտությունը: Մագիստրոսը գնահատում է Անանիա Շիրակացուն որպես անխոնջ մտածողի, բեղուն, խիզախ գիտնականի, որը հրաշալիորեն յուրացրեց առաջավոր ազգերի գիտական նվաճումները, ինքնուրույնաբար հարստացրեց յուրացրածը. «Ձգիրս Անանիայ Շիրակունույ, որ բազում աշխատութեամբ և յածաչու խոնջմամբ հաւաքեալ ի զանազան և յքնաբեղուն մատենից, յորում և ենթակայեցեալ են ոչ միայն քառիցն արիեստք, այլ բոլոր էականս խոկմունս...»⁷: Գրիգոր Մագիստրոսը Պետրոս Գետադարծին ուղղված նամակում իր արդարացի անհանգստությունն է հայտնում նման գործչի երկերը մոռացության մատնելու առիթով. «Եւ արդ՝ քանզի սակս մատենին Անանիայի եղև յիշատակ իմաստասիրելոյս մեզ, բեր ոչինչ խրթին եւ անյատաբար... ի բազմաց անփոյթ եղելոյ այսպիսի գործառնութիւնք եւ հանդեսք, որ ոչ երբէք ի ստադին վարժելոց

⁷ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, հրատ. Կ.Կոստանյանցի, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 8. «Անանիա Շիրակացու աշխատությունները, որ շատ չարչարանքով և պրպտումներով լի հոգածությամբ հավաքել է բազմատեսակ և բազմաբեղուն գրքերից, որտեղ ձևակերպված և պարունակված են ոչ միայն չորս արվեստները, այլ մտորումներ բոլոր էակաների մասին...»: Անանիա Շիրակացու երկերի վկայության մասին տես նաև **Դուլուխանյան Ա.**, Եվրոպացի հայագետներ III, Վիկտոր Լանգլուան հայագետ, Երևան, 2003, էջ 41-42:

գրամատիկոսաց եւ քերդողաց հնացեալ»⁸: Գ.Տեր-Սկրտչյանը եզրակացնում է. «Շատ կանուխ, արդեն Ժ. դարում առ նուազն, Շիրակացու գրուածքները մտել էին ժողովածուների մեջ, ենթարկուելով ժողովածուների միւթի ընդհանուր վիճակին, այն է՝ համառօտման, կրճատման, անջատման, յաւելուածների եւ խառնափնդորութեան»⁹: Կարծում ենք՝ ավելորդ չէ նշել, որ թվագրված հնագույն (981թ.) հայերեն թղթ ձեռագրում արդեն առկա են Անանիա Շիրակացու երկերից հատվածներ:

Անանիա Շիրակացու թվաբանության դասագրքի ամենահայտնի մասը խնդիրներն են, որոնց ձեռագիր ընդօրինակությունների մեծ մասը պահպանվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում: Հարցումները հանդես են գալիս մի քանի խմբով.

Ա. խումբ - ՄՄ. 3078, 73ա-76ա, Երուս. 773, էջ 169ա-172ա, 1105, էջ 710ա-714ա, 2071Բ, էջ 79-91

Խորագիրը՝ «Անանիայի վարդապետի Շիրակունւոյ Յաղագս հարցման եւ լուծման»:

Սկիզբ՝ «Այսպէս լուայ ի հօրէ իմմէ...»:

Բ. խումբ - ՄՄ. 1770, էջ 159ա-160ա, ՄՄ. 573, էջ 264ա-265ա

Խորագիրը՝ «Անանիա Շիրակաց[ւ]ոյ րախճան հանելուկք»

Սկիզբ՝ «Կամսարականն Ջուրակ եհար ի Պարսից...»:

⁸ Ն. տ., էջ 9. «Ուրեմն, որովհետև մեր իմաստասիրական խոսքը Անանիայի մատյանի առիթով եղավ, այդ խրթին ու անծանոթ գործ չէ... Շատերի կողմից անուշադրության են մատնվել այսպիսի գործերը, գրվածքները, որոնք քերականագետների և քերթողների համար երբեք չեն կարող հնանալ»:

⁹ **Տեր-Սկրտչյան Գ.**, Անանիա Շիրակացի, Արտատպութիւն 1896 թ. «Արարատի» փետրուար եւ ապրիլ համարներից (Այտուհետև՝ Արտատպութիւն...), Վաղարշապատ, 1896, էջ 12:

Գ. խումբ - ՄՍ. 699, էջ 194ա-204ա, ՄՍ. 503, էջ 177բ-180բ, ՄՍ. 3461, էջ 402ա-407բ, ՄՍ. 8075, էջ 184ա-186բ, Երուս. 68, էջ 1ա-4ա, 835, էջ 531բ-540ա, 936, էջ 184բ-187ա

Խորագիրը՝ «Անանիայի (Շիրակունոյ) Յաղագս կատարման համարողութեան եւ կերպից հարցման»

Սկիզբ՝ «Ձանենայն ասաց իմաստունն, թեպէտ եւ սակաւ ի բազմաց...»:

Անանիա Շիրակացու թվաբանության դասագրքի «Հարցուն»-ներ կոչվող մասն ընդգրկում է 24 խնդիր պատասխաններով, սակայն առանց լուծման եղանակների:

Հայկազյան բառարանագիրներին այս երկը հայտնի չի եղել: «Լոք» բառի բացատրության համար բառարանագիրներն ուղղակի հիշատակում են Անանիա Շիրակացու անունը¹⁰: Գ.Տեր-Սկրտչյանը ենթադրում է, թե բառարանագիրներն այս բառը միջնորդաբար վերցրել են Ս.Լեհացու բառարանից¹¹:

Անանիա Շիրակացու թվաբանական դասագրքի մասին տեղեկություններ հայտնի չեն նաև Գ.Ջարբհանայանին¹²:

Վեց խնդիր առաջին անգամ հրատարակել է Ղ.Ալիշանը «Բազմավէպ» ամսագրում 1853-55 թթ.¹³: Ամբողջությամբ տպագրվել է Երուսաղեմի «Սիոն» ամսաթերթում «Ուսումնականք»

¹⁰ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Հատոր առաջին, Երևան, 1979, էջ 904: Շիրակացու խնդրո առարկա երկը բառարանագիրները չեն հիշատակում նաև բառարանի «Ցուցակ մատենից եւ մատենագրաց...» (էջ 9) բաժնում:

¹¹ Ն. տ., էջ 10:

¹² Տե՛ս **Ջարբհանալեան Գ.**, Հայկական հին դպրութիւն, Վենետիկ, 1897, էջ 458-465:

¹³ «Բազմավէպ», 1853, էջ 48 (Հարցունն Ա.), 144 (Բ.), 335 (Գ.), 1854, էջ 160 (Դ.), 256 (Ե.), 1855, էջ 304 (Զ.):

բաժնուն «Ջարցմունք թուաբանականք» խորագրով 1866թ.-ին¹⁴ համառոտ առաջաբանով, որտեղ կարևորվում է հատկապես այս խնդիրների միջոցով երեխաներին ոգևորելու անհրաժեշտությունն ու հրատապությունը. «[Անանիա Շիրակացի]... ունի ուրիշ մանր գրուածքներ ևս համարողութեան վերաբերեալ, Յաղագս համարողութեան և կերպից հարցման անունով, որոնք, անշուշտ ազգին նորահասակ տղոց գրգիռ մի տալու համար նոյն գիտութեան հետևելու, զուարճալի հարցմունքներով զանազան օրինակներ մէջ կը բերէ՝ թողլով անոնց լուծունը իւրաքանչիւր կարդացողին: Մենք եւս սոյն նպատակաւ ազգային դպրոցներու համարողութեան դասու աշակերտաց ճաշակնին գրգռելու դիտմամբ՝ նոյն գիտական վարդապետին հարցմունքները Յանդէսիս միջոցաւ կառաջարկենք՝ անփոփոխ պահելով իւր գրիչը, որ միանգամայն կրնայ օրինակ լինել պարզ և մաքուր հայկաբանութեան»¹⁵:

Ջարցումների գիտական բնագիրը երկու գրչագրի (ՄՍ ձեռ. թիվ 699 և 3078) համեմատությամբ կազմել է Գալուստ Տեր-Մկրտչյանը և հրատարակել «Արարատ»-ում 1896թ.-ին փետրվարի և ապրիլի համարներում (էջ 143-56, 199-208), որից և արտատպվել է: Գիտական արժեք ունեն հայագետի ուշագրավ ծանոթագրությունները, որոնք ելակետային էին Անանիա Շիրակացու Ջարցումների, կենսագործունեության վերաբերյալ հետագա շրջանի ուսումնասիրությունների համար:

¹⁴ «Սիոն» Երուսաղեմի, 1866, էջ 78 (Ջարցմունք Ա., Բ.), 94 (Գ.-Զ.), 108-109 (Է.-ԺԲ.), 157-8 (ԺԳ.-ԺԶ.), 174-9 (ԺԷ.-ԻԴ.):

¹⁵ Ն. տ., էջ 77-78:

խնդիրներից չորսը ռուսերեն թարգմանությամբ լույս է ընծայել պրոֆ. Գ.Խալաթյանը «Армянский эпос в истории Армении Моисея Хоренского» աշխատության մեջ¹⁶:

Հետագայում Հ.Ա.Օրբելին ամբողջ խնդրագիրքը թարգմանել է ռուսերեն ու հրատարակել 1918թ.՝ կցելով արժեքավոր ծանոթագրություններ¹⁷: Հ.Օրբելին թարգմանության առաջաբանում գնահատում է Անանիա Շիրակացուն որպես բացառիկ մաթեմատիկոսի, տիեզերագետի, տոմարագետի, որ հատուկ տեղ է զբաղեցրել հին շրջանի մեր հեղինակների շարքում իր հետաքրքրությունների շրջանակով պայմանավորված: Ակադեմիկոսն արել է այնպիսի կանխատեսումներ, որոնք ավելի ուշ հաստատվեցին նոր գրչագիրների ի հայտ գալով. «Незначительный объем задачника и однообразие подбора задач дают основание полагать, что это-лишь отрывки учебника, включавшего, судя по его заглавию и обрывку предисловия, и теоретическую часть»¹⁸: Ակադեմիկոսն ուղղել է նաև Գ.Տեր-Սկրտչյանի հրատարակած 15-րդ և 24-րդ խնդիրներում տեղ գտած վրիպումները:

Հ.Օրբելու ռուսերեն թարգմանությունը վերահրատարակել է պրոֆ. Մելիքսեթ Բեկը «К истории точных наук в Армении и Грузии» ուսումնասիրության հավելվածում¹⁹: Հ.Օրբելու պատրաստած բնագրից հայերեն աշխարհաբար

¹⁶ Проф. **Г.Халатянц**, Армянский эпос в истории Армении Моисея Хоренского, Москва, 1896, ст. 223, 225.

¹⁷ **Орбели И.А.**, Вопросы и решения вардапета Анании Ширакаци армянского математика VII века (այսուհետև՝ Вопросы и решения...), Петроград, 1918. Հ.Օրբելու կազմած բառերի թեմատիկ ցանկը մասնակի փոփոխություններով տե՛ս սույն հոդվածի վերջում:

¹⁸ Ս. տ., էջ 10:

¹⁹ **Меликсет-Беков Л.М.**, К истории точных наук в Армении и Грузии, 1930, ст. 224-232.

թարգմանությունն արել է Գ.Պետրոսյանը «Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում»²⁰:

Անանիա Շիրակացու երկերի համակարգման և գիտական հրատարակման գործում կարևոր դեր ունի Ա.Գ.Աբրահամյանը²¹:

22 խնդիրների արևմտահայ թարգմանությունն արել է Պ.Ատրունին և գրաբար բնագրերի հետ զետեղել «Ամբողջական դասընթաց թվաբանական և գործնական երկրաչափության» աշխատության մեջ²²:

Թվաբանական լրիվ և թերի ութ խնդիրներ հրատարակել է Ա.Մաթևոսյանը «Նորահայտ պատառիկներ Անանիա Շիրակացու թվաբանության դասագրքից» հոդվածում: Ա.Մաթևոսյանի եզրակացությունը հետևյալն է. «Սրանք նույն խնդիրներն են, արժեքների որոշ տարբերությամբ»²³: Ա.Գ.Աբրահամյանը կարծում է, թե սրանք այլ հեղինակի խմբագրման արդյունքում ստեղծված խնդիրներ են, քանի որ տարբեր են ոչ միայն բնագրերը, այլ նաև խնդիրների լուծումները: Էսպես նոր են միայն երեք խնդիր, որոնց աշխարհաբար թարգմանությունը Ա.Գ.Աբրահամյանը զետեղել է ծանոթագրությունների բաժնում²⁴:

²⁰ **Պետրոսյան Գ.Բ.**, Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում, Երևան, 1959, հավելված հմր. 1, էջ 263-69:

²¹ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա.Գ.Աբրահամյանի և Գ.Բ.Պետրոսյանի, Երևան, 1979:

²² **Ատրունի Պ.**, Ամբողջական դասընթաց թվաբանության և գործնական երկրաչափության, Կոստանդնուպոլիս, 1922, էջ 665-666:

²³ «Լրաբեր», 1974, հմր. 6, էջ 65-68:

²⁴ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, ծնթ. 46, էջ 338:

Անանիա Շիրակացու երկերի գրչագիրների և տպագրերի մանրամասն նկարագրություն-քննությունն արել է Զ.Անասյանը²⁵:

Անանիա Շիրակացու երկերի ամբողջական գիտական հրատարակությունն արվել է 2005թ.-ին՝ «Մատենագիրք Հայոց» մատենաշարի շրջանակներում: Հեղինակի երկերը ներկայացված են հետևյալ՝ Ինքնակենսագրութիւն, Թուաբանական աշխատութիւններ, Չափագիտական աշխատութիւններ, Տոմարագիտական աշխատութիւններ, Տիեզերագիտական աշխատութիւններ և Այլ բաժիններով, Գեորգ Տեր-Վարդանյանի գիտական առաջաբանով, մատենագիտությամբ²⁶:

Անանիա Շիրակացու խնդիրների վերաբերյալ առանձին ակնարկներ և գնահատականներ արվել են հեղինակի կենսագործունեության ուսումնասիրության սահմաններում²⁷:

Անանիա Շիրակացու խնդիրները ուսումնասիրվել են նաև բնագիտական կտրվածքով: Բ.Բահաթրյանը քննում է հին եգիպտական, ժողովրդական հաշվումների և Անանիա Շիրակացու խնդիրների լուծման եղանակների զուգահեռները²⁸:

²⁵ **Անասեան Յ.**, Հայկական մատենագրութիւն, հտ. Ա, Երևան, 1959, էջ 731-774:

²⁶ Մատենագիրք Հայոց, Դ. հատոր, Է. դար, Անթիլիաս-Լիբանան, 2005. առաջաբանը՝ Գ.Տեր-Վարդանյանի, էջ 589-590. մատենագիտությունը՝ էջ 590-592, Անանիայի վարդապետի Շիրակունւոյ [Յաղագս] հարցման՝ էջ 618-623, Խրախճանականք (ութ խնդիր)՝ էջ 624-625:

²⁷ **Արեղյան Ս.**, Երկեր, հ. Գ., Երևան, 1968, էջ 422: Հայ մշակույթի նշանավոր գործիչներ, Երևան, 1976, էջ 114-115:

²⁸ **Բահաթրյան Բ.**, Տեղեկագիր ՀՍԽՄ Գիտությունների ինստիտուտի, «Հին եգիպտական, Անանիա Շիրակացու և ժողովրդական հաշվումների ու խնդիրների նմանությունը» (զեկուցված է ՀՍԽՄ Գիտությունների ինստիտուտի ֆիզիկո-մաթեմատիկական սեկցիայում 1931 թ. ապրիլի 19-ին), Երևան, 1931, էջ 249-263:

Գ.Բ.Պետրոսյանը «Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում» ուսումնասիրության մեջ «Անանիա Շիրակացու թվաբանական խնդիրների լուծման եղանակները» գլխում առաջարկած խնդիրների լուծման «կեղծ դրության», «կարմիր թվերի», ինվերսիայի և այլ եղանակների քննության միջոցով գալիս է հետևյալ եզրակացության. «Անանիա Շիրակացին կիրառել է խնդիրների լուծման այլ եղանակ և այլ բանաձևեր»²⁹:

Հարցումներից շատերը բացառիկ կարևորություն ունեն Հայաստանի տնտեսական կյանքի ուսումնասիրության համար. նրանց միջոցով են ճշտվում «բաժ»-ը՝ որպես մաքսային միավոր, «կայք» և «փաս» չափման միավորները, որոնք լայնորեն կիրառվել են Հ.Սանանոյանի կողմից Հայաստանի տնտեսական կյանքի խնդրահարույց հարցեր պարզաբանելու համար³⁰:

Անանիա Շիրակացու Հարցումներին հաջորդել են վեց Խրախճանականները³¹, որոնք շարադրման ոճով և բովանդակությամբ տարբերվում են Հարցումներից: Սրանք առօրյակենցադային թեմաներով գվարճական խնդիրներ են, որոնք, ուսումնասիրողների ենթադրությամբ, տարածված են եղել ոչ միայն Հայաստանում³²:

²⁹ **Պետրոսյան Գ.**, Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում, էջ 91:

³⁰ **Սանանոյան Հ.**, Երկեր, Դ., Հայաստանի արքունի հարկերը մարգպանության շրջանում, Երևան, 1981: Նույնի՝ Նյութեր հին Հայաստանի տնտեսական պատմության (I և II հատորներ), էջ 127, 149:

³¹ Ա.Գ.Աբրահամյանը ենթադրում է, որ այդ խնդիրները նույնպես ամբողջական չեն և շարունակվել են, տե՛ս մեր հոդվածի ծնթ. 6:

³² **Պետրոսյան Գ. Բ.**, Մաթեմատիկան Հայաստանում և միջին դարերում, էջ 93:

Խորագիրը հետևյալն է. «Գրեմ ձեզ խրախճանականս, յորժամ ի կերակուրս եւ յընպելիս զուարճանայք եւ կամիք խօսել բանս զուարճացուցիչս եւ ծիծաղականս»:

Անանիա Շիրակացուն վերագրվող վեց խրախճանականներն ունեն նույն սկսվածքը և, որպես կանոն, կայուն ավարտ.

Սկիզբ՝ «Ասասջիր ցընկերն քո, թե...»: Վերջ՝ «Ապա թե անհմուտ ոք լինիցի...» (Ա., էջ 233):

Սկիզբ՝ «Եթե ի գիտնոց ոք լինի ընկերն քո, արագ իմանայ...»: Վերջ՝ «Ապա եթե յախմարաց ոք իցե՝ դեգերունն նորա և անգիտութիւն ոչնչիդ քեզ ուրախութիւն լինի» (Բ., էջ 233):

Սկիզբ՝ «Եթե թուող ոք է ընկերն քո, երագ կարե գիտել...»: Վերջ՝ «Ապա եթե տգետ ոք իցե, նորա դեգերունն թուովքն քեզ ուրախ առնե» (Ե., էջ 234):

Վեց խրախճանականների քննական բնագիրը ժամանակին պատրաստել էր Գ.Տեր-Մկրտչյանը Մաշտոցի անվան Մատենադարանի հմր. 699 և 3078 ձեռագրերի համեմատությամբ, սակայն չի հրատարակել³³: Բնագրի առաջաբանն ու ծանոթագրությունները չեն պահպանվել³⁴: «Արարատ»-ում լույս տեսած Անանիա Շիրակացու Հարցումների վերաբերյալ հողվածում Գ.Տեր-Մկրտչյանը խոստանում է առաջիկայում խոսել նաև խրախճա-

³³ Այդ բնագիրը մասնակի փոփոխություններով զետեղել ենք մեր հողվածի վերջում՝ որպես հավելված:

³⁴ Տես Մաշտոցի անվան Մատենադարան, Գալուստ Տեր-Մկրտչյանի դիվան, էջ 7-9: Ա.Գ.Աբրահամյանը որևէ ակնարկ չի անում Գ.Տեր-Ստեփանյանի պատրաստած բնագրի վերաբերյալ: Մեր կարծիքով նա ուղղակի տեղյակ չի եղել այս բնագրի գոյության մասին: Տես նաև Գ.Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, Գիրք Ա., Երևան, 1979, էջ 249:

նականների մասին, սակայն մեզ անհայտ պատճառներով այդ հոդվածը չի տպագրվում³⁵:

Ա.Գ.Աբրահամյանը վեց Խրախճանականների բնագիրը պատրաստել է ՄՍ. 699, 3461 գրչագիրների համեմատությամբ և հրատարակել Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ»-ի XI հատորում³⁶ : Ավելի ուշ ՄՍ. 3457 գրչագրում հայտնաբերեց յոթերորդ խնդրի վերջին երկու տողը, ութ և իններորդ Խրախճանականները: Ա.Գ.Աբրահամյանը ենթադրում է, թե՝ «հավանական է, որ «Խրախճանական»ներն իննից դեռ շարունակվել են»³⁷: Աներկբա Անանիա Շիրակացունը համարելով առաջին վեց Խրախճանականները, այնուամենայնիվ ութ Խրախճանական խնդիրներ Ա.Գ.Աբրահամյանը հրատարակել է Անանիա Շիրակացու «Մատենագիտության» մեջ³⁸: Յոթ և իններորդ Խրախճանականները ավելի ուշ վերագրվել են ԺԴ. դ. Մխիթար Երզնկացուն (ԺԴ. դ.)³⁹, վեցերորդ և ութերորդ խնդիրները համընկնում են, իսկ երրորդ խնդրի բնագիրը, ըստ Ա.Գ.Աբրահամյանի, աղճատված է:

³⁵ Տե՛ս **Տեր-Սկրտչյան Գ.**, Արտատպութիւն..., Անանիա Շիրակացի, էջ 16:

³⁶ Երևանի պետական համալսարան, Գիտական աշխատություններ, հ. XI, էջ 273-274:

³⁷ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա.Գ.Աբրահամյանի և Գ.Բ.Պետրոսյանի, էջ 65-66:

³⁸ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, էջ 233-235:

³⁹ **Պետրոսյան Գ.Բ.**, Միջնադարյան Հայաստանի մաթեմատիկայի պատմությունից (հոդվածներ և հրապարակումներ), “Занимательные загадки Анания Ширакаци”, Երևան, 1986, էջ 158-159.

Հինգ խրախճանականների ռուսերեն թարգմանությունն արել է Գ.Պետրոսյանը⁴⁰:

Գ.Պետրոսյանը երկրորդ և հինգերորդ խրախճանականներն աշխարհաբար թարգմանել է «Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում» աշխատության մեջ⁴¹:

Յ.Տաշյանը նշում է Անանիա Շիրակացու «խրախճանականք»-ի անժամոթ լինելու մասին⁴²: Այս խնդիրների մասին հիշատակություն ունի նաև Ֆինկը Տյուբինգենի համալսարանի մատենադարանի ցուցակում (հմր. 94), խոսում է վեց խրախճանականների մասին⁴³:

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ

Անանիա Շիրակացու խնդիրներն ունեն ճանաչողական արժեք. նրանց բովանդակությունը գերազանցապես կապվում է հեղինակին շրջապատող իրականության, Հայաստանի, Բյուզանդիայի պատմության դրվագների հետ: Գործողությունները հիմնականում կապվում են Շիրակ աշխարհի հետ, իսկ կենտրոնական գործող անձինք Կամսարական իշխաններն են (Ա., Է., Ը., Թ., Ի., ԻԱ. Հարցումներում):

Այս մասին ուշագրավ նկատողություն ունի Գ.Տեր-Մկրտչյանը. «Այս թուաբանական խնդիրների ժողովածուն կարելի է համարել Կամսարականների գիրքը, թերևս գրուած նաև մի Կամսարականի համար: Եթե Մամիկոնեանների, Բագրատունիների, Արծրու-

⁴⁰ Նույն տեղում, էջ 158:

⁴¹ **Պետրոսյան Գ.Բ.**, Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում, էջ 92-93:

⁴² Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Կազմեց Յ.Տաշեան., էջ 1057:

⁴³ Տե՛ս Մատենագրություն, էջ 47:

նիների նման չունեցան նրանք իրենց պատմիչը, այս ժողովածուն մասամբ լրացնում է այդ պակասը»⁴⁴:

Որոշ խնդիրների նյութն Անանիա Շիրակացու լսած զրույցներից են, օրինակ՝ առաջին Հարցման համար ակնարկում է. «Այսպես լուայ ի հաւրէն իմմէ...» (Ա., էջ 227):

Երրորդ Հարցման համար էլ նշում է, թե լսել է իր վարդապետից, այն է՝ Տյուքիկոսից. «Այսպես լուայ ի վարդապետէն...» (Գ., էջ 228):

Այլ խնդիրների նյութը հեղինակի առօրյա կյանքից են, որոնց գործող անձը ինքը՝ հեղինակն է.

«Հազար կայր իմ ի պարտիզի...» (Զ., էջ 228):

«Ես ի Մարմետի էի» (Է., էջ 228):

«Լօք մի կալան ի Մարմետի ի գետն յերասխ, եւ ես կշռեցի զնա» (Ժ., էջ 228):

«Նաւակ մի առնել կամէի եւ իմ դրամկունք իսկ կային եւ այլ ինչ ոչ կայր» (ԺԱ., էջ 229):

«Ոմն յաշակերտաց ինոց առեալ խնձորս գեղեցիկս ի Խարայ, գայր՝ ընծայեցուցանել ինձ» (ԺԴ., էջ 229):

Որոշ խնդիրների նյութը վերցրել է հայ ժողովրդի պատմությունից: Արշավիր, Ջորակ, Հրահատ, Ներսեհ, Սահակ Կամսարականներին խնդիրներում ամենաշատ հանդիպող պատմական անձինք են: Հայտնի է, որ Ջորակը, Ներսեսը և Սահակը Արշավիր Կամսարականի որդիներն էին՝ ռազմական գործերում աչքի ընկած, հավանաբար նաև ժողովրդի մեջ տարածված զրույցների կենտրոնական հերոսներ դարձած: Այդ վկայում է ինքը՝ հեղինակը. «Այսպես լուայ ի հաւրէն իմմէ, եթէ...» (Հարցում Ա., էջ 227):

⁴⁴ **Տեր-Մկրտչյան Գ.**, Արտատպութիւն..., էջ 16:

Արշավիր Կամսարականը եղել է Վարդան Մամիկոնյանի փեսան՝ Վարդանույշի ամուսինը: Ղազար Փարպեցու վկայությամբ նա է վերադարձնում Յունաց կողմերը քաշված Վարդան Մամիկոնյանին: Մասնակցել է մի շարք կարևոր ռազմական գործողությունների: Արշավիր Կամսարականն Ավարայրի ճակատամարտից հետո այլ հայ նախարարների հետ գերի է տարվել, սակայն 462թ. վերադարձել է Հայաստան: Ջորակը, Հրահատը և Ներսեհը Արշավիր Կամսարականի որդիներն են՝ Վարդան Մամիկոնյանի թոռները, երեքի մասին էլ խոսում է Անանիա Շիրակացին:

Ջորակ Կամսարականը հիշատակվում է Ա. հարցման մեջ: «Ի ժամանակի պատերազմացն հայոց ընդ պարսս, սաստիկ քաջութիւնք լինէին ի Կամսարականէն Ջաւրակայ» (Ա., էջ 227)⁴⁵: Անանիա Շիրակացին, ինչպես վերը նշվեց, այս զրույցը լսել է իր հորից՝ Հովհաննես Շիրակացուց. խոսքը Պարսից դեմ հայերի մղած ապստամբության մասին է: Ղևոնդ Ալիշանը ապստամբության թվականը համարում է 571-ը: «Եւ մնացեալքն անկանէին փախստեայ ի Նախճուան» արտահայտությամբ պարզվում է, որ հայ-պարսկական ընդհարումները տեղի են ունեցել Նախճուանից արևմուտք՝ Այրարատում⁴⁶:

Կամսարական Ներսեհը, Հրահատը և Սահակը⁴⁷, որոնք գործուն մասնակցություն են ունեցել 481-484 թթ. Վահան Մամի-

⁴⁵ Բոլոր մեջքերումները Ա.Գ.Աբրահամյանի պատրաստած բնագրից (տե՛ս Մատենագրություն, էջ 227):

⁴⁶ **Տեր-Մկրտչյան Գ.**, Արտատպութիւն..., էջ 14:

⁴⁷ Սահակ Կամսարականը հովանավորել է նաև շինարարական աշխատանքներ. կառուցել է Սուրբ Սարգսի վկայարանը՝ 486-500 թթ., վերաշինել Տեկորի եկեղեցին (տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ. Երևան, 1948, էջ 335-334):

կոնյանի գլխավորած ազատագրական կռիվներին, հիշատակված են նաև ամենածավալուն՝ ԻԱ. հարցման մեջ, որի մասին խոսք կլինի տեղում:

Հարցումներում բացահայտվում են նաև Կամսարականների ներքին կյանքի որոշ դրվագներ. հեղինակը խոսում է իշխանական կալվածքների, որսատեղիների մասին (Է., Ժ., Թ., Ի.):

Անանիա Շիրակացու Հարցումները պարունակում են հետաքրքիր նյութեր ռազմական, որսորդական կենցաղի վերաբերյալ: Գիտնականն օգտագործում է ռազմական եզրույթներ, կոչումներ և պաշտոններ⁴⁸: Որոշ խնդիրներում նկարագրված են ռազմական գործողություններ, որոնց ընթացքում, ասենք, Ջորակ Կամսարականը «յարձակեալ (այսուհետև՝ բոլոր ընդգծումները մերն են՝ Լ.Յ.) ի վերայ զաւրացն պարսից» (Ա., էջ 227), «ի հետ մտեալ՝ հարկաներ յերկրորդումն զչորրորդ մասն զաւրումն» (Ա., էջ 227), « ի ժամանակի ապստամբութեանն հայոց» (Ը., էջ 228), «Զկնի ժե. աւուր իմացեալ Կամսարականին Զաւրակայ հետամտիկս առաքէր զկնի՝ ունել զնա» (Յ. Ը., էջ 228):

Ի. Հարցման մեջ հեղինակը նշում է որսի մի տեսակի մասին, որ կոչվում է «բուն կանգնել»⁴⁹. որսատեղին շրջապատվում էր բազմաթիվ մարդկանցով և շներով, որոնք խրտնեցնում են որսը դեպի բունը կամ դարանատեղին: Նույն Ի. Հարցման մեջ Շիրակացին նկարագրում է որսի պահը. «Եւ նորա իւրովի եկեալ հանդերձ եղբայրաւքն և ազատաւքն մտեալ կոտորէին զերեսն: Եւ եղեն կալեալք ի թակարդի հասարակ երեոցն, եւ եղեն

⁴⁸ Թեմատիկ բառացանկը տե՛ս վերջում:

⁴⁹ Գ.Պետրոսյանի թարգմանությունն այլ է. «Շիրակի և Արշարունիքի տեր Ներսեհ Կամսարականի որսատեղին գտնվում էր Արտին լեռան ստորոտում» (Մաթեմատիկական Հայաստանում հին և միջին դարերում, էջ 267):

սպանանեալն նետիւ չորս մասն, և զմատաղերէն ողջ կալան, որ եղև ԺԲ. մասն, և եղեն մեռեալք ի նիզակէ ՅԿ. երէ» (Ի., էջ 230):

Ե. և ԻԱ. Հարցումները զինվորական կյանքից են. հեղինակը խոսում է սպայական կազմին հատկացված ռոճիկի մասին, որը բաշխվում է հետևյալ կերպ՝ ըստ սպաների աստիճանների. «Չորս մասն *պատուաւորացն*, Ը. մասն *աւագացն* և ԳԾ. կենդինար այլ *հեծելոցն*» (Հարցում Ե., էջ 228):

«Պատուաւոր» եզրույթը հաճախ օգտագործում է Եղիշեն, որ կնշանակի պատիվ ունեցող. Փիլոնի հայերեն թարգմանությունից փոխառված հատվածում Եղիշեն նախարար բառը փոխարինում է պատուաւոր-ով⁵⁰: Գ.Տեր-Սկրտչյանը ենթադրում է, թե տիտղոսի ծագումը պետք է որ կապ ունենա պատվանշանի հետ, ինչը Եղիշեի մոտ կոչվում է «պատիւ վարսին» կամ «պատիւ արքունի»:

Զինվորական պաշտոնների հիշատակման առումով հետաքրքիր է նաև ԻԱ. Հարցումը: Բահլուճների⁵¹ դեմ մղած հաղթական պատերազմում Ներսեհ Կամսարականը առած գերիների յոթերորդ մասն ընծայում է պարսից *թագավորին*, ութերորդ մասը՝ *դարիկապետին*, տասնչորսերորդ մասը՝ *սպայապետին*, որին *խորավարան* են կոչում: Գերիների մնացած տասներեքերորդ մասը՝ Հրահատ եղբորը, այլ տասներեքերորդ մասն ընծայում է Վաղարշապատի եկեղեցիներին:

⁵⁰ **Տեր-Սկրտչյան Գ.**, Արտատպութիւն..., էջ 14:

⁵¹ Գ. Տեր-Սկրտչյանն այլ մեկնություն է առաջարկում «յաղթել պատերազմաւ Բահլիճացն» արտահայտության համար: «Ես հասկանում եմ Բահլի /Առաւօտին/ բնակիչներին և ոչ թէ հիւսիսային /կովկասեան/ լեռնականներին...: Բոլորովին այլ է, մեր կարծիքով, Փաւստոսի յիշած «Բաղասճաց» վաչկատուն ցեղը» (տես **Տեր-Սկրտչեան Գ.**, Արտատպութիւն..., էջ 17):

Այս խնդրի մեջ հետաքրքիր են «դարիկապետ», «սպայապետ», «խորավարան» պաշտոնները:

«Դարիկապետ» կամ «դարիկպետ», հանդիպում է նաև «գարիկապետ» կամ «գարիկպետ» ձևով. պարսկերեն բառ է, որ բառացի նշանակում է «պալատի պետ» («глава дворца») ⁵²: Հայկազյան բառարանագիրներին հայտնի չէ: Հայ մատենագրության մեջ հանդիպում է նաև Սեբեոսի պատմության մեջ՝ որպես հատուկ անուն: «Եւ արծակեալ նորա զեղբայր իւր *Գարիքպետ* (ընդգծումը մերն է՝ Լ.Հ.), զի երթալ ծմերեսցէ ի Դըւնի եւ ապա կապեսցեն զասպետ եւ առեալ գնացին» ⁵³:

Հր.Աճառյանն այն համարում է «պարսկական պետական մի աստիճան, նորագյուտ բառ»: Ջուզադրում է «կռոզպետ» բառի հետ ⁵⁴, որ նշանակում է «գլուխ արուեստաւորաց արքունի» ⁵⁵:

«Սպայապետն ⁵⁶, զոր խորավարանն կոչեն» արտահայտության մեջ խորավարան անվանումը Գ.Տեր-Սյրտչյանին անհայտ է թվում. արդյոք տիտղոս է, թե ազգանուն:

Բառի հիմնավոր բացատրությունը գտնում ենք Ն.Ադրնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» աշխատության մեջ. «Սասանյանների ժամանակ պարսկական պետությունը բաժանված էր չորս մասի կամ երկրամասի՝ Արևելյան, Արևմտյան,

⁵² **Орбели И.**, Вопросы и решения..., ст. 63:

⁵³ Պատմութիւն Սեբեոսի եպիսկոպոսի ի Հերակլն, Կոստանդնուպոլիս, 1851, էջ 160: Հ.Օրբելին ենթադրում է, թե Սեպեոսի երկուն գրչական սխալ է եղել (տես Вопросы и решения..., ст. 63):

⁵⁴ Տե՛ս **Աճառյան Հր.**, Հայերէն արմատական բառարան, հ. Ա., Երևան, 1971, էջ 523:

⁵⁵ Նույնի, Հայերէն արմատական բառարան, հ. Գ., Երևան, 1973, էջ 672:

⁵⁶ Ա.Գ.Աբրահամյանի բնագրում՝ «սպասայապետ», տես Մատենագրություն, էջ 230:

Հարավային և Հյուսիսային. **kust** ×**orāsān**, ×**orāwārān**⁵⁷, **nēmros**, **apā×tar**»⁵⁸:

Հ. Օրբելին սպայապետ բառի հետ կապված մի ուշագրավ ծանոթագրություն է անում, որը լույս է սփռում բնագրի անհասկանալի հատվածի վրա. ըստ ականավոր հայագետի՝ այստեղ պետք է սրբագրել ընդամենը մեկ տառ՝ «սպայապետն, զոր խորավարան կոչեն»-ի փոխարեն պետք է լինի «սպայապետն, զոր [սպայապետն] խորավարան/ին կոչեն». «Спайапет Хораварана - один из четырех главных военачальников сасанидской монархии, военачальник Западного края, в рукописях «спайапет, которого именуют Хоравараном», вместо: «спайапет которого именуют (спайапетом) Хораварана». Для исправления текста нужно заменить одну букву»⁵⁹:

Անանիա Շիրակացին ԺԳ. Հարցման մեջ օգտագործում է խարայ հատուկ անունը. «Ոմն յաշակերտաց իմոց առեալ խնճորս գեղեցիկս *ի խարա*, գայր՝ ընծայեցուցանել ինձ» (ԺԳ., էջ 229):

Ա.Գ.Աբրահամյանին այս անվանումն անհայտ է թվում. նրա կարծիքով սա նույն խորավարանն է. «խարա կամ խորավարան պարսկերեն նշանակում է «Արևելյան շրջան», այն Սասանյան Պարսկաստանի ինչ-որ վայրի անուն է»⁶⁰:

Այս Հարցումը ուշագրավ տեղեկություններ է պարունակում նաև գերեվարության վերաբերյալ՝ որպես ստրկության հիմնական աղբյուրի և ցույց է տալիս, որ ազնվականներից բացի ստրուկներ

⁵⁷ Աշխարհացույցի տպագրված տեքստում՝ խորայարանք. տես Ադոնց Ե., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, ծնթ. 1, Երևան, 1987, էջ 243:

⁵⁸ Նույն տեղում:

⁵⁹ **Օրбели И.**, Вопросы и решения..., ст. 68:

⁶⁰ **Աբրահամյան Ա.**, Մատենագրություն, ծնթ. 32, էջ 337:

ունեցել է նաև եկեղեցին. «Եւ եկեալ ի Վաղարշապատ, տայ ի սուրբ եկեղեցիսն զԺԶ. մասն գերւոյն»⁶¹: Գ.Տեր-Սկրտչյանն այս ակնարկին հպանցիկ է անդրադառնում՝ համեմատելով այն Ղազար Փարպեցու հիշատակած Վահանի ուխտի հետ. «Եւ գային ի քաղաքն Վաղարշապատ... կատարէին զուխտս եւ զնուէրս ի սուրբ եկեղեցւոջն կաթողիկէի եւ ապա յիւրաքանչիւր տեղիս նահատակելոց կուսանաց»⁶²:

«Ինչպես աշխարհի բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում ստրկության աղբյուրներն էին՝... պատերազմը և գերեվարությունը: Պատերազմի միջոցով ռազմագերիների ծեռք բերման և ստրակցման այդ եղանակը այնքան բնական և օրինական է համարվել, որ այն կարգավորվել է ոչ միայն իրավական, այլև եկեղեցական հատուկ կանոններով»⁶³:

Մխիթար Գոշի Դատաստանագրքում որոշակիորեն կանոնակարգված է գերիների ու ավարի նվիրատվությունը, ընդ որում՝ դրանց որոշակիորեն սահմանված մասը հասել է եկեղեցուն. «Գերոյն և աւարոյն կէսն արքային լիցի և կէսն զօրացն: Իւրաքանչիւր իշխանքն զնոյն բաժին արասցեն և տասանորդս տացեն յեկեղեցին:

Իսկ եթէ չիցէ արքայ ընդ զօրսն, այլ իշխանք միայն զօրօք իւրեանց, նոյնպէս ոսկին արքային լիցի, և գերին և աւարն՝

⁶¹ Տես Սանանդյան Հ., Երկեր, Դ., Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 372:

⁶² Տեր-Սկրտչյան Գ., Արտատպութիւն..., էջ 17:

⁶³ Հակոբյան Ա., Հայ գյուղացիության պատմություն, Երևան, 1957, էջ 221:

տասանորդս արքայի, իսկ յեկեղեցի՝ ի յիսնէն մինն ըստ Օրինացն»⁶⁴:

Ուրեմն՝ ռազմագերիների 1/10-1/50 մասը որպէս ստրուկ⁶⁵ հասնում էր եկեղեցուն, որոշակի սահմանված մասեր էլ՝ համապատասխանաբար զորապետերին, զորքին:

Անանիա Շիրակացու Յարցումները պարունակում են նաև մաթեմատիկական, առևտրական և ֆինանսական (առնել զբաժ, կշիռ, հանել զբաժ, հռոզ, վաճառական, վաճառել և այլն), չափ և դրամ ցույց տվող (դահեկան, լիտր, կայթ, կենդինար, մղոն, փաս, կարաս) եզրույթների շերտ⁶⁶, որը նույնպէս հետաքրքրություն է ներկայացնում: Այս միավորներից որոշների մանրամասն բացատրությունները գտնում ենք «Անանիայի Շիրակայնոյ համարողի Յաղագս կշռոյ, կշռոց եւ կշռորդաց»⁶⁷, «Մղոնաչափք» աշխատությունների մեջ: Չափի և կշռի միավորների ուսումնասիրությունը շատ կողմերով լույս է սփռում Հայաստանի տնտեսական կյանքի տարբեր կողմերի վրա: Յարցումների արժեքն այս կտրվածքով շատ բարձր է գնահատվել ակադեմիկոս Յ.Մանանդյանի կողմից, որը տարբեր աշխատություններում անդրադարձել է Անանիա Շիրակացու երկերում առկա չափերին, կշիռներին⁶⁸:

Բացառիկ արժեք է ներկայացնում ԻԳ. Յարցումը, որտեղ օգտագործված է «կայթ»-ը որպէս գարու չափման միավոր. «Շտեմարան մի էր իմ, յորում կայր գարի կայթ Մ.: Սկներ մտին եւ

⁶⁴ Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, Աշխատասիրությամբ խոսրով Թորոսյանի, Երևան, 1975, էջ 303:

⁶⁵ Տես **Հովհաննիսյան Ջ.**, Հայ գյուղացիության պատմություն, էջ 223:

⁶⁶ Ցանկը տե՛ս հոդվածի վերջում:

⁶⁷ **Աբրահամյան Ա.**, Մատենագրություն..., էջ 254:

⁶⁸ **Մանանդյան Ջ.**, Երկեր, հ. 2., О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Երևան, 1985, ст. 133-134: Նույնի՝ Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում, էջ 251, 281:

զամենայն գարին կերան: Ես մուկն մի կալայ ի նոցանէ եւ պատուհասեցի: Նա խոստովանեաց եւ ասէ. Յիս Զ. հատ եհաս: Արդ, գիտեա՛, թէ ընդ ամենայնն քանի՞ հատ լեալ էր յշտեմարանին եւ կամ քանի՞ մկունքն, որ կերան» (ԻԳ., էջ 230):

Այս խնդրի միջոցով պարզվում, իսկ Շիրակացու այլ գործերի միջոցով հաստատվում է կայթի չափը, այն է՝ 19 կգ 584 գր. «Приведенное свидетельство Анании, устанавливающее точный размер древнеармянского «кайт»-а, крайне ценно»⁶⁹:

Մեկ այլ՝ «փաս» կոչված չափման միավորի մասին խոսվում է ԺԴ. Հարցման և Զ. Խրախճանականի մեջ: Ա.Գ.Աբրահամյանը ԺԴ. Հարցման աշխարհաբար թարգմանության մեջ իրավացիորեն օգտագործել է «փաս» ձևը, սակայն Զ. Խրախճանականի բնագրի թարգմանության մեջ փոխում է «փարչ» բառով⁷⁰:

«Փաս» բառը նշված է հայկազյան բառարանագիրների մոտ, սակայն «փարչ» ձևով. «Փարչ կամ ընթերցիր թաս»⁷¹: Գ.Տեր-Սկրտչյանը համոզված է, որ. «Ընթերցուածի սխալ չկայ և փասը թաս չէ: Փասը գինու որոշ չափ է, թէև դեռ չգիտենք, թէ կարասի քանիերորդ մասը»⁷²: Հ.Օրբելին նույն Հարցման թարգմանության մեջ պահել է “нас” ձևը և ծանոթագրել. «Мера жидких тел, емкость не известна»⁷³:

Հ.Աճառյանը, հայկազյան բառարանագիրների հետևողականությամբ «փաս» բառն ուղղում է «քաս» ձևով և, կապելով

⁶⁹ Մանանդյան Ա., О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, ст, 134:

⁷⁰ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա.Գ.Աբրահամյանի և Գ.Բ.Պետրոսյանի, էջ 63:

⁷¹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Կ. Բ., Երևան, 1981, էջ 935:

⁷² Տեր-Սկրտչյան Գ., Արտատպութիւն..., էջ 16:

⁷³ Օրбели И., Вопросы и решения..., ст, 46, 67:

պահլավերեն *kās* ձևի հետ, հասկանում որպես «փարչ. հեղուկների չափ է... մի տեսակ մեծ ու տափակ բաժակ... տարողությունն անորոշ»⁷⁴:

Դիտարկվող տարողության չափն օգտագործված է նաև Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկում, սակայն, այստեղ նույնպես գրիչներն արել են սխալ սրբագրում. չհասկանալով «փաս» բառի իմասը, սրբագրել են «քաս» կամ «թաս» ձևերով:

Ավելի հետաքրքիր պատկեր են ներկայացնում Անբերդի եկեղեցու, Վայոց ձորի Ուլգյուր գյուղատեղի, Աշտարակի կարմրավոր եկեղեցու վիմագիր արձանագրությունները, որտեղ «փաս» բառը հանդես է գալիս նաև «փասգի» ձևով⁷⁵: Համոզիչ է թվում Ս.Ավագյանի մեկնաբանությունը. «...Փաս գինի (այս և հետագա ընդգծումները՝ հեղինակինը - Ս.Ավագյան) ազատ կապակցությունը երկար գործածվելով, դարձել է կայուն՝ **փասգինի**, որից էլ վերջին վանկի սղումով կամ հապլոլոգիայի օրենքով՝ **փասգի**»⁷⁶:

«Փաս» հեղուկաչափի լուսաբանման համար կարևոր բանալի է պարունակում Եսայի Նչեցու «Մեկնութիւն մարգարէին Եզեկիէլի» աշխատությունը, որտեղ սուրբգրային տարբեր չափակշռային միավորներ արտահայտված են հայկական միջավայրին բնորոշ համարժեքներով: Փասի մասին ասվում է հետևյալը. «Եւ հրաման ձիթոյ քսեստ մի իւղոյ տասներորդ սափորն, զի տասն քսեստն է սափոր մի...», «Ձէթ, որ տան պտուղ

⁷⁴ **Աճառյան Հր.**, Հայերեն արմատական բառարան, հ. Դ., Երևան, 1979, էջ 483, 557:

⁷⁵ Արձանագրությունները տե՛ս **Ավագյան Ս.**, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1978, էջ 335-336:

⁷⁶ Նույն տեղում, էջ 337:

քահանայիցն քսեստ մի, որ լինի ի սափորէն, որ է փաս մի, ի տասէն միմն»⁷⁷:

Քսեստի մասին, որպես հայկական միջավայրում ընդունված չափման միավոր, նույնպես հիշատակում է Անանիա Շիրակացին⁷⁸:

ԺԴ., ԻԲ. Հարցումների և Ա., Զ. Խրախճանականների մեջ խոսվում է գինու մասին: Պարզ է, որ գինին հայերի կենցաղի անբաժանելի մասն է կազմել: Ուստի և պատահական չեն գինու չափումների վերաբերյալ Անանիա Շիրակացու ակնարկները: Առաջին Խրախճանականում խոսվում է ճաշի ժամանակ գինի օգտագործելու մասին (Ա. Խրախճ., էջ 233): ԺԴ. և ԻԲ. Հարցումները հետաքրքիր են գինի պատրաստելու տեխնոլոգիայի առումով. պարզվում է, որ ընդունված է եղել գինին համեմելը: ԺԴ. հարցման մեջ գինին համեմուն են վարդով (Հարցումն ԺԴ., էջ 229), իսկ ԻԲ. Հարցման մեջ, որը եգիպտական կյանքից է, գինին համեմուն են խնկով (Հարցումն ԻԲ., էջ 230):

Գինու չափման միավորների վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ է պարունակում «Անանիայի Շիրակայնույ համարողի Յաղագս կշռոյ, կշռոց եւ կշռորդաց» աշխատությունը, որպես չափման միավորներ ներկայացված են կիվաթոսը, կադամադեկովթը և մասնարովթը: «Կիվաթոսը գինի չափելու ապակյա աման է... Այն երկար դաստակ ունեցող գինի հանելու անոթ է և նման է բաժակի, [օգտագործվում է] կարասի խորու-

⁷⁷ Հղումը տե՛ս Ա.Ավագյանի նշված մեկնագրության մեջ, էջ 338:

⁷⁸ Անանիա Շիրակացի, Սատենագրություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա.Գ.Աբրահամյանի և Գ.Բ.Պետրոսյանի, Չափագիտական աշխատություններ, էջ 326: Քսեստի մասին տե՛ս նաև **Մանանդյան Հ**, Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում, Երկեր, Զ., էջ 266-269:

թյունից գինի հանելու համար: Կադամադեկովթը և Մասմարովթը երբայական լեզվով է և չի թարգմանվում: Եվ ահա, ուր որ հանդիպես այս անուններից, գիտցիր, որ կադամադեկովթը գավաթ է, իսկ մասմարովթը՝ բաժակ, որով գինի են հանում»⁷⁹:

«Մասմարովթ» բառը Հր.Աճառյանի վկայությամբ ծագում է «ամասարակովթ» երբայերեն բառից, որ նշանակում է «օրինյալ ջուր սրսկելու աման»⁸⁰: Բառիս առաջին մեկնիչը նորից Անանիա Շիրակացին է: Այս բառից են ծագում վրաց. մագմարոթի՝ «լոգանքի աւազան», միզմարոթի՝ «սրուակ» բառերը⁸¹:

Անանիա Շիրակացու Բ. Հարցման մեջ նկարագրված է Իրանից Հայաստան եկող առևտրական ճանապարհը. «Այր մի յիմոց մերձաւորաց գումարտ լեալ ի *Բահլ* (ընդգծումները մերն են՝ Լ.Հ.)՝ եգիտ մարգարիտ շահաւոր: Եւ դարձեալ ի տուն եւ հասեալ ի *Գանձակ* վաճառեաց զհասարակ մարգարիտն զհատն յիսուն դրամ: Եւ եկեալ ի *Նախճաւան* վաճառեաց զչորեւոր մասն մարգարտին եւթանասուն դրամ զհատն: Եւ հասեալ ի *Ղւին* վաճառեաց զերկոտասաներորդ մասն մարգարտին զհատն Ծ. դրամ: Եւ մինչ ի *Շիրակ* առ մեզ եկն եւ ունէր մնացեալ մարգարիտս հատս ԻԴ.» (Բ., էջ 227):

Ենթադրվում է, որ առևտրականներից գանձվել է «բաժ»՝ մաքս, որի մասին վկայություններ գտնում ենք Անանիա Շիրակացու ԺԱ. Հարցման մեջ: Անանիա Շիրակացին «բաժ»-ի մասին ասում է հետևյալը. «Այր մի վաճառական էանց ընդ երիս քաղաքս եւ *բաժ* արարին յառաջնունն եւ հանին զկէս եւ զերեւոր

⁷⁹ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա.Գ.Աբրահամյանի և Գ.Բ.Պետրոսյանի, էջ 327-328:

⁸⁰ **Աճառյան Հր.**, Հայերեն արմատական բառարան, հ. Ա., էջ 147:

⁸¹ Ն. տ., հ. Գ., էջ 264:

իրացն: Եւ յերկրորդ քաղաքին թուեցին զոր ինչ ունեին եւ հանին զկէս եւ զերելորն...» (ԺԱ., էջ 229):

Ի սկզբանէ «բաժ»-ը դիտվել է որպէս հողային հարկ⁸², նաև գլխահարկ: Անանիա Շիրակացու այս Հարցունը հստակ ցույց է տալիս, որ այն մաքսային հարկ է⁸³: Պրոֆեսոր Զ.Հյուբշմանի վկայությամբ «բաժ» բառը ծագում է պարսկերենից, հանդիպում է նաև «բազ» ձևով և նույնպէս նշանակում է «մաքս»: Ունենք նաև «բաժապետ» բառը, որը նշանակում է «մաքսապետ»: Ֆիրդուսու մոտ հանդիպում ենք «բաժպան», «բաջպան», որ նշանակում է «մաքսապան», «մաքսավոր»⁸⁴: Այս հարցման վկայությունը կարևոր կռվան է ցույց տալու, որ «բաժ»-ը մարզպանական Հայաստանում հնագույն հարկերից է եղել. «7-րդ դարում, ինչպէս տեսանք վերը Անանիա Շիրակացու պարզ ու որոշ վկայությունից, «բաժ»-ն այն հարկն էր, որ վճարում էր քաղաքներում վաճառականը: Այս վերջին վկայությունը կարող է, իմ կարծիքով, հավաստի մի ապացույց համարվել, որ «բաժ»-ը մարզպանության շրջանում ևս ունեցել է փոխադրության մաքսային հարկի նշանակություն»⁸⁵:

Ինչպէս տեսնում ենք, Անանիա Շիրակացու Հարցումները ճանաչողական մեծ արժեք ունեն. նրանցում առկա մի շարք տեղեկություններ չափ ու կշիռների, պատմական դեպքերի, տնտեսական-առևտրական եզրույթների վերաբերյալ ելակետային

⁸² Ադոնց Ե., Հայաստանը Հռոմտիմիանոսի օրոք, էջ 359:

⁸³ Շիրակացու սույն հարցման և այլ վկայություններ տես՝ Մանանդյան Զ., Երկեր, հ. Դ., Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում, էջ 83:

⁸⁴ Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. Բ., էջ 380:

⁸⁵ Մանանդյան Զ., Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում, էջ 88:

են Հայաստանի տնտեսական, քաղաքական կյանքի մի շարք ստվերոտ կողմերի բացահայտման համար:

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՅՈՒ ԽՆԴՐԱԳՐՔԻ ԹԵՄԱՏԻԿ ԲԱՌԱՑԱՆԿ⁸⁶

ա. ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ - ամենայն ընդ ամենայն, բաժանել, երևոր, թուել, լուծումն, կէս, համարել, հասարակ, հարցումն, մասն, մնացեալն, մնացեալքն, չորևոր

բ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՁՆԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ - Արշավիր Կամսարական, Ջաւրակ Կամսարական, Հրահատ Կամսարական, Մարկիան, Ներսէի Կամսարական, Սահակ Կամսարական, Սուրէն

գ. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ, ԱԶԳԵՐ - Աթենացիք, Ախուրեան, Աշարունիք, Արտին, Բահլ, բահլուճք, Գանձակ, Գէն, Դուին, եգիպտացիք, Երասխ, Թալին, Խար, Խորաւարան, հայք, հոռոմ, Մարմետ, Նախճաւան, Շիրակ, պարսք, Վաղարշապատ

դ. ԿՈՉՈՒՄՆԵՐ, ՊԱՇՏՈՆՆԵՐ - ազատ, արքայ, աւագ, գանձաւոր, դարիկպետ, դեսպան, եպիսկոպոս, թագաւոր, հեծեալ, հետամտիկ, նախարար, պատուաւոր, սարկաւագ, սպայապետ, վարդապետ, տէր, փարաւոն, քահանայ

ե. ԱՐՅԵՍՏԱԿՈՐԱԿԱՆ ԿԵՆՑԱՂ - Ածել զքարինս, առնել, գաղատոս, գործառնութիւն, խանգարել, կալնուլ, կատարել, շինել

զ. ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԿԵՆՑԱՂ - անկանել փախըստեայ, առնուլ զգերի, ապստամբութիւն, բուն, գերի, զաւր, զաւրք, զերծանիլ, ընկանիլ ի թարփ, թակարդ, թարփ, կալնուլ, կանգներ բուն, կոտորել, հարկանել, մտանել զհետ, ի հետ, յաղթել,

⁸⁶ Անանիա Շիրակացու խնդրագրքի սույն թեմատիկ բառացանկը պայմանական է և արված է Հարցումների և Խրախճանական խնդիրների մասին պատկերացումն ամբողջացնելու նպատակով:

յարձակել, նետ, նիզակ, որս, որսորդ, ուռկան, պատերազմ, սպայ, սպանանել, փախուստ, քաջութիւնք

է. ՆԱԲԱԲԱՐՈՒԹԻՒՆ - Նաւ, նաւակ, նաւահանգիստ, նաւորդ

ը. ԱՌԵՏՐԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ - առնել, զբաժ, բաշխիլ, գանձ, զինք, զնել, գտանել, իրք, կշիռ, կշռել, հռոզ, վաճառական, վաճառել

թ. ՉԱՓ ԵՎ ԴՐԱՄ - աւր, դահեկան, դրամ, դրամիկ, ժամ, լիտր, կայթ, կենդինար, մղոն, փաս

ժ. ԱՊՐԵԼՈՒ ՎԱՅՐԵՐ, ԿԱՌՈՒՅՅՆԵՐ - արքունի դուռն, գեաւղն, ոստան, տուն, քաղաք, եկեղեցի, յորդ ազուգայ, նուաղ ազուգայ, շտեմարան, տրիկլին

ժա. ԿԵՆԴԱՆԻՆԵՐ - այծ, ձի, երէ, լոք, կէտ, կով, ձի, ձուկն, մուկն, ոչխար, վարազ, ցիռ

ժբ. ԲՈՒՅՍԵՐ - գարի, գարեհատ, խնձոր, հազար, ունջ, ցորեն, վարդ

ժգ. ՄԱՐՄՆԻ ՄԱՍԵՐ - անձն, գլուխն, ժանիքն, մէջքն, ոտք, տուտն, փորոտի

ժդ. ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ - եղբայր, հայր, մերձաւոր, նախնի, որդի

ՀԱՎԵԼՎԱԾ

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԽՈՍՔ ԵՐԻՑՍ ԵՐԱՆԵԼԻ ՈՒՍՈՒՑԻՉ ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ՝ ԻՐ ԿՅԱՆՔԻ ՈՐՊԻՍՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ

Ես՝ Անանիա Շիրակացի, Անանիա գյուղից, որ (սովորելով) յուրացրի մեր՝ Հայոց ազգի դպրությունը և հմտացա Աստվածաշունչ գրքերին, օրըստօրե լուսավորում էի մտքիս աչքերը՝ Սաղմոսերգուհի խոսքին համապատասխան: Ամեն բանում լսում էի իմաստունների և իմաստության հետամուտ եղողների երանության (խոսքերը), ինչպես այդ Սողոմոնի կողմից է հանձնարարվում. «Ստացիր իմաստություն և առավել պարսավիր տգիտությունը՝ իբրև խավարի ծնունդ»: Եվ (ապա)՝ «Դու գիտությունը մերժեցիր, ես էլ քեզ կմերժեմ»: Եվ ես զարհուրելով այս սպառնալիքներից, երանությանը հանգրվանեցի և փափագեցի հետևել իմաստասիրությանը: Հույժ սիրելով համարողության արվեստը, խորհեցի, թե առանց թվերի ոչինչ չի հիմնավորվում՝ մայր համարեցի այն բոլոր ուսմանց: Եվ քանի որ Հայոց մեր աշխարհում չկար այնպիսի մեկը, որ տիրապետեր իմաստությանը, և ոչ էլ նույնիսկ որևէ տեղ գիտական գրքեր էին ճարվում, ուստի մեկնեցի Հունաց երկիրը: Հասնելով Թեոդոլայոլիս, ես այնտեղ գտա Եղիազարոս անունով բանիմաց մեկին, որը հմուտ էր եկեղեցական գրքերին: Նա պատմեց ինձ, թե Չորրորդ Հայքում ապրում է մաթեմատիկոս մի անձնավորություն՝ Քրիստոսատուր անունով: Ու երբ գնացի, գտա հանձնարարված մարդուն. վեց ամիս մնալով նրա մոտ, համոզվեցի, որ նա սպառիչ չի տիրապետում (այդ) գիտությանը: Այնու-

հետև շտապեցի մեկնել Կոստանդնուպոլիս, հանդիպեցի այնտեղից եկող իմ ծանոթներին, որոնք ասացին ինձ. «Ինչո՞ւ ես հանձն առել այսքան երկար ճանապարհորդություն, չէ՞ որ Տյուքիկոս Բյուզանդացի գիտունը գտնվում է մեզ մոտիկ՝ Պոնտոսի ծովեզրյա այն քաղաքում, որը կոչվում է Տրապիզոն: Նա իմաստությամբ լի մարդ է, գիտակ հայերեն դպրությանն ու լեզվին և ճանաչված թագավորներից»: Ես հարցրի նրանց, թե՛ «Որտեղի՞ց դուք այդ գիտեք»: Իսկ նրանք պատասխանեցին. «Բազում անգամ այս ճանապարհով ընթանալիս շատերին ենք տեսել՝ տարբեր տեղերից նրա մոտ (սովորելու) եկած, նրա փայլուն գիտության պատճառով: Այլև այժմ էլ մեզ նավակից եղավ Կոստանդնուպոլսի պատրիարքի Փիլաքրո սարկավագը, որը շատ երեխաներ էր տանում նրա մոտ ուսանելու: Հասնելով Սինոպ (քաղաքը), մենք պատահեցինք մեր ընկերներին, բաժանվեցինք նրանից և ճանապարհվեցինք ցամաք: Եթե դու արագ գնալու լինես՝ կգտնես այնտեղ Փիլաքրին»:

Լսելով այս՝ խնդալից սրտով փառավորեցի նախախնամող Աստծուն, որ նեցուկ էր իր ծառաների փափագը կատարելուն, ինչպես որ ասում են թե. «Հայցեցեք և կգտնեք»: Գնացի ու գտա նրան սուրբ Եվգենիայի վկայարանում: Պատմեցի նրա մոտ գալու պատճառը: Նա ուրախությամբ ընդունեց ինձ և ասաց. «Գոհություն Աստծուն, որ քեզ ուղարկել է գիտության նպատակով, որպեսզի տանես այն սուրբ Գրիգորի երկիրը: Եվ առավել ուրախ եմ, որ ինձ է աշակերտում այդ երկիրը, որովհետև ես իմ երիտասարդության տարիներին շատ ժամանակ մնացել եմ բարեսիրության մեջ Հայոց երկրում, և ուրախանում եմ գիտությունս այնտեղ տալու համար, քանի որ իմ գտնված ժամանակ տգիտություն էր այնտեղ»:

Եվ Տերն ինձ շնորհ տվեց այդ մարդու առաջ: Նա սիրեց ինձ որդու նման և պարապեց ինձ հետ իր ողջ իմացությամբ, այնպես որ նախանձեղ սկսեցին իմ բուրբ աշակերտակիցները, որոնք արքունիքից էին:

Մնալով նրա մոտ ութ տարի, ես լիովին յուրացրի համարողական գիտությունը, փոքր-ինչ էլ ծանոթացա այլ գիտությունների և հմտացա բազմաթիվ այնպիսի գրքերի, որոնք մեր լեզվով դեռ չէին թարգմանված: Ամեն տեսակի գրքեր կային նրա մոտ՝ հայտնի և գաղտնի, արտաքին (հեթանոսական), գիտական և պատմական գրքեր, բժշկարաններ, ժամանակագրություններ. ի՞նչ թվարկեմ մեկ առ մեկ, քանի որ չկար այնպիսի գիրք, որ նրա մոտ չգտնվեր: Թարգմանության մեջ էլ սուրբ հոգուց պարզևված այնպիսի շնորհք ուներ, որ երբ ցանկանում էր հունարեն գրված գիրքը թարգմանել, ուրիշ թարգմանիչների պես չէր դեգերում, այլ հունարենն այնպես էր հայերեն կարդում, որ կարժես հայերեն գրված լիներ: Ցանկանալով, որ դուք անտեղյակ չլինեք այդ բազմահմուտ մարդու առաքինությանը, [ուզում եմ] ծանոթացնել ձեզ, թե ինչպե՞ս է, որ նա գիտեր մեր լեզուն և ինչպե՞ս էր գիտության մեջ այդքան պատրաստություն ձեռք բերել:

Նա պոնտացիների երկրից էր, Տրապիզոն քաղաքից: Երիտասարդության հասակում ծառայել էր Տիբերիանոս կայսեր զորավար Յովհաննի մոտ, որը գտնվում էր Յայաստանում: Այստեղ նա մնում է շատ տարիներ՝ մինչև Մորիկ թագավորի ժամանակները, սովորում է մեր լեզուն և դպրությունը: Իսկ պարսկական զորքերի՝ հույների վրա կատարած հարձակման ժամանակ, որը տեղի ունեցավ Անտիոքի մոտ, պատահում է այնպես, որ նա վիրավորվում է մարտում, փախչելով՝ հասնում է Անտիոք, իսկ իր ունեցած ողջ գույքն ավար են վերցնում: Երկար ժամանակ գտնվելով հիվանդ վիճակում, նա կսկծանքով է հիշում իր

ունեցվածքի կորուստը, Աստուծոց խնդրում է իր վերքերի բուժում և ուխտում՝ ասելով. «Եթե շնորհես ինձ առողջ կյանք, այլևս անցավոր գանձ չեմ կուտակելու, այլ հետամուտ եմ լինելու գիտության գանձին, ինչպես իմաստունն է ասում. «Խրատ վերցրեցեք և ոչ արծաթ, [սիրեցեք] ավելի գիտություն, քան ընտիր ոսկի»: Եվ Աստված կատարում է նրա խնդրանքը. առողջամալուց հետո գնում է սուրբ քաղաք Երուսաղեմ: Այնտեղ մնում է մեկ ամիս, [ապա] տեղափոխվում Ալեքսանդրիա, ուր ուսանում է երեք տարի: Յետո մեկնում է Յռոմ և, մնալով այնտեղ մի տարի, գալիս է Կոստանդնուպոլիս: Այստեղ նա գտնում է մի նշանավոր անձնավորության, որ դասավանդում էր քաղաքի իմաստասերներին: Նրա մոտ մնում և սովորում է ոչ սակավ ժամանակ և կատարյալ իմաստասիրությամբ վերադառնում իր ծննդավայրը: Չնայած պատրիարքը ու քաղաքի իշխանները շատ են խնդրում, որ նա չհեռանա Կոստանդնուպոլիսից, սակայն նա չի լսում նրանց՝ կարեկից հանդիսանալով իր երկրին, ինչպես գրված է [Սուրբ գրքում]: Գալով [հայրենի քաղաքը], նա վարում է օրինակելի կյանք: Քիչ տարիներ անց (Կոստանդնուպոլսում) մահանում է նրա ուսուցիչը: Աշակերտների մեջ չգտնելով նրան հավասար մեկին՝ հաջորդելու նրան, խնդրանքով դիմում են ցանկալի Տյուքիկոսին, որ գա և զբաղեցնի նրա տեղը: Միաժամանակ ստանում է նաև թագավորի հրամանը: Սակայն նա հանձն չի առնում. ասելով թե՝ «Երկնայինների թագավորին ուխտել եմ՝ չհեռանալ այստեղից»: Այնուհետև այնտեղ էին գալիս նրա մոտ սովորելու: Բայց ես այնպես եմ կարծում, թե Աստուծու նախախնամությունը նրան պատրաստել է մեզ մոտ գիտությունը ծավալելու համար:

Եվ ահա ես՝ նվաստս հայաստանցի, սովորեցի նրանից այս մեծազոր գիտությունը, որ թագավորներին է ցանկալի և բերեցի մեր երկիրը՝ առանց որևէ մեկի աջակցության, շնորհիվ միայն իմ

անձնական ջանքերի և օգնականությամբ սուրբ Գրիգորի աղոթքների, թեպետ և ոչ ոք գտնվեց մեծարող և շնորհակալ իմ աշխատանքի համար, որովհետև մեր ժողովուրդը իմաստասիրություն և գիտություն սիրող չէ, այլ՝ ծուլ է և ձանձրացող: Որովհետև, երբ ես վերադարձա, շատերը եկան ինձ մոտ սովորելու և փոքր-ինչ խելամտած՝ թողեցին ինձ և հեռացան, չմնացին մինչև գիտության (դասընթացի) ավարտը: Առօրյա կարիքների համար նրանք բավական համարելով այն, ինչ ստացել են: Եվ ինձնից շատ շուտ առանձնանալով, սկսեցին ուսուցանել այնպիսի բաներ, որ չգիտեին, և իրենց ներկայացնել իբրև ուսուցիչներ, որոնց հասու չէին: Կեղծավորներ և սնափառներ. ուզում են գիտնականի կեցվածք ընդունել և մարդկանց կողմից ուսուցչապետներ կոչվել: Իմ հասցեին նրանք տգիտությամբ պարսավանքի խոսքեր էին ասում, որ իրենք էին հերյուրել: Թե ես չարություն ունենայի նրանց նման՝ բերանս չէի բաց անի սովորեցնելու ոչ մեկին՝ իբրև արդարև ապերախտների: Սակայն ես միշտ մտաբերում եմ տերունական ձայնը, որ ասում է. «Իմն է վրեժխնդրությունը և ես կհատուցեմ»: Եվ դարձյալ թե՛ «Գցիր քո ոսկին սեղանավորին, և ես գալով՝ տոկոսներով կպահանջեմ»: Դարձյալ ոչ ոքի չեմ արգելել, ովքեր ցանկացել են սովորել և այսուհետև էլ չեմ արգելի: Եվ այս եմ առհավետ կտակում ձեզ՝ ինձնից հետո աշխարհի եկող ուսուցիչներիդ՝ իմաստություն և գիտություն սովորել ցանկացողներիդ:

Եվ Քրիստոսին՝ ձիրք շնորհողին, փառք, պատիվ և իշխանություն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն:

АВТОБИОГРАФИЯ¹

«Я, Анания Ширакаци, изучив всю науку нашей страны армянской и коротко познакомившись с Св. Писанием, по выражению Псалмопевца, ежедневно просвещал очи моего разума. Чувствуя в себе недостаток численного искусства, я убедился, что без числа бесплодно будет изучение философии, которую я считал матерью всех наук. В Армении я не нашел ни человека сведущего в философии, ни книг в которых излагались бы науки. Поэтому я отправился в Грецию, и в Феодосиополе встретил Илиазара, человека сведущего в книгах церковных. Он сказал мне, что в IV Армении живет известный математик Кростосатур. Я отправился к нему и пробыл у него шесть месяцев. Но вскоре я заметил, что Кростосатур владел не всей наукой, а только некоторыми отрывочными сведениями. Тогда я поехал в Константинополь, где встретил знакомых, которые сказали мне: «Для чего ты ехал так далеко, когда гораздо ближе к нам, в Трапизоне, на берегу Понта живет византийский вардапет Тюхик. Он исполнен мудрости, известен царям и знает армянскую литературу». Я спросил их откуда они это знают. Они в ответ: «мы сами видели, как странствовало к нему много народу, с целью поучиться у столь ученого мужа. С нами же ехал Филагр, архидиакон константинопольского патриарха, который вез к нему

¹ Բնագրի ուղղագրութիւնը դարձրել ենք արդիական:

многих молодых людей для обучения». Услышав это я возблагодарил Бога, который утолил жажду раба своего. Прибыв к Тюхику, я встретил его в монастыре св. Евгения и сообщил ему о причине своего к нему прихода. Он принял меня ласково и сказал: «Благодарю Бога за то, что Он прислал тебя поучиться и пересадить науку в удел св. Григория; радуюсь тому, что у меня поучится страна ваша. Я сам в молодости долго жил в Армении. В ней царствовало невежество». Вардапет Тюхик полюбил меня как сына и поверял мне все мысли свои. Ниспослал и мне Бог благодать свою: я усвоил вполне численную науку, и с таким успехом, что соученики мои при дворе царском стали мне завидовать. Я пробыл у него 8 лет и изучил много таких книг, которые не были еще переведены на наш язык. Ибо у вардапета было несметное количество книг: тайных и явных, (церковных) и языческих, книг об искусствах, исторических, медицинских и хронологических. К чему перечислять их поимянно? Одним словом, нет такой книги, которой бы у него не было. И такой был у него от Св. Духа дар переводить, что принимаясь за перевод чего-либо с греческого на армянский, он не затруднялся подобно другим переводчикам, а просто читал по-армянски, как будто книга написана была по-армянски. Он рассказывал мне, как он достиг такой обширной учености и как усвоил себе армянский язык. «В молодости, говорил он, жил я в Трапизоне при дворе военачальника Иоанна Патрика, и долгое время, до самого воцарения Маврикия, в военном звании служил в Армении, где и научился языку и письму вашему. Во время одного нападения персидских войск на греческие, я был ранен и

бежал в Антиохию. Все мое имущество было разграблено. Моля Бога об исцелении моих ран я дал Ему обет: если Ты продлишь мою жизнь, то я посвящу ее не копленю тленных сокровищ, а собиранию сокровищ познания. Услышал Бог мольбы мои. Поправившись я отправился в Иерусалим, оттуда в Александрию и в Рим. Воротившись в Константинополь я встретил знаменитого афинского философа (?), у которого провел в учении не мало лет. Кончив учение я воротился на родину и стал учить и поучать народ». Между тем, через несколько лет философ скончался. Не найдя кем его заменить, царь и вельможи послали за ним и приглашали его на кафедру учителя. Когда же Тюхик, сославшись на обет данный Богу – не удаляться из города, не принял предлагаемой ему кафедры, то в виду его обширных сведений, к нему стали из всех стран стекаться, чтоб учиться у него.

И я, ничтожнейший из Армян, изучив у него эту мощную науку, желанную царям, перенес ее в страну нашу, не быв никем поддержан, обязанный только своему трудолюбию, помощи Бога и молитвам св. Просветителя. И никто не поблагодарил меня за труды мои. Армяне не любят наук и познаний. Они ленивы и не стойки в изучении».

Ananias of Shirak (A. D. 600-650 c.).

I. His Autobiography.

Ananias Shirakvantzi the thrice blessed doctor, his description of his life.

“I Ananias Shirakvantzi am he who collected the literature of our race of Armenians, and was learned in divine writ; and day by day I enlightened the eyes of my mind according to the word of the psalmist. And I was for ever hearing of the blessedness of the wise and of those who seek after wisdom; even as it is commanded by Solomon: ‘Do thou acquire knowledge and wisdom, and continue to drive away ignorance, calling darkness her parent. If thou expel knowledge, then will I also expel thee’. And I was in dread of these threats, and I desired to attain unto blessedness and longed for wisdom. But I was very wanting in the art of counting, and I reflected that no discourse is in keeping with wisdom in the absence of number, which I regarded as the mother of all philosophies. And among the Armenians I found no man who was learned in this science, nor in their land did I find any books of science. So I set out to go to Greece, and I came to Theodoupolis, and I found there a reasonable man, learned in the writings of the church who was named Eliazar. He told me that there was a certain man who was a mathematician in the region of fourth Armenia, Christodotus his name. And I went and spent with him a space of six months. And I saw that he had not the whole science, but only a smattering of it; so I went on thence to Constantinople; and those of my acquaintance who were there met me and said to me: Why have you embarked upon such a long and toilsome journey; when Tychicus the teacher of Byzantium

is near to us on the coast of Pontus, which is called Trapezon. He is full of wisdom and has a knowledge of Armenian literature and is well known to the princes. And I said: How do you know this? And they said: We saw many travellers going to him, because of his very great knowledge.

“But we now had as a fellow voyager Philagrius the deacon of the patriarch of Constantinople, who was taking many youths to him for instruction. On hearing this I glorified God, who thus fulfilled the desire of his servant, according to the saying: ‘Seek ye and ye shall find’. And when I had come, I found him at the shrine of Saint Eugenia. And I announced my coming to him; and he received me with joy and said: I thank God for sending thee in search of wisdom; that thou mayest use these sciences in the diocese of St. Gregory; and I am the more glad, that that land takes its instruction from myself. For in my youth I was a good deal in Armenia, and there was ignorance in the land. And the teacher Tychicus unto whom I went, loved me as his son and schooled me in all his thoughts. And the lord gave me grace, and I learned fully the art of mathematics, so that the pupils in the royal court were envious of me. And I lived with him eight years, and read and learned many writings which were not translated into our tongue. For he had an enormous library, secret books and open, ecclesiastical and profane, scientific and historical, medical and chronological. But I need not enumerate them in detail, for there is no book which was not found with him, and in translating he had such grace as comes from the holy spirit; for when he desired to translate greek books into Armenian, he did not do it hesitatingly like other translators, for he understood the Armenian tongue, as he did Armenian letters. And he told me how he came to know the Armenian tongue and to acquire such wisdom. He told me that when he was a young man in Trebizond he had been in the court of John the Warrior, and he served in Armenia, and spent

a long time there until the reign of Maurice, during which he became acquainted with the tongue and the literature”.

But in an irruption of the Persian army on the Greeks, he had been wounded in battle and fled to Antioch, and all his goods were taken among the spoils. “Then”, said he, “I prayed to god to be healed of my wounds, and I made a vow, saying: if thou wilt bestow upon me life, I will not treasure up the treasures that pass away; but I will pursue the treasures of knowledge; as it is said ‘possess yourselves of wisdom and not of silver, of knowledge rather than of gold’. And god granted my desire, and when I was recovered I went off to the city of Jerusalem and thence to Alexandria, and thence to Rome; where I stayed for some time, and then returned to Constantinople. And I found a teacher in Athens the city of philosophy, a famous man, with whom I spent not a few years in study. And having perfected myself in philosophy I returned to this place, and began to teach as a doctor. But after a few years my own teacher died; and as of his pupils could be found no one equal, by the command of the emperor and of the princes, they sent an invitation that I should go and occupy his chair”. But he declined, saying: I am vowed to the heavenly king not to depart from this place. And after that they came to him to learn from all over the earth, because of his exceeding knowledge. “But I was a humble Armenian and learned of him this mighty science, which is longed for by the princes and is imported into our land without there being any successor, by the help of god alone and by the prayers of the holy illuminator. Nevertheless none of my country men thanked me for my trouble; for the Armenians do not love a learned man nor his knowledge, but are lazy and stupid. For when I came into Armenia many came to me to be taught, but after getting a little knowledge, instead of remaining till they were perfect in the science, they left me and went off and began to teach what they did not know themselves and could not understand. Impostors they, and charlatans, anxious to make

a show of knowledge and to be called rabbi by men. And they uttered calumnies about myself, though they were taught by myself. But I am free from the malice which they display in my teaching and instruction; for I bear in mind the holy text which says: 'Mine is vengeance and I will requite', and again the text: 'Lay my gold with the bankers, and I when I come demand it with interest'. Then I was not hindered by any who wished to teach. And this I leave unto you as a deathless gift, ye teachers of those who really desire to learn: raise no obstacles, and ye shall receive your reward from Christ who freely bestows his grace. And now be glory to Christ".

ՀԱՅՏՏՆՈՒԹՅԱՆ ՃԱՌԸ

ՄԱԹԵՄԱՏԻԿՈՍ ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ՏԻՐՈՋ ԵՎ ՓՐԿՉԻ ՀԱՅՏՏՆՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Մեր ձեռնարկած աշխատության մեծ մասը Աստծու սուրբ տոների մասին է, որին հասանք և որը բանախոսելու արժանի եղանք: Նախ սկսենք մեր Քրիստոս Աստծու ծննդյան տոնից, որը մեր տարեկան տոների առաջնեկն է և հանդիսավորության ու բոլոր տեսակի քրիստոնեական հիշատակների գլխավորը:

Քրիստոսի ծննդյան սուրբ տոնը մկրտությունից 12 օր առաջ տոնելը կարգված չէ ոչ սուրբ առաքյալների և ոչ էլ նրանց հաջորդների կողմից: Այդ հայտնի է սուրբ առաքյալների կանոններից, որովհետև կանոնների վեցերորդ գլխում գրված է այսպես. առաքյալները կարգեցին և սահմանեցին, որ մեր Տիրոջ ու Փրկչի ծննդյան և հայտնության տոնը հանդիսանա եկեղեցական տոների գլխավորը և առաջնեկը՝ տիբեթ ամսվա 21-ին, որը համապատասխանում է հռոմեական հունվար ամսի վեցին:

Այս կանոնադրությունից շատ հետո, ինչպես ասում են ոմանք, Կերինթոսի աղանդավոր աշակերտները, այս երկու տոները բաժանեցին իրարից, որը և ընդունեցին հույները, որոնք արդարև տոնասեր և ջերմ բարեպաշտ ժողովուրդ են, իսկ նրանց միջոցով սփռվեց և տարածվեց ողջ քրիստոնյա աշխարհը: Սակայն սուրբ Կոստանդիանոսի ժամանակ, Նիկիայի սուրբ ժողովում, այդ բաժանումը ընդունելություն չգտավ սուրբ հայրերի կողմից. նրանք որոշեցին տոնել ըստ սուրբ առաքյալների սահմանած նախկին կանոնների: Այդ մեզ հայտնի է Մակար

հայրապետի սուրբ մկրտության առթիվ Հայաստան ուղարկած խրատական գրությունից, իսկ Մակար հայրապետը Նիկիայի ժողովին մասնակցող 316 սուրբ հայրերից մեկն էր: Եվ ահա նա խրատական այդ գրության վեցերորդ գլխում գրել է. «Բայց սուրբ ավագանի մկրտության կարգը և երեք տոները փութաջան կատարելու ցանկությունը, որոնցից Աստծու ընծայվածներն ամենից մեծ աճապարանքով ցանկանում են կատարել մկրտության տոնը իբրև մեծ փրկական խորհուրդ, կատարվել է նախկին սուրբ և նշանավոր օրերում: Եվ այժմ այն մեծ փափագով աճապարում են կատարել Քրիստոսի սուրբ վայրերում: Հարկավոր է, որ բոլոր հավատացյալներն իրենց մոտ քրիստոնեական երկյուղածությամբ մկրտության այդ կոչումը կատարեն Տիրոջ ծննդյան սուրբ հայտնության օրը, փրկական զատկի Քրիստոսի կենարար չարչարանքները և շնորհալից պենտեկոստեն, որի ժամանակ աստվածային կենարար հոգին իջավ մեր մեջ և ծավալվեց:

Հարկավոր է ծննդյան և մկրտության տոների պատճառը բացատրել, որպեսզի դուք ևս նույն փութաջանությամբ կատարեք այն: Անհրաժեշտ է, որ Քրիստոսի լուսավոր ծնունդը և մեր մեղսաքավիչ սուրբ ավագանի ծնունդը կատարեք նույն փրկության օրը, քանի որ նա հանձն առավ մկրտվելու նույն օրը՝ մեր մեղքերը վերացնելու համար: Եվ նա ինքը ոչ թե ինչ-որ կարոտություն ուներ սրբության, այլ դրանով իսկ նա կամեցավ մաքրել մեզ մեղքերի պղծությունից, ուստի նա բարձր ձայնով աղաղակելով ասաց. «Նա, ով չի ծնվում ջրից ու հրից, չի կարող մտնել Աստծու արքայությունը»: Նույն օրինակով և նրանով ծնվածներն ու մկրտվածները Քրիստոսի սուրբ ծննդյան օրը թող մաքրվեն: Կենսաբեր զատկի հարության օրը մեր մեղքերն ավագանի ջրին հանձնելով, նմանող լինենք մեր տեր մեր Հիսուս

Քրիստոսի մահվան անմահությանը: Մկրտվող անձնավորությունը երեք անգամ սուրբ ավազանի մեջ ընկղմվելով, օրինակ լինենք մեր Տիրոջ երեք օրվա թաղման: Այդ առթիվ աստվածային առաքյալը հայտնապես նշում է՝ ասելով. «Ջրի մեջ թաղելու նման մկրտությամբ՝ նմանվող լինենք Քրիստոսի մահվան, որպեսզի նրա հարության նորոգությամբ հաղորդակից լինենք հավիտենական կյանքին»: Իսկ շնորհապարզև պենտեկոստեի օրվան կենարար հոգու լուսապայծառ ազդումը պարզևեղով, երբ հրեղեն լեզուների տեսքով իջավ առաքյալների վրա, ձեռքը մկրտվածների վրա դնելով ընդունենք հոգու շնորհի պարզևը: Նույն օրինակով և մենք այդ նույն օրը ձեռքը մկրտվողների վրա դնելով՝ նույն հոգին է պարզևում, որի օրինակը զգուշությամբ և անխափան կատարում ենք, որպեսզի կատարյալ լինենք: Այս ասում է Մակար հայրապետը:

Երեք մկրտության տոն կատարելու մասին Մակարի ասածը հաստատում է Գրիգոր Աստվածաբանը: Մկրտության իր ճառում, դատապարտելով մկրտության գործում թերացողներին, նա ասում է հետևյալը. «Ի՞նչ է այդ, ի՞նչ ես սուտումուտ պատճառաբանություններ փնտրում և մեղսակցության պատճառ դառնում: Ասում ես, թե ընդունում եմ Տիրոջ հայտնությունը, ընդունում եմ Տիրոջ հարությունը, որը պատվականագույն օր է ինձ համար, ընդունում եմ պենտեկոստեն, ցանկալի է ինձ Քրիստոսով լուսավորվել և Քրիստոսով կենդանանալ հարության օրը, ուրիշ էլ ի՞նչ եք ուզում, սակայն մոռանում ես, որ կվերջանան օրերը, որ դու չես իմանա, վրա կհասնի այն ժամանակը, որին դու չես սպասել, այլևս ժամանակ չի մնա մկրտության համար, քանի որ ամեն ինչ վախճան ունի:

Արանից, այսինքն Մակարից հետո, Երուսաղեմի հայրապետության աթոռում հաջորդում է սուրբ Կյուրեղը, իսկ Կոստանդիա-

նուսից հետո գահակալում է նրա որդի Կոստանդինոսը իր եղբոր հետ միասին: Սրա մասին ասում են, որ համակիր էր Արիոսի աղանդին, բայց միայն ճշմարտության դեմ էլ չէր մաքառում, այլ երկու կողմերին էլ թողել էր ազատ. ով որին համակրում էր, նրան էլ կարող էր հետևել՝ ուղղափառության կամ չարափառության:

Այս տոնը, սրա օրոք, ընդունվեց արքունիքում: Եվ ամեն տեղ, ով կամենում էր տոնել, համարձակությամբ տոնում էր, բացառությամբ չորս մայրաքաղաքների, ուր գտնվում են չորս սուրբ ավետարանիչների աթոռները: Սրա ժամանակ Յովհաննեսի աթոռը դեռ հափշտակված չէր Կոստանդնուպոլսից Եփեսոսի կողմից: Այդ հայտնի է Կյուրեղի Կանոնադրության «Ընթերցվածոց» աշխատությունից, ուր գրված է, թե «Դեկտեմբերի 25-ը տոն էր Դավթի և Յակոբի, երբ այլ քաղաքներում Քրիստոսի ծնունդն էին տոնում»: Այս առթիվ հույներն ասում են, թե՝ հայրապետը, իր ողջ միաբանության և ժողովրդի բազմության հետ միասին, գնում է Բեթղեհեմ տոնելու, իսկ քահանաներից քչերը, որոնք մնում են քաղաքում, կատարում են Դավթի ու Յակոբի տոնը, և իբրև թե «Ընթերցվածոցի» մեջ խոսքը միայն քաղաքին է վերաբերում, և «այլ քաղաք» գրեց, ասում են, Բեթղեհեմի մասին ակնարկելով: Սակայն լավագիտակ մարդկանցից ոչ մեկը դրանում չի հանդգլի: Եթե այդպես է, այդ դեպքում ինչպե՞ս է, որ նույն ինքը՝ Կյուրեղը, ծննդյան կանոնը սահմանել է հունվարի վեցին: Նրա կանոնների սկզբում գրված է այսպես. «Սուրբ հայտնության տոնը պետք է կատարել հունվար ամսի վեցին. թող հավաքվեն հավաքատեղում և այսինչ կանոնը կատարեն և ապա գնան Բեթղեհեմի այրը»: Այս՝ հայտնապես ցույց է տալիս երկու տոների մեկ օրում կատարելը: Ո՞վ կհանդգնի պարսավական խոսք ասել երանելի Կյուրեղի և կամ նրա կողմից կարգվածների հասցեին: Եվ ո՞վ է ավելի նվիրված եղել Քրիստոսին, քան նա, և

ո՞ւմ է, որ այնքան նշաններ են երևացել, քան նրան, ո՞ւմ միջոցով է, որ այնքան բյուրավոր մարդիկ են լուսավորվել, քան նրա մոտ. կարծում են, որ նույնիսկ սուրբ Պողոսի մոտ չեն եղել այդքան:

Քանի որ լուսեղեն խաչի երևման օրը անթիվ բյուրավոր հրեաներ և հեթանոսներ հավատացին, որովհետև մինչև Կոստանդիանոսի որդի Կոստանդիոսի ժամանակը չնայած արգելված էր հրեաների մուտքը Երուսաղեմ, սակայն բազմաթիվ հրեաներ նրանից համարձակություն առան՝ հավաքվել և բնակություն հաստատել Երուսաղեմում: Նույնիսկ Տիբերիայում և այլ քաղաքներում եղած բազմաթիվ հրեաներ եկան հավաքվեցին տոնախմբության: Բազմաթիվ հեթանոսներ ևս հավաքված էին այնտեղ՝ վաճառականություն անելու համար: Եվ նրանք ականատես եղան Աստծու հայտնությանը և հավատացին Քրիստոսին ու բոլորն էլ դիմեցին մկրտության: Եվ նրանք թվով այնքան շատ էին, որ ոչ ավագանները և ոչ էլ կիստեռական ջրամբարները բավարարեցին, ուստի Երանելին հրամայեց մաքրել մեծ բաղնիքները, որոնք կոչվում էին դեմոսական և այնտեղ ևս կատարել փրկչական մկրտությունը: Ահա այս երրորդ նշանն էր, որ եղավ Երուսաղեմում պենտեկոստեի սուրբ օրը: Եվ այս, իմ կարծիքով, ավելի վեհագույն է, քան առաջինը, քանի որ բոլորին հայտնի է, որ սուրբ հոգու իջնելը առաքյալների վրա տեղի է ունեցել հրեա և այլ ժողովրդի բազմության մեջ, որը հանգամանորեն պատմվում է «Գործք առաքելոցում»: Այն ժամանակ միայն առաքյալներին պարզեց սուրբ հոգին, իսկ այժմ՝ ժողովրդի բազմությանը՝ սուրբ մկրտությամբ: Եվ սրա նշանակությունը նաև ավելի մեծ է, քան երկրորդինը, որի մասին պատմում է Հովսեփոսը թե՛ պենտեկոստեի օրը դրոշյունը և սարսափը պատել էր նաև քահանաներին ու հավաքված

ժողովրդին: Այնուհետև հանկարծ լսվեցին ներքին տաճարից այսպիսի խոսքեր. «Գնում ենք այստեղից, գնում ենք»:

Իսկ սրանով ցույց տվեց, որ ստորիններից (ստորերկրայիններից) չէ ձայնը բարձրացնում դեպի տերը, այլ վերևից է այստեղ գալիս, և ծածկաբար պարզևեց մինչև Կոստանդին կայսրին, երբ Կյուրեղը հանձն առավ գրել աղերսական նամակ և նրան կոչել բարեպաշտ և տեղյակ աստվածային դավանության: Իր այդ խնդրանքով նա որպես թե նպատակ ուներ փրկել նրան՝ մատնացույց անելով աստվածային երևացող նշանը և բազմության քրիստոնեություն ընդունելը, ակնարկելով թե՛ «Ինչո՞ւ դու ևս նրանց հետ չես»: Եվ ահա, եթե հույները, հանդգնեցին այս արհամարհել, ապա կարող են արհամարհել և Ավետարանը՝ չընդունելով ծննդյան տոնը, քանի որ սա և նա Քրիստոս Աստծու ծնունդը և մկրտությունը մի օրում են ցույց տալիս: Մկրտության խորհրդի մասին Ղուկասի ավետարանում գրված է, թե՛ «Ինքը Յիսուսը երեսուն տարեկան էր, որ սկսեց իր գործունեությունը»: Այս էլ հատկապես ցույց էր տալիս, որ նույն ծննդյան օրն էլ մկրտվել է և սկիզբ դրել երեսնամյա կատարյալ հասակին ու քարոզչությանը: Յույներն այն էլ են ասում, թե այն եղած պետք է լինի տարեսկզբի 12-րդ օրը և ոչ թե տարեմիջին կամ տարեվերջին: Եթե այդպես հաշվելու լինենք, ապա 70 օրվա մասին էլ կարելի է ասել, թե ոչ տարեմեջ է և ոչ էլ տարեվերջ:

Իսկ Առաքելական կանոնի մասին հույներն ասում են, թե առաքյալները ժամանակ չունեին ստուգապես քննելու տոնական օրերը, քանի որ նրանց գործը ավետարանելն էր և հեթանոսական տոներից զատելը: Արդյո՞ք որևէ մեկին հաճելի է թվում լսել այսպիսի խոսք առաքյալների հասցեին: Եթե արդարև առաքյալները այդքան անփույթ են գտնվել տոների կարգավորման նկատմամբ, ապա ինչպե՞ս է, որ մեզ սովորեցրին դեպի արևելք դառնա-

լով երկրպագություն անել, տոնել կիրակին, պատվել և գործ չանել, պահել չորեքշաբթի և ուրբաթ օրերը, չէ՞ որ սրանք ծննդյան և մկրտության համեմատությամբ ավելի փոքրիկ տոներ են: Բայց ներենք նրանց այս բանում, միայն թե դրանով հավանության գային: Քանի որ Նիկիայի սուրբ հայրերի մասին ասում են թե Աստված այս ծածկել է նրանցից, որովհետև նա բոլոր շնորհները մեկին չի տալիս, և թե՛ այդ մասին նրանց ոչինչ չի ասվել: Այո՛, շուռ տված ձևով հասկացան և ծաղրելով ասացին, թե՛ կարծում են այլ քաղաքներում են ծնունդ առել: Բայց ես համակիր եմ երանելի Բարսեղին և Գրիգոր Նազիանզանցուն, որոնցով պարծենում են նաև հույները, ես նրանց համարում եմ սուրբ, ճշմարիտ և հոգևորական անձնավորություններ և հետևող առաքյալներին: Եվ եթե այս մասին նրանք որևէ բան ունենային, ես կընդունեի, ինչպես որ Պողոսն է հանձնարարում. «Եթե երկրորդը հայտնվի, առաջինը պետք է որ լռի»: Բայց ես նրանց մոտ այս տոնի մասին ոչ մի նման հանձնարարություն չեմ գտնում: Իսկ քանի որ երկու տոնի մասին էլ վկայություն կա Կյուրեղի «Ընթերցվածոց»-ի և «Սաղմոսի մեկնության» մեջ, ուստի չեմ կարող տոնը երկուսի բաժանել, այլ թե՛ միևնույն օրը երկու խորհուրդների կարգը պետք է կատարել և պայծառացնել տոնը:

Իսկ երբ սուրբ Գրիգորի ասածով են փորձում իրարից զատել տոները, այս մասին նրա ոչ մի հանձնարարությունը չեն կարող մատնացույց անել: Բայց նրանք վկայություն են վերցնում նրա ասույթներից և յուրովի կամայականորեն մեկնաբանելով ասում, թե ծննդյան ճառում այսպես է ասել. «Եվ ահա փոքր-ինչ հետո կտեսնես Հիսուսին սրբված Հորդանանում»: Եվ սրա հիման վրա ասում են, թե այս ճառը ծննդի օրն է ասել, և փոքր-ինչ հետո նա ակնարկում է 12 օրը, որ եղել է մկրտությունից առաջ:

Պատասխանենք սրան: Ես այնպես եմ կարծում, որ այստեղ, «փոքր-ինչ հետո»՝ այլ իմաստով է ասված: Բերենք այդ հատվածը. «Գայթակղում ես մարմնով և նվաստանում, և ահա դու քիչ հետո կտեսնես Յիսուսին սրբված Յորդանանում իր մկրտությանը, ոչ թե նվաստացրած, այլ ճոխացրած մարմնով՝ վեր բարձրանալով երկինք աստվածային վայելչությամբ՝ վկայված Յորից և Յոգուց»: Ահա, եթե այսպես հասկանաս, ապա պիտի ընդունես, որ մկրտությունը հարությունից հետո է եղել, որովհետև նույն խոսքից առաջ չարչարանքի և հարության մասին խոսելով է ասում, ապա և՛ նույնին դառնալով և նույնին հարելով ասում. «Փոքր-ինչ հետո»: Բայց եթե դու հստակես միտքդ, դյուրությամբ կարող ես այդ ճառից համոզվել, որ նրա մեջ այն մասին է խոսվում, որ երկու տոները սահմանված են մի օրում: Քանի որ նույն ճառի մի այլ տեղում այսպես է ասում. «Բայց այժմ Աստծու հայտնության տոնն է, քանզի Աստված երևաց մարդկային ծնունդով»: Եվ այսպես երկու տոները զուգակցեց:

Յույներն այս էլ են ասում, թե երկու տոնն էլ՝ ծննդյան և մկրտության, կոչվում են հայտնություն: Այս բոլորից հետևում է, որ ոչ թե դեկտեմբերի 25-ն է կոչվել հայտնության օր, այլ հունվարի վեցը: Ոչ հույների և ոչ էլ մյուս այլազգիների մոտ լսված չէ, որ գոյություն ունեցած լինի երկու հայտնություն. եղել է միայն մեկը, ուստի երբ հայտնություն է ասում, բայց ծննդյան մասին է խոսում, պարզ է, որ միևնույն օրն է մատնացույց անում:

Դարձյալ, մկրտության այդ ճառից հույները վերցնում են հետևյալ վկայությունը. «Եվ ահա ծնունդը վայելչապես տոնեցինք»: Եվ նրա հիման վրա եզրակացնում են, թե Քրիստոսի գործերն այլ են, խորհուրդը՝ այլ: Ես ընդունում եմ, որ այլ է գործը և այլ՝ խորհուրդը, բայց ոչ ուրիշ օրում, քանի որ առաջին խոսքը վկայում է. «Ծնունդիս տոնը,- ասում է,- վայելչապես տոնեցինք» և

ոչ ծննդյանը, որովհետև, եթե այդ 12 օր հետո լիներ, պետք է ասեր ծնունդինը և ոչ՝ ծնունդիսը: Դարձյալ, եթե երկու տոնը մեկ օրում չհանդիպեր, էլ ինչո՞ւ էր հիշում ծննդյան օրը, ոչ թե միայն խորհուրդն ասում, ինչպես ասում է ուրիշ՝ մարդեղության և չարչարանքների խորհուրդների մասին: Բայց դու երկրորդականների մասին խոսում ես, իսկ գլխավորներինը զանց առնում, ինչպես որ հենց ինքը՝ Գրիգորն է ասում: Եվ ահա ուշադրություն դարձրու, թե նա ինչ է ասում մկրտության ճառում. «Աստծու միածին որդու երեք ծնունդներն են մեզ հայտնի՝ մարմին առնելը, մկրտվելը և հարություն առնելը»: Ապա նույնին ավելացնելով ասում է. «Այս բոլոր ծնունդներն էլ պատվելի են ինձ. առաջինը՝ Քրիստոսի երևալը՝ շնչառությամբ և կենդանածնությամբ, երկրորդը՝ մարմնանալով և մկրտությամբ, որով և ինքը մկրտվեց և երրորդ՝ հարությամբ, ինչպես որ ինքը հարություն առավ: Ինչպես որ նա առաջինը հանդիսացավ եղբայրների մեջ, այնպես էլ նա առաջինը եղավ և պատվի արժանացավ մահացածներից»: Ներկայումս այս երկուսի՝ առաջին և վերջին ծննդյան մասին խոսելու ժամանակը չէ, իսկ միջին ծննդյան մասին ինձ անհրաժեշտ է խոսել, որին և անվանակից է լուսավորության օրը:

Եվ ահա ովքեր միտք ունեն, կնկատեն երկու տոների զուգակցությունը՝ մեկ ծնունդ անվանեց մարմնանալը և միևնույն օրը մկրտվելը, որը, ինչպես ասում է, անվանեց «լուսավորության օր»: Բայց մենք տեսնում ենք, որ հույները Չաքարիայի պապանձման միջոցով հնարում են Եղիսաբեթի վեցամսյա հղիությունը, որի հիման վրա մենք պարտավոր ենք որոշել Գաբրիելի ավետարանության օրը: Հույներն այնպես են ներկայացնում, թե այն օրը, որ օրը պապանձվեց Չաքարիան, նույն օրն էլ նա մերձեցել է իր կնոջը, և Եղիսաբեթը հղիացել է: Այս հիման վրա հաշվելով հարյուր ութսուն օր, Գաբրիելի ավետման օրը հասցնում են

մարտի 17-ը: Այստեղից հետո, ըստ անդրանկածնության տասնամյա օրերի, հաշվում են երկու հարյուր յոթանասունվեց օր սուրբ Աստվածածնի հղիությունը և ծնունդը հասցնում դեկտեմբերի 25-ին: Աղաչում են, լուրջ ուշադրություն դարձրու, և մենք քննության առնենք այս: Դիմենք նաև Հին ուխտի բնագրին և ապա Ավետարանին: Հին ուխտի բնագրում այսպես է ասված. «Ինձ նվիրված տոները թող սուրբ կոչվեն ձեր կողմից»: «Տարեկան երեք անգամ տոնեցեք», «Բոլոր արունները թող գան իմ առաջ, և դուք պատարագ մատուցեք Տիրոջը»: Եվ առաջ անցնելով շարունակում է. «Ամեն ամսվա յոթներորդ օրը թող սուրբ լինի ձեզ համար. ոչ մի գործ մի արեք այդ օրը»: «Եվ միայն յոթներորդ ամսվա տասներորդ օրը թող նվիրական ու սուրբ լինի ձեզ համար»: «Խոնարհեցեք ձեր անձը ամսվա իններորդ օրը երեկոյան, և այն անձնավորությունը, որ չի խոնարհվի, թող սպանության ենթարկվի իր ժողովրդի կողմից»: «Տասներորդ օրը թող նվիրական ու սուրբ լինի ձեզ համար, քանի որ այդ օրը ձեր քավության օրն է, ոչ մի գործ մի արեք այդ օրը»: «Շաբաթից շաբաթ հանգիստ է: Մատուցեցեք պատարագ Տիրոջը՝ ձեր քավության համար»: «Նույն յոթներորդ ամսվա տասնհինգերորդ օրը՝ տաղավարահաց կոչվող տոնն է, թող այն սուրբ լինի ձեզ համար, այդ օրն աշխատանք մի կատարեք»: «Հանգստյան շաբաթ օրը գտնվեցեք տաճարում՝ յոթն օր պատարագ մատուցեցեք Տիրոջը»: «Յոթներորդ օրը թող սուրբ համարվի, շաբաթը՝ հանգիստ, ոչ մի գործ մի արեք այդ օրը»: Այս է հին ուխտի բնագրից:

Եվ ահա Չաքարիայի պապանձումը, իրապես, թշրին ամսի տասին է, քանի որ նա է յոթերորդ ամիսը, և նա է քավության օրը, երբ քահանայապետը տարեկան մեկ անգամ մտնում էր սրբության սրբոցը: Այդ վկայում է Պողոս Առաքյալը: Բայց այդ նույն օրն

անպատշաճ էր, որ Ջաքարիան մերձենար իր կնոջը, որովհետև նա էր այդ տարվա քահանայապետը, տաղավարահարաց մեծ տոնն առջևում էր, ողջ Իսրայելն այնտեղ էր հավաքված, որպեսզի տոնի յոթն օր տաղավարահարաց տոնը, ուստի չէր պատշաճում, որ քահանայապետը թողներ ժողովուրդը և գնար իր տուն, ըստ որում, ոչ թե երուսաղեմում, այլ բացօթյա էր ապրում: Այս առթիվ վկա է ինձ սուրբ ավետարանը: Այնտեղ գրված է այսպես. «Ժողովուրդն ակնդետ սպասում էր Ջաքարիային և զարմանում, թե նա ինչո՞ւ է ուշանում տաճարում»: Երբ նա դուրս եկավ, չէր կարողանում խոսել նրանց հետ, դրանից իմացան, որ նա տեսիլք է տեսել տաճարում: Նա նշանացի էր խոսում իրենց հետ և պապանձված վիճակում էր: Երբ լրացան նրա պաշտամունքի օրերը, գնաց տուն»: Ահա այս օրերից հետո է, որ հղիացավ նրա կինը՝ Եղիսաբեթը: Այս ամենից պարզ երևում է, որ տոնական օրերը վերջանալուց հետո է Ջաքարիան մերձեցել իր կնոջը: Այս փաստն առավել հաստատելու նպատակով է, որ նա երկու անգամ կրկնում է, թե՛ «պաշտման օրերը ավարտվելուց հետո» և դարձյալ՝ «այդ օրերից հետո»: Միտք ունեցողներից որևէ մեկը մի՞թե չգիտե այս: Եթե մինչև իսկ ժողովրդին հանձնարարված էր սրբագործվել, և պատվել ոչ միայն տոնը, այլև ամսամուտը և առաջիկա օրվա երեկոն ինչպե՞ս կարող էր երկու գլխավոր տոների միջև ընկած ժամանակում Ջաքարիան թողնել ժողովուրդը, գնալ տուն և մերձենալ կնոջը, և կամ թե չէ՝ (գնալ) հենց նույն տոնի օրը: Պետք չէ մեզ հակառակել և վիճաբանել, որպեսզի ցույց տանք և պարծենանք ճշմարտության մեր արվեստով, այլ առաջնորդվենք ճշմարտությամբ և աստվածային գրքերով:

Եվ այսպես հայտնի եղավ, որ թշրին ամսի 10-ին, այսինքն՝ սեպտեմբերի 27-ին, տեղի է ունեցել Ջաքարիայի պապանձումը,

իսկ թշրին ամսի 29-ին, այսինքն՝ հոկտեմբերի 9-ին՝ մերձեցումը եղիսաբեթին և նրա հղիությունը: Վեց ամիսը հաշվելով 180 օր, հասնում է նիսան ամսի 16-ին, որը համապատասխանում է հռոմեական ապրիլ ամսի վեցին, երբ եղել է սուրբ կույսի ավետիքը: Հաշվելով անդրանկածնության տասնամյա ժամանակը, անում է 276 օր, որը ավարտվում է տիբեթ ամսվա մեկին և համապատասխանում հունվարի վեցին՝ հռոմեական ամսաթվով: Ահա այս է, որի վրա մենք հաստատում և անխախտ կանգնած ենք: Աստված չանի, որ մենք տոները երկուսի բաժանենք. պարտավոր ենք այն կատարել նույն օրում և՛ ծնունդը, և՛ մկրտությունը: Երկու տոները մի օրում սահմանած կարգն անխախտ պահելով, հետևենք Նիկիայի սուրբ առաքյալներին, և Նիկիայի երանելի հայրերին, և մեր ուսուցիչներին, որին չհետևեցին հույները ոչ այն պատճառով, որ այդ պարզ չէր նրանց:

Շատ ժամանակներ առաջ հույների ընդունած կարգը մուտք գործեց և մեր երկիրը՝ մեզ մոտ ճշմարտությանն անտեղյակ լինելու հետևանքով: Շատ տարիներ անցան, մինչև Հովհանն կաթողիկոսի ժամանակը, որը Մանդակունի տոհմից էր: Եվ ահա սա, նպատակ ունենալով պարզել ճշմարտությունը, քննեց և հասու եղավ, ուստի հրամայեց հրաժարվել, որից հետո մենք հետևեցինք առաքելականին:

Եվ ահա մենք այսպես կպատասխանենք հույներին. մենք ձեր սուրբ հայրերի աշակերտներն ենք, որոնք հավաքվել էին Նիկիայում, և ինչ որ սովորել ենք, հաստատուն ենք պահում ու չենք շեղվում, իսկ որ դուք ձեր հայրերի ճանապարհով չեք գնում, թվում է, թե առաջնորդվում եք հրեաների կրքով: Ինչպես որ նրանք սամարացիներին սովորեցրին ու սամարացիները սովորեցին ու պահեցին իսկ հրեաները, որ սովորեցրին, բայց նրա վրա հաստատուն չմնացին: Եվ դուք ահա նրանց եք նմանվում, իսկ այդ

մեզ ամենևին էլ չի վնասում: Բայց մենք ավելի հաստատուն ենք, քան սամարացիները, առավել բարձրագույն և աստվածային: Մենք ձեզ պատասխանելու խոսք չունենք, քանի որ դուք չեք հետևում ճշմարտությանը, այլ միշտ ձգտում եք իշխանության, բռնության և ճարտարության:

Ինձ հայտնի են փոքր թվով հույներ, որոնք այդ երկու տոնը մեկ օրում տոնում էին մինչև Յուստինիանոս կայսրը: Իսկ հետո, կայսեր հարկադրանքով, խոտոր տոնն ընդունեցին բոլոր տեղերում՝ Երուսաղեմում, Ղեզնում, Աղեքսանդրիայում և ողջ քրիստոնյա աշխարհում: Բայց մենք չպետք է ավելի վախենանք մարդկային երկյուղից, քան՝ աստվածայինից: Եթե ձեզ հաճելի է թվում, ես մեջ կբերեմ այն, ինչ Յոբն է ասել. «Եթե ես ինչ-որ մոլորված եմ, ապա ինձ խելքի բերեք»: Բայց նրանք խոտան են դուրս բերում ճշմարտության խոսքը, սակայն մենք չենք շեղվի մեր հայրերի ճանապարհից:

Եվ այդ մենք ցույց կտանք, թե հայտնության տոնը որ ժողովրդի մոտ որ ամսում և ամսի քանիսին է լինում:

Առաջին. Հայտնության տոնը երբայական տոմարով լինում է տբիթ ամսվա 21-ին:

Երկրորդ. Հայտնության տոնը ասորական տոմարով տեղի է ունենում միշտ քանուն ամսի 6-ին:

Երրորդ. Հայտնությունը արաբական տոմարով տեղի է ունենում միշտ արսոն ամսի 21-ին:

Չորրորդ. Հայտնությունը եթովպիական տոմարով տեղի է ունենում թերաս ամսի 11-ին:

Հինգերորդ. Հայտնությունը եգիպտական տոմարով տեղի է ունենում տուբիլ ամսվա 11-ին:

Վեցերորդ. Հայտնությունը մակեդոնական տոմարով տեղի է ունենում միշտ մակատրիոն ամսի 11-ին:

Յոթերորդ. Հայտնությունը հունական տոմարով տեղի է ունենում միշտ եվզեցիոս ամսի 6-ին:

Ութերորդ. Հայտնությունը հռոմեական տոմարով տեղի է ունենում միշտ հունվար ամսի 6-ին:

Իններորդ. Հայտնությունը հայկական տոմարով փոփոխվում է ամեն չորս տարին մեկ անգամ: Իսկ թե այդ ինչո՞ւ է այդպես լինում և կամ թե ինչո՞ւ նա հաստատուն չէ այլ ժողովուրդների տոմարների նման, կբացատրեն իր տեղում ըստ տոմարական կարգի:

Կան շատ մարդիկ, որոնց հարցնում են, թե ինչո՞ւ հայտնության սուրբ օրը որոշակի հայտնի չէ և տոնում են այն օրը, որը պատահում է: Պատասխանենք սրան:

Սուրբ հայրերից ավանդություն ունենք, որ հայտնությունը իլուլ ամսի 20-ին է տեղի ունեցել, այն օրն էլ տոնում ենք: Սրա պատճառը հետևյալն է: Հայտնության սուրբ տոնը հրեական տոն չէ, այլ՝ քրիստոնեական, և որովհետև կարիք չկա առանձնացնելու որևէ մեկի կողմից, չի հաստատվել ըստ տարվա եղանակների և ոչ էլ օր է նշանակվել, ուստի և՛ ըստ ամսի օրերի, ինչպես որ պատահում է, այն օրն էլ տոնվում էր: Բայց հայտնության սուրբ օրվա մասին ոմանք ասացին, որ ուրբաթ օրն է հանդիպել, որովհետև նախամարդը ստեղծված է եղել ուրբաթ օրը: Ոմանք էլ շաբաթ օրն են ասում: Բայց ես համաձայն եմ սուրբ Պողիկարպոսի հետ, քանի որ նա աշակերտ էր Հովհաննես ավետարանիչի և ականջալուր էր եղել Փրկչի մասին նրա արած բոլոր պատմություններին, իսկ նա ասում է, թե կիրակի է եղել ծնունդը: Իսկապես, վայել էր, որ հենց այն օրը լիներ, որը արարածների ստեղծման օրն է և բոլոր փրկվողներին այս օրը նշանակվեց և իր ծննդյամբ աշխարհ մտավ՝ ամբողջապես պահպանելով կուսությունը: Իսկ հետո տեղի ունեցավ

հարությունը, կնքված վեմի տակ մնալը, իսկ դրանից առաջ՝ արձավիճյաց օրը Երուսաղեմ մուտք գործելը, հոգու իջնելն առաքյալների վրա: Իսկ մկրտության օրը՝ երեսուն տարի հետո, ամսվա նույն օրը, ասում է, եղավ չորեքշաբթի օրը: Եվ մկրտության խորհուրդը ու Արեգակի պարբերաշրջանի օրը ցույց են տալիս, որ իրոք այն տեղի է ունեցել չորրորդ օրը: Իսրայելի չորրորդ գավակից ծնվեց Փրկիչը՝ ըստ Առաքյալի այն խոսքերի, թե «Հուդայի ցեղից ծագեց մեր տերը»: Բայց քանի որ ամսվա մի օրում երկու տոներ են հանդիպում, ուստի անհնարին էր, որ շաբաթվա օրը հայտնվի, որովհետև նրանք տարբեր օրերում են հանդիպում: Բայց մենք գիտենք, թե ամսվա քանիսին է եղել, ուստի շաբաթօրյա մաքրությամբ ու պահքով նախապես պարկեշտանում ենք և տոնում ենք այն օրը, որ հանդիպում է նաև յոթն օր հետո, քանի որ օրը և ժամանակը որոշակի իշխանությամբ չի պարփակվում, ինչպես նշված է տերունական խոսքում. «Մարդու որդին տեր է և շաբաթի»:

ՋԱՏԿԻ ՃԱՌԸ

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՏԻՐՈՋ ՋԱՏԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՏՈՄԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Ջատկի սուրբ տոնը մենք սովորեցինք Մովսեսից հիմք ունենալով իսրայելցիների Եգիպտոսից դուրս գալը, քանի որ Սուրբ գրքում գրված է հետևյալը. «Խոսեց տերը Մովսեսի և Ահարոնի հետ Եգիպտացոց երկրում և ասաց. « Այս ամիսը թող ձեզ լինի ամիսների սկիզբը, տարվա ամիսների առաջինը լինի»: Ապա շարունակելով ասում է.«Այդ ամսվա տասներորդ օրը յուրաքանչյուր ընտանիք թող վերցնի մեկական ոչխար, իսկ եթե ըստ տների հնարավոր չէ աղքատության պատճառով՝ տոհմից հանգանակելով»: Այնուհետև ավելացնում է. «Թող ոչխարը պահեն տվյալ ամսվա 14-րդ օրը, ապա մորթեն երեկոյան և արյունից քսեն դռան վերին շրջանակին և նրա երկու սյուներին, որպեսզի այն պահի և փրկի անդրանիկ տղաներին սպանությունից»: Արդ, թեպետ այդ սովերն է ապագայի, ինչպես համարում է աստվածային Առաքյալը Քրիստոսի օրինակով, քանի որ Քրիստոսը ևս առաջին ամսվա տասին՝ արմավենյաց օրը մտավ Երուսաղեմ և պահվեց այնտեղ մինչև ամսվա տասնչորսը, և այդ օրը երեկոյան տվեց կենարար մարմինը սուրբ առաքյալներին՝ իբրև կերակուր և կատարեց դրա խորհուրդը այդ առթիվ: Բայց այժմ մեր նպատակը չէ առաջիկայում մեկնաբանել այն, այլ՝ խոսել զատկի պատմության մասին և ասել՝ թե այն որտեղի՞ց և ումի՞ց է սկսվել:

Ջատկի սուրբ տոնը Տերը հաստատել է Լուսնի պարբերաշրջանի վրա: Լսիր նրա խոսքը, որ ասում է թե՝ «Ամսվա 14-ին՝

լիալուսնին»։ Նույնը Փիլոնն է ասում, քանի որ ամիսները լուսնական էին հաշվում՝ սկսելով Լուսնի լրումից, որովհետև Մովսեսից առաջ եբրայեցիները դեռ չուներին արեգակնային ամիսներ, և ոչ էլ այն ժամանակ չեղածը նորեն ստեղծեցին, այլ, ինչպես ասացինք, լուսնական ամիսներ էին։ Ուշադրություն դարձրու Տիրոջ խոսքի վրա, որը չասաց, թե՝ թող այս ամիսը նոր ամիսների սկիզբ լինի, որոնք գոյություն չուներին, այլ թե՝ «Այս ամիսը թող ձեր ամիսների սկիզբը լինի, տարվա ամիսների առաջինը»։ Պարզ է, որ այստեղ նկատի է ունեցված լուսնական ամիսները, քանի որ գործածվողը լուսնական ամիսներն էին, իսկ եբրայեցիների մոտ արեգակնային տարին դեռ չկար։ Նրանք առաջնորդվում էին քաղղեական տարով և ամիսներով։ Սակայն Լուսնի լրումը կամայականորեն չէր սահմանված, այլ սկիզբը վերցրած է արարչության Լուսնի լրումը և նույն ձևով էլ սահմանված էր։ Արարչության օրը Լուսինը 10-օրական էր, թեև մի օր էր, որ նա գոյություն ուներ, սակայն Լուսնի սկավառակը 14 օրվա տեսք ուներ։ Անկարելի էր, իհարկե, որ իր լինելության առաջին օրը Լուսինը թերի, կիսակատար լիներ, երբ բոլոր արարածները լիալիր և կատարյալ ստեղծվեցին, ինչպես, օրինակ՝ բանջարները, որ նորաբույս չէին, այլ՝ հասուն, ծառերը կատարյալ էին և պտղալից, մարդը երեսնամյա հասակով էր։ Նույն օրինակով և Լուսինը 14-օրյա էր՝ լուսի կատարյալ լրությամբ։

Լուսնի 14-օրյա ստեղծումը ընդունում են նաև եբրայեցի վարդապետները։ Նրա վրա հաստատվեցին ամիսները և այդ հիման վրա հնարավորություն եղավ գտնել նաև արեգակնային տարին։ Եբրայեցի վարդապետները գտնում են, որ Արեգակն ու Լուսինը չորրորդ օրն են ստեղծվել, և այդ հիման վրա Լուսնի և Արեգակի հավասարությունը դնում են հենց այդ օրը՝ գտնելով, որ ստեղծագործությունը գարնանային գիշերահավասարին է տեղի

ունեցել, իսկ մարդը ստեղծվել է վեցերորդ օրը: Այս օրվանից սկսելով իրենց հաշվումները, հանգում են տասներկուամսյա կատարյալ տարվա՝ հինգ օր հավելումով, որը հաշվում են մարդու ստեղծումից առաջ եղած օրերը:

Եվ այսպես, հայտնի է, թե տարին հիմնված է Արեգակի պարբերաշրջանի վրա, իսկ ամիսը՝ Լուսնի: Այդ է վկայում աստվածային նախասացությունը, թե՛ «Թող լինեն նշաններ, ժամանակներ, օրեր և տարիներ»: Սուրբ գրքում ևս ասված է. «Աստված ստեղծեց երկու մեծամեծ լուսատուներ, նրանցից մեծին՝ կառավարելու ցերեկը, իսկ մյուսը՝ փոքր լուսատուին և աստղերը՝ կառավարելու գիշերը և բաժանելու լույսը խավարից»:

Լուսնի մեծության չափի, նրա գրաված դիրքի, կառավարման, զատման, աստղերի և այլ կարգի երևույթների մասին առայժմ չենք խոսում. մենք դրանց կանդրադառնանք, երբ կամփոփենք սուրբ զատկի խորհուրդը, կներկայացնենք բոլոր ազգերի տոմարը և կպատմենք, թե այդ մասին ինչ են ասել հեթանոսական և եկեղեցական գիտնականները:

Տվյալ դեպքում մենք ուղեցույց կընդունենք Տիրոջ այն հանձնարարությունը, որ տվել է Մովսեսին, ասելով. «Այս ամիսը» (այս ասելով նա ցույց է տալիս ամսվա վաղեմությունը) «թող լինի ամիսների սկիզբը, թող ձեզ համար տարվա ամիսների մեջ առաջինը լինի»: Լուսնի լրման գլուխը ցույց է տալիս պարբերաշրջանի ընթացքը: Դարձյալ՝ «Ոչխար վերցրեք ամսվա տասներորդ օրը»: Այս տասնյակ օրերն ունեն 240 ժամ, որոնք պետք է նկատի ունենալ ցերեկային ժամեր՝ արեգակնային, ծագողական, իսկ այդ՝ Քրիստոսի օրինակով է: Իսկ պահել «մինչև ամսվա 14-ը» ասելով՝ բացահայտ է, որ հանձնարարում է լրումը հասկանալ, քանի որ ոչ միայն զոհաբերությունն է Քրիստոսի օրինակով, այլև՝ իր իսկ Լուսնի լրումը ինչպես ընդունելի է համարվել, ինչպես

ընդունելի է թվացել ասել բոլոր սուրբ հայրերին, այդ թվում նաև Քրիստոսին խոստովանող Հայաստանի իմ պսակավոր հայր Գրիգորը, որն ասել է, թե՝ երկրորդ լուսատուն, գիշերվա կառավարողը լինելով, օրինակ է տալիս Աստծու միածին որդու պատանի մեջ դրվելը, թաղվելը՝ իբրև նշանակ մահացածների թաղման և հարության:

Ջատկի տոնը եբրայեցիների մոտ, նրանց լեզվով «փասկա» է կոչվում, որը թարգմանվում է «անցում», որը տեղի է ունեցել Եգիպտոսից դեպի Քանանացոց երկիրը: Այս անվան մասին երանելի Գրիգոր Աստվածաբանը հետևյալն է ասում.

«Ոմանք կարծում են, թե այս անունը չարչարանքներից փրկություն գտնելու համար է դրված, իսկ հետո հելլենները «փյուրը» փոխել են «պի»-ի, իսկ «կեն»-ը՝ «քի»-ի և Փրկչին «պասքա» անվանել: Մովսեսի «Երկրորդ օրինաց» մեջ ասած այն խոսքը, թե՝ «Յոթ օր բաղարջ կուտես նրա հետ, քանի որ հացը չարչարանքի համար է»:

Եբրայեցի վարդապետներն ասում են, թե Մովսեսն անպատում զատկի երեք տոն է սահմանել, բայց հետո, երբ ժողովուրդը հակառակել է, դադարել են սահմանված կարգերը մինչև Իսրայելի որդիների Հորդանան անցնելու օրը, որն առաջին անսվա տասներորդ օրն է: Այդ օրը «տասը» ասելով նա նկատի չունի լուսնական օրը, քանի որ նկատի ունի ոչ թե անսվա տասը, այլ՝ Լուսնի առաջին անսվա, որ նրա 18-րդ էր (արեգակնային օրվա հաշվով), իսկ լուսնային՝ տասը: Մեծ խորհրդի այս «տասը», որի ժամանակ ոչխար վերցրին՝ մկրտության օրինակն է, երբ Հորդանանից անցան՝ Քրիստոսի արմավենյաց օրվան Երուսաղեմ գալուն:

Հետուն առաջին անսվա 22-ին է զատիկ տոնել, բայց լուսնական օրերով հաշվել է 14: Նա վերականգնել է նաև անա-

պատում խախտված տոների կարգը և նորից սկիզբ է դրել այդ կարգերի ու օրենքների, ինչպես արել էր Մովսեսը Եգիպտոսից դուրս գալիս, որովհետև Հորդանան գետից անցումն էլ կոչվում է «ելք» Եգիպտոսից: Այս մասին մենք ժամանակին խոսել ենք մեր ժամանակագրական կանոններում:

Ասվում է, որ ոմանց կողմից գատիկը տոնվել է նաև Եգե-կիայի ժամանակ, բայց ոչ թե առաջին ամսում, այլ՝ երկրորդում: Իսկ այն տոնվել է ոչ օրինապես, այլ՝ անկարգ, քանի որ խառնակ է եղել և շփոթ: Տոնակատարությունն այնուհետև դադարում է մինչև Հովսիա թագավորի 18-րդ տարին: Հետագայում տոնվել է և նորից դադարել մինչև Ջորաբաբելի ժամանակը և տաճարի կառուցումը: Այնուհետև Եզրասը, նորոգելով կարգերը, եբրայեցի ժողովրդի համար կարգում է Լուսնի տասնիննամյա պարբերա-շրջանը: Սրանից հետո գատիկն անխափան տոնվել է մինչև Փրկչի խաչելությունը, երբ Լուսնի լրումը հանդիպեց նիսան ամսի 14-ին, հինգշաբթի օրը, համընկնելով Եգիպտոսից իսրայելցիների դուրս գալու օրվա հետ: Այդ ժամանակ է, որ մենք նրա պատվական արյունով փրկվեցինք և ստորացած վիճակից վեր բարձրացանք՝ ճաշակելով ճշմարիտ Աստծու գառան մարմինը:

Սրանից հետո սուրբ առաքյալներն ամեն տարի գալիս էին Երուսաղեմ և կատարում Փրկչի չարչարանքի օրվա հիշատակը, տոնում էին հարության օրը և աստվածային հրաշագործություններով շատերին քրիստոնյա դարձնում: Նրանք կատարեցին մկրտությունը մինչև Վեսպասիանոս կայսրի երկրորդ տարին, որի ժամանակ և տեղի ունեցավ տաճարի վերջին ավերումը, Երու-սաղեմի պաշարումը, կոտորածն ու գերեվարությունը: Այն ժամա-նակ էր, որ սուրբ Հոգուց հանձնարարված էր քրիստոնյաներին, որ նրանցից ոչ մեկը այդ տոնին չմնա Երուսաղեմում, որպեսզի

ազատվի վերահաս չարիքից: Եվ քրիստոնյաները, դրսում տեղ-տեղ հավաքվելով, տոնում էին սուրբ զատիկը:

Դրանից հետո Արիստիդես Աթենացի Մերի փիլիսոփան՝ Կոնդրատի ընկերը, որն Առաքյալի ունկնդիրն էր եղել, կազմեց Լուսնի տասնիններյակը հռոմեացիների համար: Նա, նմանություները հիմք ընդունելով, ասաց. «Քանի որ արարչության սկիզբը եղել է ապրիլի մեկը, իսկ չորրորդ օրը ստեղծվել է Լուսինը, ուստի ապրիլի չորսն էլ համապատասխանում է Լուսնի տասնչորսին»: Նա այն էլ դրել է բոլորակի գլուխը: Այդ նույն օրն է հանդիպում միսան ամսի 14-ը, լրումը և անվերադրությունը:

Նրանից հետո Ղևոնդեսը՝ Որոգինեսի հայրը, կազմեց Լուսնի տասնիններյակը եգիպտացիների և եթովպացիների համար:

Այնուհետև Որոգինեսը՝ նրա որդին, նման ձևով կազմեց Լուսնի տասնիններյակը արաբացիների և մակեդոնացիների համար՝ հիմք վերցնելով եբրայեցիների հաշվումը:

Նրանից հետո Անատոլիս եպիսկոպոսը կազմեց Լուսնի տասնիններյակը լավոդիկացիների համար՝ հիմք վերցնելով հունականը:

Եվ ահա, թեև այս ամենն այսպես կարգվեց, սակայն ոչ բոլոր երկրներում այն ընդունվեց՝ քրիստոնյաների նկատմամբ եղած նեղիչ հալածանքների պատճառով նրանք տոնում էին հրեաների հետ միասին խառը և անմաքուր՝ մինչև երանելի Կոստանդիանոս կայսրի ժամանակները և Նիկիայի սուրբ ժողովը: Եվ կայսրը ասաց, թե՝ «Պետք չէ այսուհետև զատիկը տոնել տիրասպան հրեաների հետ խառը»: Նա հրամայեց օգտագործել այն տասնիններյակը, որը կարգված է մախնիների կողմից: Կարգադրեց աշակերտներ վերցնել քրիստոնյա բոլոր ժողովուրդներից, նրանց տոմար սովորեցնել և զատել քրիստոնեականը

հրեականից: Թեպետև կայսեր հրամանը գործադրվեց, բայց բոլոր վայրերում չէ, որ կարելի էր միօրինակ կերպով կիրառել:

Դրանից հետո, Կոստանդիանոսի որդի Կոստանդինի ժամանակ, Մագնոս եպիսկոպոսի եղբայր Անդրեասը կարգեց երկու հարյուր տարիների մի տոմար, որը սակայն անթերի չէր: Անդրեասի կազմած երկու հարյուրամյա տոմարը վերջացավ Յուստինիանոս կայսեր տարիներին, և նոր տոմար կազմելու խնդիրը երկար ժամանակ քննարկման առարկա դարձավ հնուտ գիտնականների կողմից, որովհետև հնարավոր չէր լինում իննատասներյակ բոլորակը ճշտությամբ համապատասխանեցնել կազմված 95 տարիների պարբերաշրջանի հետ: Շատերին թվաց նրա կարգավորումն անկարելի, որովհետև բոլորակի տարիներից շատերը չէին զուգակցվում բեսեքիստոնի հետ: Այդ պատճառով այն քննարկման խնդիր դարձավ Աղեքսանդրիայում, որը հանդիսանում է գիտությունների մայրաքաղաք: Եվ այնտեղ կազմվեց 532 տարիների մի պարբերաշրջան, որն անթերի ճշտությամբ ցույց է տալիս զատկի տասնչորսյակ օրերը: Եվ այս` ոչ թե վաղ ժամանակվա կարգվածն էր, որ ձևափոխության էր ենթարկված, այլ նույն տասնչորսյակը` տասնիններյակների հետ հարմարեցվածը, որպեսզի այն անթերի և պարզ լինի: Այս բոլորակի կազմողների ղեկավարն էր էաս Աղեքսանդրացին, որն իրեն իբրև ընկերներ ուներ հրեա Փենեհեզ Տիբերացուն, ասորի Գաբրիելին, արաբ Յովհաննին, եթովպացի Աբիդենին, մակեդոնացի Սերգիին, հույն Եվլոզիին, հռոմեացի Գիզանին: Էասն ուներ եգիպտացի այլ ընկերներ ևս, որոնց անունները չհիշեցինք. ասվում է, թե բոլորը միասին երեսունվեց հոգի էին: Այդ ժամանակ, ասում է, հանդես եկավ Իրիոն անունով մի վարդապետ Կոստանդնուպոլսի արքունիքից, որն ազգությամբ տեղացի չէր, այլ` օտար. ոմանք նրան համարում են աղեքսանդրացի: Սա, ասում է, չարությամբ էր լցված

Աղեքսանդրիայում գումարված գիտնականների ժողովի նկատմամբ այն բանի համար, որ արհամարհել են իբրև թե իրեն և չեն հրավիրել, սկսում է պայքարել ճշմարտության դեմ և մերժում նրանց կողմից կարգվածը, ինչպես և՛ նախնիների կողմից կարգվածը՝ համարելով նրանց տգետներ: Հակառակ եկեղեցական գրքերի, հակառակ բոլոր տեսակի ժամանակագրությունների և տոմարի, նա անձամբ կազմում է նորաձև ժամանակագրություն և Լուսնի տասնևհինգերյակը ապրիլի վեցից տեղափոխում ապրիլի հինգը՝ դնելով այն բոլորակի գլուխը: Նա հիմք է վերցնում եգիպտական փարմութ ամսի տասը, որին մենք պարմափյուր ենք ասում, և, հակառակ նախորդների, դնում այն բոլորակի գլուխը՝ լրումով և անվերադրությամբ: Նա մեղադրում է նրանց այն բանի համար, որ նրանք հետևել են եբրայական տոմարին, իսկ ինքը առաջնորդվել է եգիպտական տոմարով՝ ցանկանալով ցույց տալ, որ եթե Աղեքսանդրիայի գիտնականներն այն աստիճանի տգետ են, որ իրենք իրենց տոմարն անգամ չգիտեն, ապա ինչպե՞ս կարող են կազմել ուրիշի տոմարը:

Եվ այսպես նա կազմեց հռոմայեցիների տոմարը, ապրիլի հինգը դրեց բոլորակի գլուխը՝ նրա վերադիր նշանակելով 8-ը: Նա գտնում է, որ Լուսինը ստեղծման ժամանակ 13 օրական էր, գումարելով ութը հինգի հետ, այսինքն՝ վերադրի վրա ավելացնելով լրումը, այն դարձնում է հիմք: Ավելին, 13 թվերի լուսնական պարբերաշրջանը հարմարեցնելով արեգակնային պարբերաշրջանին, նրա վրա ավելացնում է տասնմեկ-տասնմեկ մինչև տասնևհինգերյակի և բոլորակի ավարտումը: Հետո նա 12 թվանշան է ավելացնում ըստ կարգի վերադրի վրա՝ տասնևհինգերյակի վերջից: Լրման վրա ավելացնում է 20 և դուրս է հանում 12 կամ 11, մինչև տասնևհինգերյակի և բոլորակի ավարտը, այնուհետև հանում է տասներկու-տասներկու տասնևհինգերյակի համար և անվաճև

առաջ խաղացնելով, պարծենում է իր արվեստի հնարամտության վրա: Խոտանելով նախորդների կատարած աշխատանքը, կայսեր հրամանի հարկադրանքով, նա իր կազմած բոլորակը հաստատության մեջ դրեց ամենուր: Սակայն մենք շատ հեռու ենք հավանություն տալու Իրիոնի խառնաշփոթ ժամանակագրությանը, որը հորինված է հակառակ աստվածային գրքերի: Չենք կարող ընդունել նրա խաբուսիկ տոմարը, որպեսզի չընկնենք սուրբ հայրերի նզովքի տակ: Քանի որ գրված է այսպես. «Անիծված է նա, ով զատիկ է կատարում տիրասպան հրեաների հետ և կամ՝ սամարացիների ու պողիանոսականների հետ: Անիծված է նա, ով զատիկ է անում Լուսնի 13-ին»: Չնայած Իրիոնը բյուրավոր անգամ փորձում է հնարանքներ գտնել, սակայն նա չի կարող ազատվել այս նզովներից, որովհետև ով որ մեկից խուսափում և մյուսի մեջ է շաղախվում, նման է այն մարդուն, որը քիչ անգամ աղոթում, բայց շատ անգամ հայիոյում է: Քանի որ, երբ շաբաթ օրը հանդիպում է չարաթիվ ապրիլի հինգը, Իրիոնը համարում է այն լրում և վեցին կատարում զատիկը, որը հանդիպում է նիսան ամսվա 6-ին հրեաների հետ, դրանով նա ոչինչ է համարում հայրերի նզովքը: Քանի որ հրեաները երբեք չեն տոնում զատիկը նիսան ամսի 15-ին, այլ միշտ տոնում են նիսան ամսի 16-ին՝ ինչպես նրանք, այնպես և սամարացիները, քանի որ սամարացիները նրանցից ավելի հաստատուն են կատարում, թեև նրանցից են սովորել: Պողիանոսականները ևս այդ նույն օրն են կատարում տոնը. երբ հանդիպում է լրման ժամանակը՝ կիրակի են անվանում, ինչպես որ հրեաները շաբաթ են ասում, թեև շաբաթ չէ:

Բայց մենք շատ հեռու ենք տոնելու նրանց հետ և ենթարկվելու նզովքի, քանի որ սուրբ հայրերի բոլոր ջանքերն այն է եղել, որպեսզի զատվենք նրանցից: Եվ մենք՝ հայաստանցիներս, շատ

Ճիշտ ենք անվանել Տիրոջ զատիկը՝ բոլոր հեթանոսական և հրեական տոներից «զատվելու» նշանակությամբ, մաքուր հետևելու Տիրոջը տոնից տոն, հանդեսից հանդես, ինչ որ Գրիգոր Աստվածաբանին հաճելի է եղել ասել: Այդ պատճառով է, որ սուրբ հայրերը հանձնարարեցին մեզ չտոնել եբրայեցիների լրման օրը, այլ ինչ օր որ Լուսնի լրումը շաբաթ օրը հանդիպի 14-ին, թողնել շաբաթը և գնալ հասնել Տիրոջ հարության կիրակին, կատարել խոհուրդը և պահել շաբաթի չարչարանքները: Այդ է պատճառը, որ զատկին հույները «պասխա» են ասում, որը թարգմանվում է «չարչարանք»: Իսկ եթե Լուսնի 14-ին հանդիպի կիրակի օրը՝ անհրաժեշտ է անցնել, չտոնել հրեաների հետ, այլ գնալ և հասնել մյուս շաբաթը: Դանդաղելու և երկմտելու հարկ չկա այդ վեց օրերի անցման համար: Հուսալով վստահիր , որ շաբաթ օրը վերջանում է չարչարանքի խորհուրդը, իսկ կիրակի՝ հարությունն է: Իսկ եթե Լուսնի 14-ի օրը հանդիպի շաբաթ օրվան, որը մի օրով անցնում է, մի տոնիր հրեաների հետ, այլ փոխիր սուտ կիրակին ճշմարիտ կիրակիով: Իհարկե, ոչ այնպես, ինչպես Պողիանոսականներն են հանդգնում անել, այլ թող շաբաթը մնա շաբաթ, և ոչ էլ այնպես՝ ինչպես հրեաներն են անում, երբ նրանք գողունի փոխում են շաբաթը, իսկ պողիանոսականները՝ կիրակին: Աստծու եկեղեցին կիրակին չի փոխում կիրակիի հետ և ոչ էլ շաբաթը՝ շաբաթի. իրական շաբաթին հետևում է մեծ հարության օրը: Եվ ահա պետք է Իրիոնի ճարտար ու խաբուսիկ արվեստով տարվել, որովհետև եթե քննելու լինենք, ճշմարտության հատիկ չենք գտնի, թողնում են դեռ հիշելու նզովքի տակ գտնվելը: Նրա արվեստը և ձևացումը հիմնված է քմահաճույքի վրա և ոչ՝ ճշմարտության: Այսպես, իր ժամանակագրության մեջ 5500 թվական է հաշվում մինչև Փրկչի ծնունդը և հիմնվում տապանի ծավալի մասին եղած վկայության վրա, որը եղել է հինգևկես կանգուն: Բայց ի՞նչ նմանություն կա

արկղի և ժամանակագրության միջև, և կամ ի՞նչ նմանություն գոյություն ունի Լուսնի տասներեքը նրա ստեղծված օրվա հետ: Երբ բոլոր արարածները կատարյալ և լիալիր ստեղծվեցին, ի՞նչի համար Լուսինը պետք է թերի և կիսակատար ստեղծված լիներ: Մենք գիտենք, որ բանջարները լիակատար ստեղծվեցին, կատարյալ ստեղծվեցին անասունները, նրանք պետք է լինեին այն ժամանակ պատրաստական հունձ և նյութ ծառայեին կերակրի համար: Ինչպես որ կինը, երբ ծնում է երեխան, Աստծու նախախնամությամբ, կաթը պատրաստի գտնվում է նրա ստինքների մեջ, այնպես էլ ծառերը սկզբից կատարյալ և պտղալից էին՝ ծառայելու իբրև կերակուր մարդկանց: Այդ մասին աստվածային խոսքն է վկայում. «Թող բխի երկրի վրա խոտի բանջարը և պտղաբեր ծառը, որի սերմերը թող լինեն իրենց նման»: Եվ ահա, երբ բոլոր արարածները լի ու լի ստեղծվեցին, չէր կարող Լուսինը թերի և կիսակատար լինել այլ անիվի բոլորակությամբ կատարյալ և լրիվ լույսով: Սակայն Իրիոնը ճշմարտություն չխոսեց, նրա ասածները վստահելի չեն և նրա բոլոր պնդումները Լուսնի 13-օրյա լրման և վերադրի գուգավորության մասին, ինչպես և 11 լրումների և նրանց վերադիրների մասին՝ իմաստ չունեն: Այսպես, ի՞նչ նմանություն գոյություն ունի Լուսնի 13 պարբերաշրջանը արեգակնային օրերի հետ, քանի որ ոչ երեսնական և ոչ էլ վաթսու-նական Լուսնի մատնացույց արված թվերը իմաստ չունեն: [Գոյություն ունեցող] երկու վատթարագույններից գուցե ավելի պատշաճավորը Երմոգենի ասածը կարելի լինի համարել, քան՝ Իրիոնինը, թեև երկուսն էլ շեղվում են ճշմարտությունից: Երմոգենն ասում է թե՛ «Լուսինը միօրյա ստեղծեց, քանի որ մի օր էր, որ տեղի էր ունեցել ստեղծագործությունը, Լուսինը Արեգակի հետ ստեղծվեցին միասին, մի տեղում և երկնականարում ծագված

վիճակում: Եվ ահա, երբ այժմ Լուսինը շարժվում է դեպի Արեգակը, այն անվանում ենք Լուսնի առաջին օր: Թեև սխալ է այս, բայց ավելի պատշաճավոր է, քան Իրիոնինը: Սակայն մեզ անհրաժեշտ է երկուսից էլ հեռու կանգնել: Բայց եթե ընդունենք, որ Իրիոնն ավելի հնարագետ է, քան մյուսները, այն դեպքում հարց կառաջանա՝ ինչպե՞ս է, որ նա վերցրել է այն հինգհարյուրամյա բուրրակը, որ կարգել է Էասը, ինչո՞ւ նա չի կազմել մի ուրիշը: Չի կազմել, որովհետև անկարելի է մի այլ հարմարավոր օրինակ գտնել, քան այն հինգհարյուրյա բուրրակն է, որը կազմել է Էասը: Բուրր նման գործերը, որոնք հիմնված են այսպիսի խախուտ հիմքի վրա, ձախողանքով կվերջանան, որքան էլ նրանք փորձեն եռանդուն ջանքեր թափել, քանի որ ճարտարությունը ճշմարտությունից դուրս է:

Բայց ի՞նչ հարկավոր է մեզ Իրիոնի ասածները մեջ բերել և ընդդիմախոսել: Թողնենք նրան և նրա հետևողներին իրենց աշակերտների ու համակրողների հետ, իսկ մենք տոնենք ոչ թե աշխարհիկ ձևով, այլ՝ աստվածաբար, ոչ թե երկրային, այլ՝ գերաշխարհիկ, ոչ թե արտաքին ցուցատեսքով, այլ՝ ճշմարտությամբ: Իսկ ինչ վերաբերում է մեզ, այն դեպքում, երբ հարցը վերաբերում է Տիրոջը, հետևենք սուրբ հայրերին, որպեսզի նրանց նզովքի տակ չմնանք: Մենք չենք տոնի գատիկը ամսի 12-ից, այսինքն՝ գարնանային գիշերահավասարից առաջ, այլ կտոնենք առաջին ամսում, քանի որ Քրիստոսը առաջին ամսում ենթարկվեց չարչարանքի, գարնանային գիշերահավասարից հետո, ինչպես որ նախամարդը ստեղծվեց գարնանային գիշերահավասարից հետո: Գարնանային գիշերահավասարից հետո, առաջին ամսում իսրայելցիները դուրս եկան Եգիպտոսից փրկվեցին փարավոնից և ազատվեցին կավագործությունից: Այդ նույն օրը և մենք փրկվե-

ցինք աներևույթ բռնավորից և նրա դասի դառը տառապանքներից, փրկվեցինք կավի մեղքերից Փրկչի չարչարանքների շնորհիվ: Պետք չէ մեզ տոնել տիրասպան հրեա ազգի հետ, որպեսզի մասնակից չլինենք նրանց մեղքերին և չենթարկվենք նզովքի: Պետք չէ մեզ տոնել Լուսնի 13-րդ օրը, որպեսզի տգետ և օրինազանց չհամարվենք ու չգտնվենք փակված դռան առջև՝ լսելով սպառնական խոսքը, թե՛ «Չեմ ճանաչում ձեզ»: Պետք չէ փոխել հայրերի սահմանած կարգը, պետք չէ ընդունել Լուսնի 14-ը ապրիլի հինգին, այլ ընդունել այնպես, ինչպես սահմանված է սուրբ հայրերի կողմից: Պետք չէ բոլորակի գլխին դնել ուրիշ մի լրում, այլ միայն այն, որը հանձնարարված է Տիրոջ կողմից, այսինքն՝ նիսան ամսի 14-ը և դրան համապատասխան մյուս ժողովուրդների ամսաթվերը: Էասյանները նիսան ամսի երեքն են կարգել բոլորակի սկիզբը և չեն շրջանցել նախորդը, քանի որ Անդրեասի տոմարի երկուհարյուրամյակը նիսանի երեքին վերջացավ, ուստի հինգհարյուրամյակի սկիզբը նիսանի երեքը եղավ, այդ է պատճառը, որ այն դրվեց բոլորակի գլուխը, սկսվեց ոչ թե Իսրայելի Եգիպտոսից դուրս գալու կամ խաչելության ժամանակից, այլ նույն հինգհարյուրակ բոլորակի, բայց հաշվեցին նիսան ամսի 14-ը, որը հրամայված էր Տիրոջ կողմից, որին և մենք կհետևենք:

Եվ ահա այժմ ի՞նչն է պակաս մնում, եթե ոչ՝ հայտնել առանձին ժողովուրդների տոմարների կարգավորությունը՝ սկսելով, ամենից առաջ, Եբրայական ժողովրդի տոմարական համակարգից, քանի որ նա է գլուխը և տիպարը մյուս ժողովուրդների տոմարների:

Արդ, եկեղեցական ավանդությունն ուսուցանում է մեզ տարեցտարի պահել բաղարջակիրաց օրը: Եթե 14 օրական

Լուսինը հանդիպում է ավելյաց չորսից մինչև քսանութը, այսինքն՝ ապրիլին է. պահում և տոնում ենք զատիկը, իսկ եթե ավելյաց չորսն է և այնտեղից մինչև ադար ամսվա վերջը Լուսինը հասնում է 12 օրականի, իսկ մյուս ամսում մի միավոր ավելանում է 12-ի վրա, որը կոչվում է նահանջ, այդ դեպքում այս ամսվա Լուսնի պարբերաշրջանի թիվը, մյուս ամսվա համեմատությամբ, պակաս է լինում, քան արեգակնային ամսինն է: Այդ այդպես է, որովհետև նահանջ տարի է մեջ ընկնում, միչև որ Լուսնի ընթացքը գալիս հասնում է Արեգակին: Եվ եթե այսպես չլիներ, այն դեպքում մեկ տարում երկու զատիկ կընկներ, դրա համար նահանջ ամիսները դուրս ենք հանում:

Անհրաժեշտ է գարնանային գիշերահավասարից հետո միշտ տոնել զատիկը, քանի որ նրա միջոցով մենք հասնում ենք առաջին ամիսը անհրաժեշտ հավելումով, քանի որ հնում առաջին ամսվա օրինակով և նմանությամբ էր հրամայում անել: Եկեղեցին իրավասու չէ ամսվա 12-ից առաջ զատիկ անել, ինչպես որ աստվածային Առաքյալն է ասում. «Առաջիններն անցան և ամեն ինչ նորոգվեց Քրիստոսով»: Եվ ահա այն տրտմությունը, որոնք կրեցին առաքյալները, պատրաստ լինենք կրելու նաև մենք՝ պահք պահենք և ուրախ լինենք Միածնի հարությունով՝ հաղորդվելով ճշմարիտ գառան մարմնով և արյունով, որը հանդիսանում է երկնային հացը: Դրա համար է, որ եկեղեցին անհրաժեշտ է համարում տարեցտարի կատարել բաղարջակիրաց զատիկը, որպեսզի հաստատուն մնա Փրկչի չարչարանքի հիշատակը:

Քանի որ շատերը չեն, որ ծանոթ են հաշիվների հետ, մանավանդ՝ շինականները, իսկ մեր Տիրոջ վարդապետությունը տարածվել ու սփռվել է ողջ աշխարհում, այդ պատճառով ես՝ Անանիա, որդի Յովհաննեսի Շիրակունի, կազմեցի հինգ հարյուր երեսուն տարիների բոլորակը՝ սկսելով աղեքսանդրյան թվականի

828-ից և հասցրի մինչև 1360 թվականը և դրոշմեցի նրա մեջ հինգ հարյուր տարիների աղյուսակը 28 հատվածներով՝ ամեն մի տարվա համար կարգելով առանձին - առանձին կանոն, որով ստացվեց 532 կանոն՝ ամեն մի կանոնին հատկացնելով մեկական տարի:

His Tract on Easter.
(Translated from the Armenian.)

Ananias of Shirak the counter, his discourse on the Lord's Zadik.

The feast of the holy Zadik we learned from Moses and from the exodus of Israel out of Egypt. For it is thus written:

'The Lord spake unto Moses and Aaron in the land of Egypt, and said: This month shall be unto you a beginning of months, shall be unto you first among the months of the year'. And antecedently he says: 'On the tenth day of this month let each of you take a lamb house by house, or, if not, then according to the houses of [your] clans, sharing together because of poverty.'

And in the same context he says: 'And it shall be kept until the 14th of this month; and they shall slay at eventide and sprinkle the lintel and the two posts with blood', which was to protect the first-born from the Destroyer. But however this was a shadow of what was to come, even as the divine apostle reckons it, and a pattern of Christ. For Christ himself entered on the tenth day of the first month into Jerusalem on the day of the Palms and fasted until the 14th day of the month; on the evening of which did he give his quickening body to his holy apostles to eat, and accomplished the mystery (i.e. sacrament) concerning it. But on the present occasion I am concerned not to interpret; but to give the history of Zadik; and would tell you whence it is and from whom.

The Lord fixed the holy feast of Zadik by the moon. Hear the word which says, 'the 14th day of the month', because the moon is then full. As also Philo says. For he reckons the month to be the lunation (lit. days of the moon) and the first day to be the beginning of the moon's growing full. For the Hebrews had no months previously to Moses;

nor on that occasion was anything established afresh, which was not. But as we said, it is lunar months of which he speaks. Look at the words. He did not say: This month shall be for you a beginning of months, anew, which [it] was not; but this: This month shall be for you a beginning of months, shall be first among the months of the year. It is clear that the months were lunar. But the [? +solar] year was not as yet established for the Hebrews, since they were using the Chaldaean year and months; and he [i. e. Moses] defined not the fullness [of the moon] to be the [completed] orbit, as being something secondary and accidental; but the moon as it was at its original creation, this is what he meant. For on the day of its creation the moon was a 14th days one; and although there was as yet but one day of the moon's existence, yet the fullness of its orb appeared to be that of 14 days. For it was impossible for the moon to be imperfect and half-complete on the day of its coming into existence. For all creation was full and complete as first fashioned. For instance the herbs were not undeveloped, but ripe, and the trees complete and full of fruit; and man was 30 years of age, though he was only one day as yet alive.

In the same way the moon also was a 14 days one in its fulness and completeness of light. And this the Doctors of the Hebrews considered to be so, when they represented the moon on the day of its coming into being to be a 14 days moon. For the months were fixed by reference to it, and they were to be discerned in reference to it, just as the year from the sun. For the Doctors of the Hebrews assert that the sun and moon were fashioned on the fourth day. For this reason they fix that day as the date of

the equality (= *ισημερία*) in length of day and night; declaring that the creation was in the mid firmament. And on the sixth day they say man came into being. And they make a regular computation of the number of months) and reckon twelve months to be the full tale of the year; five days more being reckoned in, which elapsed before the creation of man. It is clear then that we know the year by the sun and the months by the moon; even as the divine utterance testifies, saying: Let them be for signs and seasons and days and years. And in the same context he says: And god made the two great lights. The greater luminary to rule the day, and the lesser luminary to rule the night, and the stars. And he placed them in the firmament of heaven to give light to the earth, and to rule the day and night and separate between the light and the darkness. But about the dimensions and fixt positions, and powers and limits and order of the other stars and their natures I am prevented from speaking just now, [and shall not] until I have finished my account of the mystery of the holy Zadik and of the calendar of all peoples. And then I shall relate whatever either outsiders or church- writers have to say on these points.

Let us however return once more to the Lord's command to Moses, which says: 'This month'. By saying this he indicates the priority of its creation. 'Shall be for you a beginning of months': 'Shall be first for you among the months of the year'. He refers to the sum of full moons (lit. of fullnesses of the moon) in the cycle of its course.

Again, 'taking a lamb on the tenth day of the month'. A period of ten days includes 240 hours; by which we must understand that which is like the day, like the sun, like the dawn. For it is a type of Christ. And it is 'kept till the 14th'. He clearly commands us to wait for the full moon. For not only is the victim in itself a type of Christ, but the moon is itself as well; as was the unanimous opinion of the holy fathers, among whom is my own winner of the wreath of Christ and confessor, saint Gregory the Father of

us Armenians, who declared, that the second luminary ruling the night comes fraught with a type of the only born son of God - is shrouded, is buried, an earnest in its burial of the resurrection from the dead.

And the feast of Zadik is called by the Hebrews Phaska in their tongue, which is by interpretation the 'passover', which was from Egypt into the land of Canaan.

This also the blessed Gregory the Divine, states as follows: 'Some have thought that this name implied the passion of the Saviour, and proceeded to Hellenise the word and changed ph into p, and κ into ch, calling the Saviours day Pascha, to suit the word of Moses, who in Deuteronomy saith as follows: 'Seven days shalt thou eat unleavened bread with it, for it is the bread of tribulation.' The Doctors of the 'Hebrews assert that Moses instituted three feasts of Zadik in the desert; and afterwards when the congregation opposed him, all divine precepts and constitutions were forsaken and in abeyance, until the day on which the sons of Israel passed over the Jordan on the tenth day of the first month. Tenth, not of the month, does he call it, but of the moon, for it was the 18th of the first month which is called by the name Nisan, and tenth of the moon. This tenth on which they took the lamb involves a great mystery, and it is a type of the baptism, [that upon it was] the passing over the Jordan, and the coming of Christ into Jerusalem on the day of Palms. And Joshua kept the Zadik on the 22nd day of the first month. But he names the 14th, according to the days of the moon; and he then renewed the constitutions which in the desert were abolished, and made as it were a fresh beginning of constitutions and of laws. As also did Moses at the departure

out of Egypt. For he also calls the passing over river Jordan an exodus from Egypt. As we also have explained in our canon appointed for the occasion of the afore described festival.

In the days of Hezekiah also it is said that it was kept by some others (? in a somewhat different way). But as that was not in the first month, but in the second, and not according to the law, it was not adhered to.) For it was indiscriminate and unclean. And the feast was in abeyance until the 18th year of king Josiah, and then it was kept. And after that it was in abeyance till the days of Zorababel and the building of the temple. And after that Ezra renewed it and appointed the nineteenth of the the moon for the Hebrew race, and it was kept without break until the Saviour's crucifixion, when the full moon fell on the 14th of Nisan on the fifth day of the week after the type presented in the exodus from Egypt. For we too were saved by the precious blood, and truly went forth from lower to higher things, eating the true body of the lamb of god. And after that the holy apostles came every year to Jerusalem, and in commemoration kept the day of the Saviour's passion, and feasted the day of the resurrection. And by their divine miracles they converted many to Christ and baptised until the second year of Vespasian, when there occurred the very last destruction of the temple, and the siege, capture and laying waste of Jerusalem. And on this occasion it was commanded by the holy spirit that no one of the Christians should be there at that festival, in order to their being saved from the evils which befell Jerusalem. So they assembled outside in various places to keep the feast of

the holy Zadik.

